

17109

891.99

U - 30

7. 141 / 260

32,138
08-0

3-2

1-5 138
1-2



1004
15100

891-99
U-30

ՀԱՅԿԱՅԻՆ ԲԻՆԱԿԱՐԱՆ

I.
ՀԱՏՈՐ

ԱԶԳԱՅԻՆ, ՈՒՐՈՑ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԲԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝

ՍԻՄԻՐՆ ՍԱՅԱՐԵԱՆՅԻ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ ՀԱՆԱԾ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Լ. Ա. ՄԱՅԻՍԻԱՆ
7/XI-1922
ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Լ. Ա. ՄԱՅԻՍԻԱՆ
ՍՅԱՄԻՐՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՄՈՎՍ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.
1882

20 03

37597eeh

Дозвол. цензур. Тифлисъ, 27 Апрель 1882-г

20996-60

Типогр. М. Вартанянца и К°, Троиц. пер., д. № 11.

ԽՈՐԻՇ ՅԱՐԳԱՆՈՒ ԵՒ ԱՆԿԵՂՈՒ ՄՐՏՈՎ
ՆՈՒՒՐՈՒՄ Է

ԻՐ ՍԻՐԵԼԻ ԱՄՈՒՍՆՈՒՆ

ՎԱՌՎԱՌԷ ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՍԱՓԱՐԵԱՆՑԻՆ

ՀԵՂԻՆԱԿ

ՍԻՄԵՐՆ ՍԱՓԱՐԵԱՆՑԸ

Քեզ նուիրելու չ'ունիմ զանձ, ոսկի,
Գէթ ալս չոր երգերն ընկալ, իմ հոգի...

Հէղինալի

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Տպագրութեան տալով «էս էլ իմ սագի» առաջին հատորը—իմ անդրանիկ աշխատութիւնը՝ ես ցանկանում եմ ենթարկել այն բանասիրաց առողջ եւ անաչառ քննադատութեանը.—հէնց այդ պատճառաւ էլ ես սրա միւս հատորների տպագրութեան վճիռը հրապարակաւ յանձնում եմ կրիտիկային: Եթէ այս I հատորը ընդունելութիւն կը գտնի ընթերցող հասարակութեան մէջ, այսինքն՝ եթէ անաչառ քննադատութիւնը օգտաւէտ կը գտնի սըրան, —յայնժամ ես կը շարունակեմ քաջել միւս հատորների հոգան եւս, որ մի եւ նոյն է ասել թէ՛ յայնժամ ուրախութեամբ կ'աւեմ, որ՝ ես էլ Հայկական աղբատ զրականութեան զանձանակի մէջ մի շնչին լումայ զցեցի. իսկ եթէ անօգուտ եւ անարժան կը գտնի,—այս առաջին հատորը կը լինի իմ առաջին եւ վերջին հրատարակութիւնը: Ուրեմն սպասեմ....

ՀԵՂԻՆԱԿ:

1881 թ. Յուլի 25-ին.

Սուրբ-Խաչ Քաղաք:

ԱՊՕԼՕՆԻ ՔՆԱՐԸ ԻՄ ԶԵՌՔՈՒՄ.

ՊԵՆԻ նոր ելած Մորփէոսի
Խաղաղ գոգից (ուխ ժամին)
Պատրաստվում եմ ներկայանալ
Ապօլօնի ըսպասին

Եւ ահա նա իր քընարը
Մեկնեց դէպ՝ ինձ եւ ասաց.
«Ածի՛ր, որդեակ, դու այն երգը,
«Որը սրտով ես սիրած»:

Զեռքից առի... բայց արտասուք
Ծովի պէս ինձ խեղդեցին,
Հայի ներկայ սեւ վիճակը
Պատկերացաւ իմ աչքին.

Տաճկահայի գըրութիւնը
Որպէս մի սար—ահագին

Ծանրացաւ, ո՛հ, սրտիս վերայ,
ձընշեց, խեղդեց իմ հոգին:

Շուտ լարեցի ես քընարը
Եւ զարկեցի թեւերին.
Փըլուեց սըրտիս ճանրը սարը
Եւ որսաց խիստ ուժգին:

Նորա ձայնը գընաց հեռո՛ւ—
Նոյնպէս տըխուր՝ վըշտագին,
Անբաղտ Հայի ցաւն ու վիշտը
Յայտնեց ամբողջ աշխարհին...

«Ի՞նչ ես անում», գոռաց յանկարծ
Ապօլօնը—զայրացած,
«Ո՛հ, վա՛շ, աւա՛ղ եւ ա՛խ ու վա՛խ—
«Այդ է երգը քո սիրած...»

«Տո՛ւր քընարը. դա չէ՛ միայն
«Արտայայտիչ վըշտերի,—
«Այլ դըրանով պիտի գովուի
«Գեղը գերող—աչքերի...»

Ա՛ռ, ասացի, մե՛ծ Ապօլօն,
Եւ դարձրի յետ—իրան.
Շա՛տ եմ երգել ես իմ վարդին,
Շա՛տ եմ պաշտել եւ նըրան:

Շա՛տ եմ քաղել թարմ վարդերից
Ես Աստղըկան գըրախտին,
Շա՛տ եմ խաղել Ագօնիսի
Դէրը նըրա առաջին:

Բայց այժմ...—ո՛հ, հայր ողորմած,
Քանի պառաւ Հայաստան
Կըրում է իր ուսի վըրայ
Ձընշող լուծը ճաճկական:

Քանի Թուրքը կապած ունի
Թըշուառ Հայի ոտք ու ձեռք՝
Քո քընարը էլ իմ ձեռքում
Չէ՛ հընչելու սիրոյ երգ...

Ապշած աչքով Ապօլօնը
Երկար նայում էր անխօս.
Վերջը թողեց իր քընարը
Եւ վերացաւ ոլիմպոս:

1880 թ. Մայիսի 20-ին,

Սուրբ-Խաչ Բաղար:

ԳԻՇԵՐԸ ՎԱՆՈՒՄ.

Սի գեղեցիկ՝ պարզ գիշեր էր,
երկինքը լի աստղերով
եւ լուսինը մեղմ փայլում էր
կաթնանրման իր լուսով:

Նա նայում էր—լըռիկ—մընջիկ,
իբրեւ մի կոյս, դէպի Վան.
Նըրա աչքին երեւում էր
Բիւր ցաւալի տեսարան:

Նա տեսնում էր անթիւ Քըրդեր—
Առած սուր, թուր, հըրացան՝
Կոտորում են... կողոպտում են...
Աւերում են անտէր Վան...:

Եւ կարծես թէ երկընքիցը
Ասում էր այդ լուռ վրկան.
«Վըրայ հասիր, Հայ ազգասէր,
«Զեռքից գնաց հայաստան...»:

1880 թ. Փետր. 21 թն,

Սուրբ-Խաչ Բաղար:

ՎԱՆԵՑՈՒ «ՀԱՒԱՏԱՄՔ»-Ը.

Սը հաւատամ, որ աշխարհի վըրայ
Հայիցը քեամբաղտ հարգիլ աղգ չը կայ.
Նա թէ կուզ տանջուի տընքայ համաշայ,
Բայց քաղցած փորով պիտի հոգին տայ:

Կը հաւատամ, որ Հայ մարդու համար
Կայ երեք աստուած—մինը միւսից չար.
Հայր—աստուած՝ որ է—Տաճիկը—գաղան,
Որդին—Քուրդը, իսկ Հոգին—Եւրոպան:

Կը հաւատամ ես հօրը—գիրթ մեծին
Իննսանի էրնի այդ ծարաւ գայլին,
Որ Հայի վըզին գըրաւ իր լուծը՝
Քամեց փաղըրի օսկօւի ծուծը:

Կը հաւատամ, որ հայրը իր որդուն
Լաւ խրատեց ու խըրկեց Հայի տուն,
Որ եկաւ՝ տանջեց, լիթեց շատ էրիւն,
Զարչարեց, խաչեց, թաղեց խեղճերուն.
Ու յետոյ՝ յարեաւ՝ գընաց Պարսկաստան
Էրնի չէօլ շինեց, նըստաւ յաջանիկեան:

Գալոց է նուիրն կատաղութիւնով
Եւ իր հօր տուած նոր թիւֆէնգներով
'ի գատել (ջընջել) Հայն ու Հայաստան,
Գազանութեանըն որոյ չիք վախճան:

Կը հաւատամ եւ հոգի—աստուծուն՝
Լուսաւորեալին, եւ կատարեալին,
Մամնային խունկ ծըխողին—գերուն
Եւ Տիրաւաճառ երկրորդ Յուդային *),
Որ խօսեցաւ մեծ կօնգրեսներէ մէջ,
Պարլամենտներում արաւ տաք—տաք վէճ.
Վերջ՝ կաղմեց Բերլին դաշնագրութիւն՝
Հային էլ մէջը յիշեց խաթրիչուն.
Բայց թէ երբ պիտի խօսքերն մարմնանան—
Այդ ինքը գիտէ՝ մէկ էլ սատանան...

Կը հաւատամ, որ սուրբ էջմիածնում
Հայրն ունի մի Հոգեւոր—Գրլուխ,
Որը մի բաժակ ջուր չի սրըրսկիլ՝
Թէ երկիւնք հասնի Հայաստանի մուխ...

*) Այն քրիստոնեայն, որ աչքի առաջ ունենալով իր ինտերեսը խուլ, լուռ և անձայն է մնում իր աւազանի եղբօր անտանելի տանջանքին, իր հաւատակցու սրտաճմլիկ հառաչանքին,—նա Յուդայ է, նա կրկին անգամ վաճառում է Քրիստոսին:

Կը հաւատամ, որ Հային շատ ունի
Մեծ—մեծ մարդիկներ—օտարին գերի,
Որոնք շինում են այլոց պալատներ,
Բայց չեն կարկատում իրանց տունն-աւեր...

Կը հաւատամ, որ եթէ Հայն իւր
Գըլխին տուողին ոտքը չը լիզէր
Եւ ձեռքից չը տար հրացանն ու սուր՝
Քուրդի լըծից վաճ ազատուած կըլէր...

Իսկ որք ասեն թէ՝ կը գայ ժամանակ,
Որ թուրքը Հային կը տայ ազատ կեանք,
Կամ գազան Քուրդը կը խըղճայ նրան
Կամ թէ կը յիշէ խէղճին Եւրոպան,—
Այսպիսիքը թող լինին նըզովեալ,
Կամ Հայաստանի մէջը կուսակալ...

Իսկ մենք, որ կոյր չենք, այլ ճանաչում ենք
Մէկին եւ միւսին, պիտի խոստովանենք,
Որ Հային չըկայ հէջ փրկութիւն
.....

1881 թ. Փետր. 17-ին,

Սուրբ-Խոյս Քաղաք:

ՎԱՆԵՅՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ.

ԹԱՄԱՄ աշխարհ կը զարմանայ,
Թէ ինչո՞ւ Քուրդ մարդը Հային
Շատ կը սիրէ հազար—դափայ,
Քան թէ իրա եղբայր թուրքին...

Արմընալու ի՞նչ կայ, Աստուած...
Վո՞վ չի խաբար, որ՝ թէ Հայըն
Զըլէր—Քուրդը շատուց էլած
Կըլէր քաղցած շունի թայըն...

Հայի մալըն, Հայի փարան,
Ընդար տունը, օլան—չօլան —
Ասէք—վո՞վ է անում թալան.
Քո՞ւրդը, եօխսայ սեւ սատանան...

Վո՞վ է խըլում Հայու հացը՝
Էրնի գընով աշխատածը,
Կըտրում ընդար աջու թեւը.
Քաֆիր Քո՞ւրդը, եօխսայ գեւը...

Վո՞վ է քալում Հայու կոյսը,
Բըռնաբարում կինն ու հարսը,

Ուտում հացը—հանում աչքը.
Գազան Քո՞ւրդը, եօխսայ քաջքը...

Վո՞վ է քըշում Հայու եզը,
Կըրում—տանում ցօրնի գէղը,
Կըտրում ընդար կեանքի թելը.
Քո՞ւրդը, եօխսայ սաթայէլը...

Վո՞վ է տանում Հայու Խաչը,
Սըկիհ, բուրլառ, մասունքն, աջը,
Պըղծում ընդար Ասծու տունը.
Մուռտառ Քո՞ւրդը, եօխսայ շունը...

Դէ՛, ի՞նչ վախտ որ Քուրդը Հայի
Հացով, մալով է կենդանի,
Ել ինչի՞ հմար, աղաղատէ,
Պիտի ընդար իզուր ատէ...

Թուրքի բանը—հա՛—ուրիշ է
Նա Քուրդ մարդու աչքին փուշ է,
Էնդուր, որ նա է՛լ համարձակ
Բանացնում է ընդար փեշակ.

Էնդուր, որ նա է՛լ համաշայ
Հայի գըլխին է մէկ փաշայ.
Ի՞նչ ուղում է՛ ըստանում է—
Քուրդի փայը նա տանում է...

Ըստանց ետեւ, ջանքս գէօզում
Ել մարգիկը է՞ր կարմընան,
Ինչ վախտ տեսնեն Քուրորդ ատում
Է Թուրքին եւ սիրում ըզ Հայն...

1880 Ը. Յ—Էի 23-ին,

Սուրբ-խաչ Գաղտը:

ՏԱՃԿԱՀԱՅԻ ԱՂԱՉԱՆՔԸ ԱՌ ԵԻՐՕՊԱՅ.

Ի նշով լուսինը երկնականարից
Իր մեռելանման՝ գունատ լուսովը
Լուսաւորում է ամպերի տակից
Սեւաբաղտ Վանայ տըխրադէմ ծովը.

Ի՛նչպէս Շիրակայ փոքրիկ ձորակի
Յետքից վաստակած ճանապարհորդը
Մի կիսատ հայեացք է Կարմիր-Վանքի
Դէպ՝ կիսակործան գըցում գըմբէթը.—

Այնպէս էլ եւ դու, Եւրոպ՝ մարգասէր,
Քո մինչեւ եթեր բարձրացած գահից

Գէթ Դ լէդ հայացք գըցիր դէպ՝ անտէր,
Դէպի անպաշտպան Հայը—վըշտալից.

Այնպէս էլ եւ դու, կըրթուած Եւրոպէ,
Դարձոր կարեկից քո ուշադրութիւն—
Գոնէ Դ, Երէս, կամ Երէս րոպէ—
Դէպ՝ հիմնայատակ եղած Հայի տուն...

Նըկատիր յայնժամ այդ կարճ միջոցում
Ի՛նչ տըխուր պատկեր կ'երեւայ աչքիդ.
Մի տեղ՝ մանուկը իր օրօրոցում
Արիւնաշաղախ մորթուած է պէս ծիտ
Եւ անշնչացած բերանի միջին
Կըրում է իրա մօր կըտրած ըստինք,
Իսկ օրոցքի տակ—գաշոյնը կըրծքին
Ընկած մայրը՝ ծըռած իր շինք.

Միւս տեղ՝ առանց եղ Հայի գուլթանը
Փըշրած գըրած է, իսկ սերմնացանը—
Գընտակի վէրքը գըրօշմած սըրտին՝
Արիւնաթաւս ընկած է գետին.
Նորա դիակը անհամար, անթիւ
Պատառտում են ցին, բազէ, արծիւ
Եւ անխըղճմտաբար մեկնած կըտուղներ՝
Հանում են խեղճի լի ցաւի ալիքներ.



Մի տեղ՝ մի հրսկայ, վիթխարի ծածիկ
Հայի աղջիկը—տարօք վեց կամ հինգ—
Բըռնաբարում է. զոհին այդ փոքրիկ
եղկեղի ձայնը հասնում է երկինք.

Միւս տեղ՝ հաւաքուած տասը՝ քըսան Գուրդ՝
Սըրով, հրացանով մոնում են տաճար
եւ պատարագի սըրբաղան խորհուրդ.
Կատարող ծերուկ տէր-տէրին—անճար
Մի խարազանով կապած ձեռ ու ոտ՝
Քաշում են-բերում իր ընկերի մօտ
եւ սպառնալիքով ցոյց տալով դաշոյն՝
Ստիպում են նըրանց «Լալ լալ» շուռ...

Մի տեղ՝ սեւաբաղտ, չորցած պառսուր
Նըստած իր որդւոց դիակների մօտ՝
Լուսանում է դառն արտասուքովը
Նըրանց նըշանի շորերըն արիւնոտ.

Միւս տեղ՝ կողոպտուած Ալաշկերտցիքը
Կապած շալակը կայքն ու որդիքը՝
Փախչում են—բոբիկ, մերկ եւ անպաշտպան.
Հայրենի հողից դէպի Ռուսաստան:

Մի տեղ՝ Թուրքերը Հայի գոմերը
Քանդում են՝ տանում չուծի եզները,

Ձին, գոմշուկները, կովը, այծերը,
Եշը, ջորիքը եւ ոչխարները.

Միւս տեղ՝ տուն մըտած գաղան ծածիկը՝
Հօր, մօր առաջեւ հարսն ու աղջիկը
Բըռնաբարում է—այդ չէ՛ բաւական՝
Խըլում է խեղճի եւ յետին փարան...

Այո՛, այո՛, Ե՛ւրոպ, այո՛ տեսարանը
Պիտ՝ պատկերանար աչքիդ առաջը...
Ե՛ւրոպ, սար ու ձոր լցաւ Հայի ձայնը,
Ինչո՛ւ ես կապել դու քո ականջը:

Մարդասէ՛ր աշխարհ, Ե՛կ մեզ մեղքացիր,
Մենք է՛լ քեզ նըման քրիստոնեայ ենք,
Մեր ծանրը բեռը գէ՛թ հասկալ չարժէ՛ք,
Փըրկե՛ք անուշով քեզ աղաչում ենք:

Ի՞նչ օգուտ քեզ, ի՞նչ, որ չորս—միլիօնից
Շատ՝ Հայը ջընջուի երկրի երեսից
Եւ արիւնարբու Մօնգօլեան ցեղը
Ծակի ու մըտնի սըրտիդ մէջ տեղը:

Ի՞նչ կասես. մի՛թէ Իսլամի որդիք
Աւելի պիտ՝ տան մարդկութեան օգուտ,
Քա՛ն Հայաստանի քրիստոնեայ մարդիկ...
Ո՛հ, ի՛նչ անխիղճ ես եղած արեւ մուտ...

Հայը լաւ էր՝ երբ կեանքդ փրկելու
Համար թափում էր իր որդւոց արիւն...
Ապերախտ եւրոպ, ինչո՞ւ մոռցար դու
Քեզ արած Հայի բիւր ծառայութիւն...

1879 թ. նոյեմ. 21

Սուրբ-Խաչ Քաղաք:

ՆՈՐԻՑ ՔՆԵՆՔ—ՏԱՃԿԱՀԱՅԻ ԳԱՆԳԱՏԸ

ՀԱՅԻ սիրտը քայքայուեցաւ,
Հիմքից քանդուեց նրա տուն,
Հայաստանը աւերուեցաւ,
Կորաւ նրա փառք, աւելան:

Մօնղօլական չար լրծի տակ
Մաշուեց կեանքը խեղճ Հային.
Նա մերկ, քաղցած եւ անգըլխարկ
Մընաց՝ տանջուեց եւ հոգին...

Քրիստոնեայք նրան դատարկ՝
Լոկ յոյսերով սընուցին.

Մարեց, շիջաւ Հայի ճըրագ՝
Յոյսերը չը մարմնացին:

Երէտէւսն է Դիւրապ
Յօգուածովը խոստացան
Մաքրել մըռայլ մեր մըթնորոտ,
Բայց դարձեալ—շուտ մոռացան..

Ամեն կողմից բարձրացաւ ձայն՝
Հայաստան է՛լ աղաքանէց.
Շատ համբերեց, սպասեց Հայն՝
Հոգին ըստին աւանդէց...

Մորփէսս դու—քընի աստուած,
Բեր մեր աչքին բաղցըր քուն,
Թո՛ղ գէթ քընի մէջ մոռանանք
Մենք մեր բաղտի դառնութիւն:

Ամբողջ դարեր խաղաղ, հանգիստ—
Քընած էինք քո գոգում.
Այնտեղ գննէ մեր ցաւն ու վիշտ՝
Բոլորովին չէինք զգում:

Այն ժամանակ մեր օրոցըր
Օրում էին շատ մարդիկ
Եւ քաղցրալուր բիւր երգերով
Ասում էին մեզ «նանիկ»:

Հէ՛նց որ հասաւ ժամանակը—
Հայն ըսթափուեց իր բընից՝
Մինչեւ անգամ մեր եղբարքը
Ձեռք քաշեցին մեզանից.

Մեր օրոցքը օրողները
Դարձան Հայի թըշնամին.
Նըրանք թողած «նանիկները»
Հա՛ւր մաղեցին մեր գըլխին...

Ի՞նչպէս մեկնել այս ամենը.
Մի՛թէ զարթնելը Հային
Վճնաս կը տայ իր օրոցքը
Օրողների շահերին...

Գուցէ...: Բայց դու, թըշուա՛ռ Հայ մարդ,
Լուռ-մունջ կապիր քո աչքեր.
Փուշերի մէջ չի ծաղկիլ վարդ,
Փըշօք լի՛ են քո դաշտեր...

Քո եղբարքըդ ոչ այլ ինչ են,
Եթէ ոչ — լոկ բոցփետուր.
Նըրանք սիրում են գէշերով
Որսալ իրանց կերակուր...

Նո՛րէ՛ց չընէ՛ք, եղբարք, Հայե՛ր
Ի՞նչ մեր բանն է արթնանալն.

Թո՛ղ զարթնի նա՛, որի պաշտպանն
Է իր ինքե՛ւդն — խառնալի...

1877 թ. Մայիսի 27

Մօզդօկ.

ՎՈՎ. ՈՐ ՄԵՁ ՏԵՍԱԻ,
«ՎԱԽԿՈՏ ԵՆ» ԸՍԱԻ

ՓԱՄԵՐ շինեցինք՝ մէջը դրբինք խաջ՝
Հաղար-ու-Ն-հարէ-ր տարի պաշտեցինք.
Քուրդը ներս մըտաւ՝ մեր աչքի առաջ
Վեցըրաւ — գընաց, — ձէ՛ն չի տուեցինք.
Վա՛վ որ մեղ արեւաւ —
«Վախկնաւ էն» ըսաւ...

Հարս, քոյր, օղլուշաղ, մանչ մեծացրբինք՝
Թէ ի՛նչ զաղաքով — այդ գիտէ երկինք,
Փաշան դուրս քաշեց եւ տարաւ հարեմ —
Իլլա՛ջ չունիէնք — չը կացինք ընդդէմ:

Վա՛վ որ մեղ արեւաւ —
«Վախկնաւ էն» ըսաւ...

Վանայ պըրդաբեր չէօլերի վըրայ
Մենք քանի՜ հազար կիւթան մաշեցինք,
Սոս Լըշապա՞նք... — չէ՛, Ստոուած վըկայ,—
Տարանք մեր ձեռքով փաշին տուեցինք...

Վա՛վ որ Բեղ Կէսաւ—
«Վախիկոս էն» ըսաւ...

Վեց—հարիւր տարի մանգանայ գըցած՝
Թուրքը քամեց մեր օսկոռի ծուծը.
Պառաւ եզի պէս մենք շըլինք ծըռած՝
Սուս-փուս քաշեցինք ընդար չար լուծը.

Վա՛վ որ Բեղ Կէսաւ—
«Վախիկոս էն» ըսաւ...

—Ծ՛՛, քարստիրտ մարդ, Հայը վախկոտ է՞.
Լեզուդ քեզ պահիր—վալլահ—ամօթ է...
Հայը չը լռէ, ասա՛, ի՞նչ անէ,
Լըռելուց զայրազ էլ ամալ ունէ՞...

Հապա ի՞նչ կանէ զուլը-ըստրուկը,
Սոված գէլի ճանկ ընկած գառնուկը.
Ի՞նչ կ'անէ վանդակ ընկած ճընճղուկը,
Օրօրոցում պինդ կապած մանուկը...

Հապա ի՞նչ կ'անէ ետիր ընկածը,
Վեց—զաթ զինջիլով ամուր կապածը,
Ի՞նչ կ'անէ ձեռք ու ոտքը փըշրածը,
Լայի մէջ մինչեւ բողազ խըրուածը...

Դուք մեզի կ'ասէք՝ «բաս Սլաւոնըն՝
«Ի՞նչպէս դուրս պըրծաւ այդ լըծի տակից-
«Չէ՞ որ այդ թըշուառ աղգն էլ ձեզ նըման
«Էրուած, խորովուած, տանջուած էր Թուր-
քից...» *):

—Սլաւոնն ունէր Կէր — Կիւսիան,
Էնդո՛ւր էլ բացուեց ընդար գոռ շըղթան.
Բայց Հայըն ունի՞ Գէլի Դ լոյլ նեցաւ,
Կամ Դ Կարաւա՞ծ Լոյր գըրի՞ք ձեռին դուք.

1880 թ. Մարտի 6

Սուրբ-Խաչ Բաղար:

ՎԱՆԵՅՈՒ ԱՄԵՆՕՐԵԱՅ ԵՐԳԸ

(ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐ. 61-րդ. ՅՕԴ. ՅԵՏՈՅ).

ԹՈՒՐԿԸ Հասաւ... էլեմ էրթամ
եզնուկներըս հաւաքեմ,
Տանեմ ընդար անկուշտ աչքից
Մի խալուաթ տեղ պինդ պահեմ:

*) Սլաւոնի գլխին պահապան հրեշտակի պէս
պտտում էր Հիւսիսի անյաղթ Արծիւը. մի՞թէ
իր որսը ագռաւների չանկերից ազատելն դժուար
էր նըրա համար...
Ծ. Հ.

Տասը-քըսան ջուխտ եղներից
Մընացիրի երկու հատ.
Ընդանց էլ, հա՛յ, շուտ իմ ձեռքից
Կառնի Գուրդը-անհաւատ:

Հերու կըրակ տուեց—վառեց
Տուն ու տեղըս, դէզերըս.
Մալ ու միւլքըս բիւթիւն խըլեց,
Տարաւ կոյս աղջիկներըս.

Արսէնիս էլ (ա՛խ, պա՛լա—ջան...) 
Անօրէնը ըսպաննեց,
Հարեւանիս մենձ աղջրկան
Աչքը ճամպում նա թողեց...

Հօ-հօ-հօ, շո՛ւտ արէք, եղներ,
Հեռանք, կորչինք էս տեղէն.
Հըրէն Թուրքը... հըրէ՛ն Գըրգեր
Կըգան ուղիղ մեր վըրէն...

Զէ՛ եղնուկներ, էստեղ կայնէ՛ք,
Թո՛ղ ձեզ տանի Օսմանիւն.
Ըստանց ետեւ էլ ո՛ւմ հըմար
Պիտի վարէք դուք գետին...

Խեղճ Արսէնի՛ս... աղջիկների՛ս...
Թէ տանըս չորս պատերուն...

Ընդանք մեռան, տունըս էրուեց,
Ղազարի գայ Օսմալուն...

Հայո՛ւ Աստուած—անգո՛ւ Աստուած,
Էլ ի՛նչ վախտ տիւն պիտ' լըսես
Մեր աղօթքը, մեր ողբ ու լաց,
Մեր աղաղակ աղէկէզ...

1878 թ. Յուլի 22

Մոսկովայ

ՎԱՆԵՑԻ ՈՐԲԻ ԵՐԳԸ.

ՐԵԻ, արեւ, դուրս ելիր,
Աչքըդ, ունքըդ ինձ ցոյց տուր,—
Յըրօից ջանըս դողումս,
Զըփլաղ որբիս տաքացո՛ւր:

Հօր ու մօրըս ըսպանաւ
Գափիր Թուրքը, ո՛ւր գընամ:
Փարայ չ'ունիմ—փատ առնեմ:
Օջաղ վառեմ—տաքանամ:

Ա՛րեւ, արեւ թէ՛դ արա,
Բուք—բօրանը գալիս ա,
Էս օր ցրտից որ մեռնեմ
Էլ ալեք ընչի՞նչ ա.....

1880 թ. Յուլ. 3

Սուրբ խաչ քաղաք:

ԳԵՆԵՐԱԼ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱԻԹԵԱՆ

ԼԱՋԱՐԵԱՆՅՈՒ

ՏԱՊԱՆԱԳԻՐԸ.

Երբ մանուկ էի—շորերս պատրուած՝
Ասեղն էր տալիս ինձ ապրուստ եւ հաց
Բայց երբ կատաղի երիտասարդութեան
Արիւնը իմ մէջ ըսկըսեց եռալ՝
Փըշրեցի ասեղն—եւ նորա փոխան
Առի զինուորի հրրացան, խանչալ:
Եւ այնուհետեւ իմ հըզօր յետք
Զարգարեց պատուով իմ ուսն ու կուրծքը...
Ինձնից դողում էր պէս տերեւ աշնան
Քաջ, արծուասիրտ ամբողջ Դաղըստան...

Անցան տարիներ...—ճընշողած Հայաստան,
Ոտք դըրի Քո մէջ՝ սարսեց ծածկաստան...
Էլի մի տարի—եւ ահա տապան
Կոխեց գոռ մահը Արցախու հըսկան...
Անցորդ, ժանգոտեց սուր եւ հըրացան,
Կորաւ աշխարհից իմ փառք, իմ նըշան.
Բայց չի մոռանայ երբէք Հիւսիսը,
Թէ ինչ քաջեր է ծընել Մասիսը...

1879 թ. Օգոստ. 30

Սուրբ խաչ քաղաք:

ԱԼԱՇԿԵՐՏՅՈՒ ԳԱՂՔԱԿԱՆԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Սէկ փըշուր հաց տուէր, ախպերք,
Շաբթով սոված մանչերուս.
Սովը կապեց մըր ոտք ու ձեռք,
Ըմեն տեղից կըտրեց յուս:

Մէկ կաթիլ ջուր, ախպերք-Հայեր,
Տուէք հիւանդ աղջկաս.
Յաւը չորցուց ընդար պաշներ,
Տապից կ'մեռնի խեղճ պալաս:

Մէկ հին հալաւ տուէք մըզի—
Տըկողոր—չըփլաղ Հայերուս.
Յուրտը էկաւ, հէ՛չ չի թորկի,
Կըսպանի մըզ զըմենուս:

Մէկ հին քօշեր, գուլբայ, չաքմայ
Տուէ՛ք ծածկենք ոտերնիս.
Քար, քասագ, փուշ մընք ձըզ մատաղ,
Հանան մէքաշ հոգերնիս...*)

Մէկ գում, թուլլայ, մէկ դալդալըդ
Տուէ՛ք անտուն խեղճերուս.
Մըտիկ տուէք—չունինք մի տեղ,
Որտեղ գընենք գըլխըրնուս:

Կար էնպէս վախտ, ձըզի դուրբան,
Որ մընք էլ ձըզ պէս ուրախ՝
Ուտում, խըմում, քէֆ ինք անում,
Ունէինք տուն, տեղ, եաթաղ...

Ամբարներըս լիբը ցորէն,
Տասը-ջուխտ եզ հայաթում:

*) Էջմիածին, անգութ ճակատագիրը Քո բազմաշարքար որդւոցդ գէպի Քե՛զ է հալածել, տեսնենք ինչպէս կ'ամոքես զըրանց բաղտի դառնութիւնը...
Ծ. Հ.

Ըմեն բանից բօլ ունէինք,
Քէսագութիւն չինք քաշում:

Օրէն տասը աղքատ կը գար—
Թուրք, Ասորի, Քուրդ եւ Հայ,
Ասծու տուածից կըստանային
Ըմենըն էլ իրանց փայ:

Հիմա տեսէ՛ք—սար-չէօլ ընկած՝
Սուլած, ծարաւ կը քալենք.
Տուն, տեղ, մալ, միւլք թորկած—եկած՝
Ձըզնից շոր-շիրթ, հաց կ'ուզենք...

Մըր սիրական լաճեր, ճըժեր
Ճանալին մըռան—գընացին,
Մընացածն էլ—տեսէ՛ք—հիւանդ
Ընկած են էս նամ տափին...

Տեղ ու դարման, անպերք-Հայեր,
Արէ՛ք ցաւոտ մանչերուս.
Մընք է՛լ Հայ ենք—ձըր ախպերներ,
Ձըզնից բաշխայ չունի՛նք յուս.....

1878 թ. Փեպ. 7

Ե դ ե ս ի ա յ :

ԶԵՅԹՈՒՆՅԻ ԿՆՕՁ ՕՐՕՐԸ

ՔՈՒՆ լիր, քո՛ւն լիր, պըզտի՛ տըղայ,
Գոցի՛ր աչքըդ ատ սիրուն.
Հերըդ նամակ մի գըրերա.
Թո՛ղ ես կարդամ, քո՛ւն լիր գուն...

Վա՛յ իմ գըխուս.— սա գրածը
Անոր ձեռքի նըման չէ՛.
Ձըլլա՞ Տաճկի բանտի մեջը
Խեղճը հոգին փըչերէ.....

Ձըլլա՞ անիկա իրա գեղնած
Աչքը գոցեց յաւիտեան,
Անոր կեանքի թէլը մաշուած
Կըտրեց Տաճկի պիղծ շըղթան....

Քո՛ւն լիր, պա՛լաս, մարըդ մատաղ
Քու ատ գըլխուդ, արեւուդ.
Ալ քու կըտրիչ հարըդ զօջաղ
Ձէ՛ գառնալու Պօլսից շուտ:

Ձորս մանչիցրս գուն մընացիր—
Անոնց կերա՛ւ Տաճկի սուր.

Քո՛ւն լիր, պա՛լաս, շո՛ւտ մեծացիր,
Դո՛ւն պիտ' բերես ինձ ապուր....

Բայց չէ՛, տըղայ, պըզտի՛ տըղայ,
Դուն չէ՛ս մեծնայ ինձ համա.
Քեզ ալ—գիտե՛մ—անգու՛թ Թիւրքը
Պիտի սպաննէ անխընայ:

Ե՛կ քեզ տանեմ ես իմ ձեռքով
Սաղ-սաղ դընեմ գերեզման
Ու ինքըս ալ պառկեմ քու քով
Հողը ծածկեմ մեր վըրան.....

Աղէկն անէ՛ օր մը առաջ
Աղապ կամքով մեր մեռնինք,
Քան թէ մընանք ըստի՛ն—Տաճկի
Մոռտառ սրբով ըսպաննուինք....

Թո՛ղ սաղ աշխարհն ալ հասկընայ
Որ Հայ կինը ու պալան
Թիւրքի չ'ութը չը յալու—հո՛ւ
Մըտան սաղ-սաղ գերեզման.....

1879 թ. Փետր. 12

Սուրբ-Խաչ Բաղդա

ՎԵՐՋԻՆ ԳԱՐՈՒՆ

Սի գարուն է՛լ ահա եկաւ՝
Դաշտ ու հովիտ զարգարեց,
Քրնած բնութեան օրոցքին զարկ
Տուաւ՝ քունը խանգարեց...

Ծիծառն է՛լ թռուաւ-հասաւ՝
Իր հին քունը նորոգեց.
Նորա մէջը ձուեր դրաւ,
Ձագեր հանեց, մեծացրեց...

Մեղուներն է՛լ իրանց խըցից
Դուրս սողացին խմբերով
Եւ դէպի դաշտ հարկի յետքից
Թրուան-անցան—բըզզալով...

Սոխակն է՛լ—սիրակարօտ
Երգեց շատ լուռ գիշերներ
Եւ դատարկեց իր կըրակոտ
Սիրտը՝ վարդին առնթեր...

Միայն, Հայ մարդ, քո քրնամով
Հոգին մընաց կաշկանդուած...

Ա՛նմիտ, Վերջինն է այս գարունն
Դէ՛հ, շուտ արա, անքորդ բաց...

1878 թ. Յուլի 21

Մոսկւայ

ՍՏԵՓԱՆՆՈՍ Տ—ԵՍ. ՆԱԶԱՐԵԱՆՅԻ

ՏԱՊԱՆԱԳԻՐԸ

Ըիրիմ, բացի՛ր դու մայրական քո ծոց—
Կէնդանի Դաւալ է գալիս քեզ հիւր.
Հողածին մարդ է, բայց լուսոյ որդւոյ
Տանում է երկրից գիտութեան աղբիւր:

Թո՛ղ հանգչի Սորա սուրբ ոսկընները
Քո մըշտախաւար, լուռ, խոնաւ գըրկում:
Քանի լուսինը, արեգն, աստղերը
Պայծառ փայլում են կապոյտ երկընքում:

Քանի որ Ստեղծողն արարիչ ձեռքով
Ձէ՛ կըտրի երկրի գոյութեան թելը,—
Սորա անունը խունկ ու սաղմոսով
Անվերջ կը յիշուի՝ Հայաստանում:

Երջանիկ շիրիմ ընդունիր Դրրան,
Դա չէ լոկ դիակ հոգածին մարդուն.
Դա Իր մէջ ունի մի ճոխ շտեմարան
Հայոց աշխարհիկ գրքսկանութեան:

Դա արեւմուտքից ուսման քաղցրիկ ջուր
Բերաւ ու արբոյց Հային, իր որդուն.
Դա «Հիւսիսիցը» գիտութեան «Փայլեր»
Արձակեց նրա ամպամած հոգուն:

Դա առաջինն էր, որ յանդգնեցաւ
Գերեզման փորել գրքաբառ լեզուին.
Դրրանով ծաղկեց եւ շունչ ըստաղաւ
Կենդանի խօսքը—բարբառը Հային:

Դա ներկայացաւ Իր ազգին պէս մայր,
Որ ցաւով ծընեց աշխարհիկ լեզուն.
Դրրան չը աղգեց խօսքը—բերտ, յամառ
Իր ընտրած շաւղում (անյանգի գիտութիւն)

Դա գրեցեց Հայի թըմրած կեանքի մէջ
Մի զարմանալի յեղափոխութիւն,
Դրրանով վառուեց կրակը-անշէջ
Մայրենի լեզուի Հայ սրբոտերի մէջ.....

Հանգիստ քո ոսկերցի, կենդանի՛ մեռեալ
Հայոց երկրների փայլուն արեգակ...

Դէ՛հ, թըռիր ոլիմպ. այնտեղ Պալլադը
Քեզ ծաղիկներից հիւսում է պըսակ...

1879 թ. Օգ. 3

Սուրբ-Խաչ Բաղդա:

ՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆՅՈՒՆ.

Երբ դուք կը լըսէք, որ ամբողջ աշխարհ
Իր երկրի բերքը, արտադրութիւնքը,
Որ ամեն մարդ իր ոսկի ու ճարտար
Ձեռների ջուրը, նկարչութիւնքը,
Նուրբ հիւստածքը եւ իրա հընարած
Բիւր մաշիները—նոր հեռախօսը...
Տանում է Փրանսիայի ամեն տեղ հաշակուած
Համաշխարհական-ըքեզ հանդէսը,—
Դուք էլ, Աստուծոյ սէրին, Հայ եղբարք,
Աղայում եմ ձեզի քրնած չը մընաք.
Մըտէք Հայաստան, առէք մի աման
Կըրակ տուած ձեր արների մախրից,
Լըքցրէք լըճերից մի ուրիշ աման
Էլ ձեր մորթուած խեղճ որդւոց արիւնից.
Վերցրէք մի քանի հատ բըռնաբարուած

Եօթ-ութ տարեկան ձեր աղջիկներից
 Եւ մի քանի հատ էլ նոր նըշանուած,
 Բայց Թուրքի հարեմ մըտած մեծերից,
 Յետոյ վեր առէք աղբանոցիցը
 Աւետարանը, սաղմոս, մաշտոցը.
 Սըրանց հետ առէք եւ Քուրդի շունը՝
 Դրէ՛ք վրդին Հայի «նարգէս» խաչը.
 Հա՛. չը մոռանաք եւ սըրբութիւնը,
 Ոտնատակ ընկած մասունքն ու աջը: ... —
 Այս ամենն էլ հաւաքած՝ բարձէ՛ք
 Մի Հայաստանի սայլակի մէջը՝
 Ու—կամաց-կամաց սայլը քըշեցէ՛ք
 Դէպի Փրանսիայի աշխարհահանգէսը...
 Տարէ՛ք՝ դարսեցէք հանգիսի մէջը
 Ու ասէ՛ք. «եղբարք-Եւրոպացիներ,
 «Նայեցէ՛ք, մենք էլ Հայաստանիցը
 «Բերել ենք Թուրքի ձեռքի պըտուղներ...»:
 Այն ժամանակը քրիստոնեայ Փրանսիան
 Եւ նըրա հետն էլ ամբողջ Եւրոպան—
 Տեսնենք—Թուրքի այդ գործին աննըման
 Կը նըշանակէ՞ն մի շըքանըշան,
 Թէ՞ կ'ասեն նըրան՝ «յո՛ւ երէ-եւի
 Ե- գալիս է» գործերի քիւան՝
 Մէն+ «յոս-հետե- ծեր Հայաստանի
 Ան-նը քիւան՝ Լան և՛ Քըրդըստան...

Ո՛հ, Եւրոպայ, Եւրոպայ, նայի՛ր երկընքին.
 Այնտե՛ղ է հասել Հայի աղաղակ...
 Դու որ ճիշդ պատկերըն ես Լանդ-Թէմուրին
 Էլ քրիստոնեայի ինչո՞ւ ծածկելես դիմակ...
 Դու որ քո կօպէկն բարձրը ես դասում
 Քան թէ չորս-միլիօն խեղճ ազգը Հայուն՝
 Էլ ինչո՞ւ—ասա—ինչո՞ւ ես կըրում
 Դու «մարդասիրի», «քրիստոնէի» անուն...
 Եւրոպայ, մի՛ մոռնար, որ քեզնից վերեւ
 Կայ մի գերագոյն, անմահ Էօթիւն.
 Նա՛ է ըստեղծել լուսին, աստղ, արեւ,
 Քիչ-ձիւնդ եւ մեզ նըման խեղճերուն...
 Մի՛ մոռնար, Եւրոպայ, Նա անաչառ է,
 Նա խիստ կը դատէ քեզ եւ քո որդւոց.
 Հայի արիւնի ձայնը արդարէ՛.
 Նա Ոլիմպոսի արդէն հասաւ ծոց.....

1879 թ. 04. 25

Սուրբ-խաչ Քաղաք:

ՕՐ. ՎԱՌ. ԱՐՁԻՄԱՆԵԱՆՅԻՆ.

I.

Երանի՛ նորան, որ իր մայրենի
Դեռ չէ՛ մոռացել կենդանի լեզուն,
Որ նուրբ ու զգայուն խորքումն իր սրբախ
Դրոշմած ունի «ազգի սուրբ անուն»

Երանի՛ նորան, որ գիրքը ձեռին՝
Կըրթում է իրան ազգային լեզուով,
Որը ուխտել է լինել իր ազգին
Պիտանի անգամ՝ սրբոտով եւ հոգով:

Երանի՛ նորան, այն անգին Հային,
Որն ունի անբիծ Հայկական կըրօն,
Որը Թագդէի սուրբ եկեղեցին
Ընտրել է իրան փրկութեան կենտրոն:

Երանի՛ նորան, որի երակում
Վազում է Հայկայ անարատ արին,
Որը յաւիտեան—եւ գերեզմանում—
Ուխտել է՝ յարգել, պաշտել Հայութիւն:

1879 թ. Դէկ. 8

Սուրբ-Խաչ Բաղդա:

ՎԱՆԵՅԻ ՏԷՐ—ՏԷՐԻ ՔԱՐՈՉԸ.

Ի՛Մ սիրական խեղճ-ժողովուրդ,
Ղուրբա՛ն ըլեմ՝ ձեր արեւուն,
Ինչո՞ւ էսօր անժամանակ
Հաւաքուելէք Ասծու տուն...

Սաքի—կասէք—Թափոր անենք,
Երես քսենք քարերուն,
Ղայիմ՝ բըռնենք Ասծու փեշը՝
Բա՛լքայ խըղճայ Հայերո՞ւն...

Եդ ցընո՞րք է... Հայի Աստուծո՞ւ
Խըլացել է, սիրելիք.
Հայի համար Նա յաւիտեան
Գոցել է իր լըսելիք...

Մենք շատ արինք աղօթք, Թափոր,
Շատ աղչեցինք Աստուծուն.
Շատ Թափեցինք կոլոր-կոլոր
Արտասուք մեր աչքերուն:

Ի՞նչ խեր տեսանք, ի՞նչ շահեցանք,—
Խըղճա՞յ Աստուած Հայերին...

Դուք խօ էրեկ աչքով տեսաք,
Թէ ի՞նչ բերին մեր գլխին...

Դուք խօ տեսա՞ք՝ անգուլթ Թուրքը
Էկաւ մըտաւ սուրբ տաճար՝
Բիւթիւն քանդեց, առաւ տարաւ—
Ոսկի սրկիհ, խաչ, բուրվառ,...

Դուք խօ տեսա՞ք, որ շարական,
Սաղմոս, ճաշու գիրք, մաշտոց,
Աւետարան—գիփ սուրբ գրքեր
Նետեց (վա՛յ ինձ...) աղբանոց...

Դուք խօ տեսա՞ք, որ անօրէն
Քուրդը վերցուց Հայի խաչ,
Կապեց մուռտառ իր շան վիզը
Ու մանցրեց ձախ ու աջ...

Դուք խօ տեսա՞ք, որ մեր ցօրէն,
Գարին, տունը—գըմեն բան
Կըրակ տուեց քաֆիր Թուրքը,
Բարբա՛դ արաւ Հայաստան...

Դուք խօ տեսա՞ք, որ մեր կնանիք,
Պըզտիկ ումե՛ծ աղջիկներ
Քուրդը զօռով քաշեց տարաւ՝
Յագցուց իրա չար կըրքեր...

Դուք խօ տեսա՞ք՝ ռքքան ջահիլ
Տըղերք, աղջիկ, մարդ ու կին
Նահախ տեղը զուրբան իւան
Գաղան ճաճկի խանչալին...

Դուք խօ տեսա՞ք, թէ ի՞նչ հարկեր
Դըրին անտէր գըլխըրնուս,
Ի՞նչ խայտառակ պահանջմունքներ
Արին՝ տուինք—սուս ու փուս...

Հա՛յ ախպերներ, զուրբան ըլեմ՝ ձեզ,
Շատ, շատ բաներ մենք տեսանք,
Աստըճուն-էլ շատ աղչեցինք,
Համա մէկ շահ չըստացանք...

Մի ճար մընաց. էկէ՛ք առնենք
Խաչ, խաչվառ, ու՝ հաւաքուած
Մենձ ու պըզտիկ՝ դէպ՝ Եւրոպայ
Էրթանք չըփլաղ, ոտաբաց.

Մենք ծո՛ւնկ չողենք՝ ոտքը պազենք
Քըրիստոնեայ թագւորաց,
Ու արցունքով մեր լուանանք
Ոտքը, ձեռքը իշխանաց.

Խաչ ու խաչվառ, բուռվառը, քշոց
Թափենք ընդանց ոտքի տակ,

Ղայիմ բըռնենք փեշները
եւ ճըւճըւանք զերթ թըռչնակ:

Ասենք. «ախպերք, 'ի «էր Հայե
«Անարգո՞ւնք այս սո՞ւրբ խաչին»,
«Մեր ցաւին մէկ դարմա՛ն արէք»,
«Ազատեցէ՛ք մեր հոգին.....»

1878 թ. Մայիսի 4

Մօզզակ:

ՏԱՃԿԱՀԱՅ ՄԵԾ ՄԱՐԴԻՆ.

ՍԻՐԻՐ եղբայր, հայրենիքդ
Ամեն բանից առաւել,
Եթէ պէտք է՝ զո՛ւհ բեր անձըդ,
(Զը խընայես հոգիդ էլ...):

Առանց նորան չըկայ պարծանք,
Փառք ու պատիւ, մեծ անուն.
Զը կայ ազատ կամք, հանգիստ կեանք
'ի հարկ է՝ եւ—ազգութիւն:

Մյնտեղ է քո բռն արմատը,
Որից ծըլել ես եւ դու.

Այնտեղ փայլեց, կըրկին շիջաւ
Սղգի աստղըն-լուսատու...

Այնտեղից է քո անունը
Առնում ըսկիզբ եւ ծագումն,
Այնտեղ է քո պապիտ տունը
եւ շիրիմը եւ արիւն...

Հայրենիքդ, հայրենիքդ
Պիտի սիրես յաւիտեան,
Զի այնտեղ է զօրութիւնքդ
եւ քո ոյժը հիմնական:

Մի՛ շըլանար, ո՛վ քաջ.....,
Դու օտարի կեղծ փառքով.
Կանցնի տարի (գուցէ աճի՞ս)
եւ կը ճանապեն բեզ ծաղրով...

Թէ կուզ ճըրս՝ շինիր մատներդ,
Զո՛ւհ բեր անձըդ դու սրբտանց,—
Կը մոռանան..... «Աղ ու հացը
«Ծոնկան վըրայ է» դըրանց...

Հո՛յ ես. սիրի՛ր Հայաստանը—
Քո հայրենիք անտէրունչ,

Բուժիր խոցը նորա սրտի
Վէրքը, ցաւը եւ մըրմունջ...

Ի՞նչ կ'ասէիր, երբ մի բըժիշկ
Թողնէր հիւանդ իր մօրը
Եւ կենսատու իր դարմանը
Ածէր սյուղ որկորը

Ի՞նչ կ'ասէիր, թէ քարհատը
Իրա քանդուած տունն թողնէր՝
Անցնէր-գընար՝ օտարների
Պալատները զարդարէր...

Չէ՛, սիրելի... թէ ուղում ես
Ջարմացընես շատ աչքեր՝
Վաղիր, գոնէ՛, հասնի շաւիշի
Խեղճ վանեցու շանը քեւ...

1880 թ. Ապր. 22

Սուրբ-Կալ քաղաք.

ՎԱՆԵՅԻ ԱՂԶԻԿՆԵՐԻ ԳԱՆԳԱՏԸ.

Ինչ վախտ տասնուչորս տարեկան դառանք՝
Ըմեն հայ տըղայ մեզ սիրեց, պաշտեց.
Մենք էլ պըզտիկուց սիրով կապուեցանք
Ընդանց հետ. էսպէս կըրակը վառուեց...

Տասնուհինգ տարում, երբ որ էրիւնը
Ըսկըսեց եռ գալ դամարներուս մէջ՝
Մեր աչքից ընկաւ զըմեն բան. տուներ
Ել տե՛ղ չէր տալիս մեզ մի սըհաթ հէջ...

Մենք կամ սուտ տեղից կուժը վերցըրած՝
Ջըրի անունով երթում ինք ախպիւր,
Կամ ըմենքըս էլ մի տեղ թօփ իլած՝
Հեծնումինք մօտիկ հարեւնի կըտուր:

Մեր միտքը նա էր, որ բալքի տեսներ
Մեր սիրով վառուած հայ տըղաներուն,
Որոնց հետ վաղուց ուխտել էինք մենք
Մին մընի համար վոթել մինչ էրիւն:

Տասնուվեց տարում ըմենքիս տանը
Հարսանիքների տեսան թաղարիք.

«Դէ՛հ», փիլքրինք անուամ, փլաւ մեր բանը...»
Ուրախութիւնից թըռչումինք երկինք:

Եօթանասուն եւ եօթ թուականն էր.
Ըսպասումինք մեր նըշանածներին,—
Ռուս-Տաճկական կըռիւր հասաւ,
Հըրի պէս լափեց խեղճ կըտրիչներին...

Սաղ իրեք տարի էրիւն արցունքով
Հալուանք, մաշուեցինք մենք ընդանց ճանպին
Բայց Թուրքի սուրը ընդանց էրիւնով
Ջըրեց չորացած երկիրու գետին...

Օրեր, ամիսներ քամակ քամակից
Էկան—անցկացան շուաքի նըման.
Ծիծառն էլ էկաւ հեռու աշխարհից,
Բայց մերոնք կորա՛ն անյայտ, անգուման...

Եւ էսպէս, անպերք, Ըռուս-Տաճկական
Ձալըմ կըռիւր—ըսկիզբից մինչ վերջ—
Քարուքա՛նդ արաւ անտէր Հայաստան,
Ձը թողեց ջահիլ հէջ տըղայ մեր մէջ...

Մեր հարսնիքների կարմիր ու ալը
Մընաց բոխչի մէջ,— հագանք սեւերը.

Ուրախութեան տեղ՝ մեզ հասաւ լալը,
Սեւ սուգը պատեց մեր կոյս սըրտերը...

1880 Փէպ. 2

Սուրբ-խաչ քաղաք.

ՈՒՂՏԻ ՊՈԶ.

Թէ փողոցով անց ես կենում
Կամ լըրագիր ես կարդում,
Թէ ընկերիդ հետ ես խօսում—
Նոր լուրեր ես հարցընում:

Թէ նամակներ ես ըստանում
Կամ հիւրանոց ես հրտնում,
Գըրադարան ես յաճախում՝
Նոր-նոր գըրքեր ընթեռնում:

Թէ երազ ես տեսնում յանկարծ
Եւ սարսափած վեր-թըռնում,—
Միշտ «Հայոց-հարց» ու «Հայոց-հարց»,
Ուրիշ ո՛չինչ չես լըսում...

Տարիները անց են կենում
Մէկը միւսի քամակից,

«Հայոց-հարցը» չէ՛ վրճըռվում՝
2է՛ դուրս գալիս կապանքից...

Մի եւ նոյնը միշտ լըսելով՝
Մեր ականջը խըլացաւ,
Բայց խեղճ «հարցը» մընաց լոկ «հարց» —
Փոփոխութիւն չըստացաւ...

«Հայոց-հարցը» խուլ է մարդկանց.
Նա մըտել է իրա ճօճ.
2է՛ երկարումի չէ՛ կարճանումի
Դառել է մի «պի» պիւ...

1880 թ. Մարտի 7

Սուրբ-խաչ քաղաք.

ՏԱՃԿԱՀԱՅԻՆ Ի՞ՆՁ ԿԸ ՏԱՆ.

— Վերջապէս հերթը հասաւ մեր հարցին —
«Վաթսուն մէկերորդ» կոչուած յօդուածին.
Ասա ինձ տեսնեմ, ո՞վ հայ մեծատուն,
Հային ի՞նչ կըտան: — «Ինքնավարութիւն»:
— Կեցցե՛ս... բայց այս սուրբ գործի օգտին
դուն

Ի՞նչ պիտի զոհես: — «Ի՛նչ պի... (լըռութիւն)»:

— Եւրոպան գիտէ, որ Հայը ծոյլ չի,
Որ աշխատասէր ազգը չի՛ կորչի.
Ազգասէր, գիտեմ, լաւ կ'իմանաս դուն,
Հային ի՞նչ կը տան: — «Ինքնավարութիւն»:
— Կեցցե՛ս... բայց այս սուրբ գործի օգտին
դուն

Ի՞նչ պիտի զոհես: — «Ի՛նչ պի... (լըռութիւն)»:

— Դեսպանը յայտնած են արդէն Սուրբ-խաչին,
Որ պիտ' վրճըռուի հարցն Հայաստանին.
Հայ ինտէլիգենտ, ի՞նչպէս ես կարծում,
Հային ի՞նչ կըտան: — «Ինքնավարութիւն»:
— Կեցցե՛ս... բայց այս սուրբ գործի օգտին
դուն

Ի՞նչ պիտի զոհես: — «Ի՛նչ պի... (լըռութիւն)»:

Արդէն խընդրած է Հայր-Ներսէսըն *) ալ,
Որ Նուբար-Փաշին ընտրեն կուսակալ.
Հայր-սուրբ, ինձ ասա՛, մատաղ քո հոգուն,
Հային ի՞նչ կըտան: — «Ինքնավարութիւն»:
— Կեցցե՛ս... բայց այս սուրբ գործի օգտին
դուն

Ի՞նչ պիտի զոհես: — «Ի՛նչ պի... (լըռութիւն)»:

*) Ներսէս պատրիարկ Կ. Պօլսոյ:

—Մեծ-Մարգը «Մշակին» նամակ գրել է՝
Թէ պատրաստ կացէք—Ժամը հասել է.
Խըմբագիր՝ արա՛ մի գուշակութիւն,
Հային ի՞նչ կըտան:—Ինքնավարութիւն»:
Կեցցե՛ս...բայց այս սուրբ գործի օգտին դուն
Ի՞նչ պիտի զոհես:—Ի՞նչ պի... (լռութիւն)»:

Հայ մարդ, ո՛ր է քո պերճախօս լեզուդ,
Հը՛. «զոհել» բառը դի՛ւր չ'եկաւ հոգուդ.
Թըշուա՛ռ. ուրեմըն ի՞նչ ես կամենում, —
Որ հացը ծամեն՝ դընեն քո բերնո՛ւմ:....

Բայց գիտե՛ս ի՞նչ է ասում առածը՝
Մեր մեծ-պապերից մեզ աւանդածը՝
«Լոկ խօսքով երբեք չի՛ եփուիլ ֆըլաւ,
«Այլ հարկաւոր է եղ՛ Բըրի՛ն» եւ հաւ»:

Լա՛ւ բան է, այո՛, ինքնավարութիւն,
Բայց պահանջում է զոհաբերութիւն, —
Իսկ մեր մէջ ո՞ր մեծ, ո՞ր իշխան, գիտուն
Կատարեց իր այդ պարտաւորութիւն.

Ո՞ր գումարատէր գըցեց իր լուման
Յօգուտ հայրենեաց վերանորոգման,
Ո՞ր եպիսկոպոս կամ ո՞ր վեհափառ
Նուէր ժողովեց սուրբ գործիս համար.

Ո՞ր երիտասարդ կամ ո՞ր տղապէր
Յօգուտ «Հայ-հարցին» կարդաց հըրաւէր,
Ո՞ր քաղաքի կամ ո՞ր գիւղի աւեր-աւեր
Այս մասին ժամում ասաց քարոզներ...

Ահա՛ հասել է մեր կէսն՝ կամ օրհաս,
Ինչո՞ւ չե՛նք գործում...: Մեզ ի՞նչ է պակաս,
Որ անշարժ նըստած—պէս քարէ արձան՝
Խեղճ-խեղճ նայում ենք դէպի Եւրոպան...

Ի՞նչ է մեզ պակաս, որ մեր պարտքը-հին
Փաթաթել ենք խեղճ Եւրոպի վըզին.
Մարդի՛կ, գործողներ, կապիտալիստներ,
Թէ՛ հազարներով լիքը սընդուկներ...
Եւ ի՞նչ էք կարծում. մի՞թէ Եւրոպան
Պարտակա՞ն է մեր անտարբերութեան
Եւ տըգիտութեան համար տալ հաշիւ:
(Ամօ՛թ մեզ, ամօ՛թ, ամօ՛թ-բիւր, անձիւ...)

Հայ մարդ, ձեռքերդ ծալի՛ր-դի՛ր ծոցդ,
Մի օր կը կարդայ՝ Թուրքը «հոգւոցդ»,
Եւ դու փոխանակ «ինքնավարութեան»
Վե՛րջը կը տեսնես—Հայի՛ն ի՛նչ կոպան...

1881 թ. Մեյ. 24

Սուրբ-խաչ քաղաք

Տ Ե Ս Ի Լ .

Այնտեղ սոխակը դեռ ծէգ չը բացուած՝
Սուլում էր իրա բընատուր սըրինգ.
Նըրա դիւթական ձայնիցը արբուած՝
Նիրհում էր Պանը—ծըռած իր շըլինք:

Այնտեղ Եփրատը Եգեմն ջըրելով՝
Լայն տարածվում էր որպէս հայելի,
Ամբողջ երկինքը իր շըքեղ տեսքով
Գեղ-նըկարվում էր մէջ նըրա ջըրի,
Եւ արշալուսի վարդապոյն շողը
Խաղում էր հանդարդ այդ ջըրի վըրայ.
Նա գեղեցիկ էր որպէս ժըպիտը
Մի սիրահարուած անմեղ աղջրկայ:

Այնտեղ երկընքից անթիւ հրեշտակներ
Իջնում-շարվումէին Եփրատի ափով
Եւ այն լուսափայլ երեսն ու ձեռներ
Լուանումէին նըրաջինջ ջըրով:
Իսկ Նայադքն իրանց փըրփըրանման
Հասունակ-կըրծքերն այդ ջըրից հանած՝
Բոլորումէին գեղեցիկ շըրջան
Հիւրերի առաջ՝ ձեռք ձեռքի տուած:

Այնտեղ ծաղիկներ—գոյն-գոյն, այլազան
Մեղմ բուրում էին իրանց հոտն անուշ,
Անդ անմահների քընարների ձայն
Հընչում էր—քաղցըր, փափուկ եւ քընքուշ,
Եւ բընութիւնը պերճ գեղեցկութեամբ
Վառվում էր փայլում որպէս մի յակինթ
Եւ անբընական մի կենդանութեամբ
Թըռ-թըռում էր պէս սիրուած կուսի սիրտ:

Իսկ ես կաշկանդուած այդ գերբընական
Երեւոյթի ճոխ—գեղեցկութիւնով՝
Կանգնած էի պէս մի անշարժ արձան
Եւ նայում էի անյագ աչքերով...
Բայց, աւանդ, յանկարծ այդ պերճտեսարան
Մի չոր անապատ դարձաւ իմ աչքիս—
Յետ դարձայ՝ տեսի—իր ցաւոտ սըրտից
Թանձըր, սեւ մուխ էր հանում:

1878 թ. յուլի 13

Մոսկովայ

ԼԱՒ Է ՈՒՇԸ՝ ԳԱՆ ԹԷ ԵՐԲԷՔ:

(„ԼԱՒ Է ԵՐԲԷՔ, ԳԱՆ ԱՆԱԳԱՆ,—
ՊԱՏԱՍԽԱՆԸ (*)

ՀԱՅՐ կոյր էր—չ'ունէր զըպրոց՝
Սեւերես էր մօտ իր որդւոց,
Այժըմ՝ ամեն գիւղում կայ մէկ,—
Լաւ է ուշը՝ քան թէ երբէք:

Քաղցած մեռնում էր խեղճ Շուշան
Այդ իմացաւ մի ծեր իշխան,
Հանեց՝ տուաւ քրտան կօպէկ,—
Լաւ է ուշը՝ քան թէ երբէք:

Վաղ չ'ունէինք մի գասագիր,
Սաղմոսն էինք անում անգիր,
Այժըմ՝ զըպրոց մըտէ՛ք՝ տէսէք...
Լաւ է ուշը՝ քան թէ երբէք:

Մեծ ամօթ էր հայ աղջկան՝
Խաղալ մի խաղ թատրոնական.

(* Գամառ. Գաթիպայի լանաստեղծութիւններից
տպագրուած „Փորձ“ ամսագրի մէջ:

Հըրաչեայ-Նէ՛շ այսօր ունենք...

Լաւ է ուշը՝ քան թէ երբէք:

1880 թ. նոյնի. 17

Սուրբ-խաչ քաղաք.

ԾԵՐՈՒԿ ՎԱՆԵՑԻ.

«Պէմքըս գունաթափ, աչքերըս դեղնած,
Սիրտըս միշտ տըխուր, հոգիս խռովուած.
Ձեռքըս դողդոջուն, միտքըս մոլորուած,
Յաւեր բիւր տեսակ սըրտիս մէջ դարսուած.»

«Դոպպէքըս տարիք, օրերըս խաւար,
Սեւ ամպով պատած իմ երկնակամար.
Կեանքըս միակերպ դառըն ինձ համար,
Մարմինըս մաշուած՝ ցաւօտ եւ նիհար.»

«Շունչըս ըսպառուած եւ անբնական,
Կուրծքըս աւերակ՝ թոյլ՝ կիսակենդան.
Մահիճըս սառը—որպէս գերեզման,
Լոկ ոսկըրնե՛րըս մընում են միայն...»

«Ոչ բարեկամաց սիրալից խօսքեր,
Ոչ Զատիկի պէս մեծ՝ սըրտաշարժ տօներ.

Ոչ երեկոյթներ՝ շրքեզ խընճոյքներ՝
Ոչ հարսանեաց-տուն՝ կաքա-հանդէսներ։»

«Ոչ գեղածիծաղ գարնան առաւօտ,
Ոչ գարնան երգչի երգը քաղցրայօդ-
Ոչ մարգագետնի ծաղկունքն ամպարհոտ,
Ոչ Սիրուն կուսի աչերըն կրակոտ։»

«Ոչ ամարային լուսին կայ գիշեր,
Ոչ երկընքի մէջ փայլող բիւր աստղեր-
Ոչ սաղարթախիտ՝ գեղ բուրաստաններ,
Ոչ շրքեզաշուք բիւր ճեմելիքներ։»

«Միով բանիւ, ոչ այստեղ—աշխարհում,
Եւ ոչ էլ բարձրը—նոյն իսկ երկընքում
Ոչէնչէ՛ կարող իմ քանդուած սրբտում
Բացուած վերքերիս տալ բըժըշկութիւն։»

«Ոչէնչէ՛ կարող աւերակ՝ տըրտում
Այդ ուղիքանոսի խորխորատներում
Թըլացընել մի ուրախութեան բոյս,
Գըցել արեւի մի թոյլ՝ աղօտ լոյս...»

«Վայ ինձ. թէ դէմքըս շրջում եմ դէպ՝ աջ՝-
Որդո՛ւս են մորթում իմ աչքի առաջ,
Թէ «հարայ» տալով-նայում եմ դէպ՝ ձախ՝—
Հայրս ու աղջրկան են քաշում անւախ։»

«Եթէ սարսափած դառնում եմ քամակ՝—
Տունըս լափում է թըշնամու կրրակ,
Թէ ձայն եմ հանում—իջնում է գրլխիս
Թուրքի կըռուփը։ ափտակը—դէմքիս։»

«Եթէ գընում եմ ես եկեղեցին՝—
Սուրբ Խաչն եմ տեսնում Քրդի շան վըզին,
Թէ դուրս եմ գալիս՝ սրբտով վըշտացած՝—
Աւետարա՛նն է աղբանոց գըցած։»

«Եթէ դիմում եմ—դողալով դէպ՝ դաշտ՝—
Պատրաստ գանգնած է թըշնամին անհաշտ,
Թէ գետինների նայում եմ վրբան—
Փըշրած-գըրած է խեղճ Հայի գութան։»

»Թէ պահանջում եմ արդար դատաստան՝—
Ձայնըս խեղդում է անիրաւ փաշան,
Եթէ լըռում եմ—վայ թըշուառ գրլխիս—
Հոգիս եկել է-հասել կոկորդիս...»

«Ո՛ր մէկն ասեմ՝, ո՛ր... Բ՛լ Հայր երկնաւոր,
Ինչո՛վ էր արդեօք Հայը յանցաւոր,
Որ այսպէս անխնայ գըցեցիր նորան
Այս արիւնարբու գայլերի բերան։»

«Մի՛թէ խեղճ Հայի պաշտելըն խաչին
Յանցա՛նք համարուեց գահիդ առաջին,

Թէ՞ նորա լացի ձայնը ցաւագին
Բերկրանք է բերում Անմահիդ սրբոյն։»

«Այն ազգը, որ շատ տասնեակ դարերով
Պաշտել է ահեղ Անունդ երկիւղով,
Որի բիւրաւոր սուրբ տաճարներում
Մատուցուած է Քեզ խունիկ, կնդրուկ եւ մոմ։»

«Ազգ՝ որ առաջին եղեւ ընդունող
Քրիստոնէական վարդապետութեան,
Որի կենսատու՝ անաղօտ լուսով
Վերըստին ծընուեց պառաւ Հայաստան։»

«Ազգ՝ որ աւել քան չորս հազար տարի
Անջինջ պաշել է սերունդ եւ անուն,
Մի՛թէ անխընայ պիտի աշխարհի
Երեսից ջրնջուի, հալուի որպէս ձիւն...»

«Ո՛ր ես, ո՛վ Աստուած թըշուառ Հայերի,
Աստուած Գրիգորի, մեր սուրբ հայրերի,
Զարթիր, օգնական լեր նեղեալներին,
Յուսահատ, անտէր մընացած ազգին.....»:

1880 թ. Մարտի. 3

Սուրբ-Խաչ Գաղաթ:

ԲԱՆՏԻ ԲԱՆԱԼԻՆ.

Ամբողջ հինգ դար էր, որ մայր Հայաստան
Գրցած ոտքերին երկաթէ շղթան,
Քուրդի գարշահոտ բանտի մէջ փակուած
Ալապիւն-Բիւն էր գոչում—վըշտացած.

Բայց նորա ձայնը իրա խոր բանտի
Ամուր պատերից դուրս չէ՛ր թափանցում:
Այդ կիսակենդան պառաւ հիւանդի
Եղկելի ձայնը ո՛չ ոք չէր լսում...

Յանկարծ հընչեցաւ ցանկալի ժամը,
Պիտի խորտակուէր խեղճի կապանը,
Միմիայն այն էր անչափ ցաւալին,
Որ կորուսուիլ էր բանտի բանալին...

Այդ լրսեց Հայը, մընաց մոլորուած,
Ընկաւ սար ու ձոր—յոգնած՝ վաստակած՝
Բայց աշխատանքը անցկացաւ ՚ի զուր—
Բանալու մասին չըստացաւ մի լուր...

Նա յուսահատուած՝ դրրաւ ձեռ՝ ծոցին,
Աչքը եւ յոյսը գըցեց Երոպին,
Որից մինչ այսօր մի վըճռական
Զըստացաւ ո՛չ խօսք եւ ո՛չ պատասխան...

—Հայ. Թէ ազատել ես ուզում քո մօր,
Ինչո՞ւ ես ընկել 'ի զուր սար ու ձոր.
Գիտե՞ս որտեղ է բանտի բանալին.
Մօտիկ, շատ մօտիկ—Գլխաւոր Քրեմ:

1881 թ. նոյեմբ. 7

Սուրբ խաչ քաղաք:

ՇՈՒՆԸ ՀԱՁԵԼՈՎ ՄԻՇՏ

ԿԸ ՍԱՏԱԿԻ

Եթէ ասում ես քեզանից փոքրին
Միշտ խելօք եղիր, որ մարդկանց դիւր գաս:—
Տեսար համարձակ նա քո երեսին
Կանգնում է խօսում (մի ա՛յդ էր պակաս):
Ես կատաղում եմ: բայց 'ի զուր. քանզի
Շո՛ւնը հալելով միշտ էլ սափալի:

* *

Երբ իմ քրոջը ասում եմ՝ ա՛ղջիկ,
Քիչ չափը քիչ այդ անտէր փողոցը,
Ձի վատ են խօսում քեզ վրայ մարդիկ,—
Պատասխանում է. «Ես այդ մարդոցը
«Գլուխը հոգեմ: Թող խօսեն, հոգ չի»
«Շո՛ւնը հալելով միշտ էլ սափալի:

Մի տարի, երբ Հայ-ինտելիգենցիան
Ամուր բռնել էր մեր Կէր-հարց պօչից.
Այսպէս էր խօսում աւագ-քահանան
Մեր եկեղեցւոյ. «յիմարը գուրս չափից
«Բաներ կը գրեն. բայց գիտե՞ս, հոգի,
«Շո՛ւնը հալելով միշտ էլ սափալի»:

* *

Երբ պատահելով սրբազանի հետ՝
Ասում ես—հայրիկ, ճշմարիտ է, որ
Կ'ասեն, իբր Թէ, հինգ-հարիւր մանէթ
Առած՝ Մարկոսին թոյլ էք տուել, որ
Ամուսնանայ իր բիձու աղջկայ հետ,—
Պատասխանում է. «է՛հ, որդի, տրգէտ
«Մարդիկ կը խօսեն—այդ մի նոր բան չի—
«Շո՛ւնը հալելով միշտ էլ սափալի»:

* *

Նոր ամուսնացած երիտասարդը
Մի օր ասում էր իրա ամուսնուն.
«Աղջի՛, քաղաքիս հայ-ժողովուրդը
«Խայտառակել է իմ եւ քո անուն.
«Ասում են՝ երբ ես տանը չեմ լինում՝
«Դու ջէհիլ հիւրեր շատ ես ընդունում»:
—Թըշնամու խօսք է, այ ողորմելի,
«Շո՛ւնը հալելով միշտ էլ սափալի»:

«Հայրի՛կ», ասում էր որդին իր հօրը,
«Ճըշմարիտ է, որ մեր հարեւանը
«Ասում է՝ թէ մենք փախչիլի փողով
«Ենք հարստացել եւ սնանկանալով...»
— Այլաթ է անում սո՛ւտ է, իմ որդի,
Եւ ինչ հաշիւով մէջս իմ «սպասի»:

* *

Ահա մի տըգէտ, տըխմար տիրացու,
Որը չը գիտէ գէթ «խոնարհեցո՛»
Առած հինգ-հարիւր Նիկոլայ մանէթ՝
Դիմում է՝ փրսփսում թեմակալի հետ.
Եւ ի՛նչ, ո՛վ Աստուած, երկու ամսից յետ—
Տեսար քահանայ օրհնուած՝ դարձաւ յետ...
Խեղճ ժողովուրդը սկսում է տըրտընջալ
Քահանայի դէմ. բայց մեր բռնակալ
Սուլթան առաջնորդը նորա գանգաւոր
Կամայ գընում է խալիչի տակը՝
Ասելով. «որքան կ'ուզէ՝ գանգաւորի՝
«Եւ ինչ հաշիւով մէջս իմ «սպասի»:

* *

Շատ ժամանակ չէ՛, որ մեզնից շատերն,
Կամիս թէ կուզ հէնց խըմբագիրներըն,
Սուրբ Աթոռի հետ մեծ բաճակըն
Էին բացել, զի նա երբէք հաշիւ
Չէ՛ ուզում ցոյց տալ (է՛ր կ'ուզի) ազգին.

Բայց ի՛նչ պատասխան խեղճերըն ստացին
Բաց ՚ի սորանից. «գողացէ՛ք, հոգի չի,
« »:

* *

Անցեալ տարի՝ երբ Ռուս-Տաճկական
Ահեղ պատերազմն տեղի ունեցաւ,
Մերոնք կարծեցին, թէ Մօնթօլական
Բռնակալ լրծից Հայն ազատուեցաւ.
Բայց ո՛ր տեղ. անգութ, անխիղճ Եւրոպան
Չը յիշեց անգամ թըշուառ Հայաստան.
Նա աչքով տեսաւ, որ Տաճկի սուրը
Քրիստոնեայ Հային որպէս մի գառը
Մորթումէ. տեսաւ Հայի կոյսերը
Բռնաբարվում են, խաչը, խաչվառը,
Եկեղեցիքը—սրբապըղծվում են,—
Լըռութեան տուեց սառնասրբոտութեամբ...
Եւրոպան, այո՛, մի հազար անգամ
Լըսեց տարաբաղո Հայի սրգի ձայնն,
Նորա բողոքը, կոծը «այն ու վայն»
Եւ ասաց. «այնքան գողայ, որ ճաքի,
Հայը լալով մէջս հոգին իմ «սպասի»:

* *

Հեռու ինչո՛ւ գնանք. մարդասէր Անգլիան
Հային խոստացաւ տալ ազատութիւն.
Բայց երբ խօսք բացուեց Հայոց հարցի վրան՝

Տե՛ս Մամոնայի այդ երկըրպագուն
 Ի՛նչ ասաց. «կացէ՛ք, պարոններ, դեռ ես
 «Տեսնեմ՝ այդ բանում ունե՛մ ինտերես...
 «Ես պարզն ասեմ ձեզ. եթէ իմանամ,
 «Որ Հայի կորստից օգուտ կ'ունենամ՝
 «Ամենից առաջ ինքըս աքացին
 «Կը տամ քրիստոնեայ Հայի ճակատին.
 «Յետոյ՝ ո՛վ որ ինչ կամի, թող խօսի,
 «Ես—նը հալելով իշխ կը սափախի»:

* *

Ի՛հ, բարեկամներ, այսպէս է աշխար.
 Հե՛շտ բան չէ մարդու գէշ, թիւր գործերը
 Երեսին խրփել. պատահեց տեսար՝
 Լըռի՛ր ու կապի՛ր դու քո աչքերը:
 Հակառակ դէպքում—հաւատի՛ր խօսքիս—,
 Եթէ քեզ նկատեն մի բան ասելիս՝
 Կանեն՝ թող խօսի-խօսի՝ տըրաքի՛,
 «Ես—նը հալելով իշխ կը սափախի»:

* *

Այդ լաւ կանոն է, ես ընդունում եմ.
 Բայց գի՛տէ՛ք ինչո՛ւ. օրինակ, եթէ
 Կը գըտնուի մի մարդ (հազարը գիտեմ),
 Որ գըրածներին համար վատ խօսէ,—

Ես էլ կ'ասեմ՝ թող խօսում է՝ խօսի՛,
 «Ես—նը հալելով իշխ կը սափախի»:

1878 թ. Մայիսի 17

Մօզդօկ,

ԵՐԵՒԱՅ Է

(ԿԵԱՆՔԻՑ ՎԵՐ ԱՌԱԾ).

ՆՈՐ նըշանուած երիտասարդն
 Ասում էր իր զոքանչին.
 «Մայրի՛կ, պէտք է շո՛ւտ պըսակուած,
 «Արդէն հասել է Ոսկին»:

—Ձէ՛, իմ որդի, ասաց մայրը,
 Պէտք է փոքր ինչ ըսպասել.
 Դեռ աղջիկըս Երեխայ է,
 Տարիքը չէ՛ լըրացել:

Անցաւ ամիս: Կըրկին տըղան
 Դիմեց պառաւ Շուշանին.
 «Հիմա տեսնել, մայր, կարո՞ղ եմ
 «Պատրաստութիւն պըսակին»:

— Զէ՛, սիրելի՛, հալա վաղ է,
է՛լի պէտք է ըստասած.
Խեղճ աղջիկըս երէխայ է,
Տարիքը չէ՛ լըրացած:

Ամիս ամսի յետեւիցը
Արագ-արագ սահում էր.
Ամեն մէկը Ոսկու սըրտում
Մի այլ կըրակ վառում էր...

Եկաւ տըղան: «Մայրի՛կ, հիմա
«Ի՞նչ ես ասում: հասել ամ...»
— Զէ՛, չէ՛, որդի, ինձ հաւատա՛,
Երէխայ է երէխայ:

Հանապաղ նոյն պատասխանը
Ըստանալով խեղճ տըղան՝
Անիծում էր, ինչո՞ւ ուզեց
Անչափահաս աղջըկան:

Անցաւ է՛լի երեք ամիս:
Մանկահասակ մեր Ոսկին
Նրստած մօր մօտ՝ ծիծ էր տալիս
Մի շարթական մանուկին...*)

*) Երեւի պառաւ Շուշանը Ոսկու արգանդի ման-
կան համար է պնդել. թէ երէխայ է, բայց փեսան
այդ չէ հասկացել...

Մըտաւ տըղան, որ ըստանայ
Պըսակվելու հըրաման.
Նորան սաստիկ զարմացըրեց
Այս ցաւալի տեսարան...

«Այս ի՞նչ բանէ», ասաց՝ մատով
Յոյց տալով մանկան վըրան...
— Երէխայ է, երէխայ է,
Ո՛չինչ չըկայ, Ո՛րդի ջան...

1877 թ. Օգոստոսի 5

Մօզդօկ.

ԷՇԻ ԳԼՈՒԽԸ ԵՒ ՄԱՐՄԻՆԸ.

Սօզակները օփիցերը ասում էր իր կօղակին.
«Ափսո՛ս այդ ձի, որ տանում է քեզ պէս
խելքից թեթեւին»:
— Այո՛, տէ՛ր իմ: այդ կօղմանէ շա՛տ ափ-
սոս է եւ քո ձին:
Օփիցերը խիստ կատաղած՝ գոռաց—բարձըր
եւ ուժգին.

«իշէ՛ Գըլու-ի, հրամայում եմ, շուտ հեռա-
ցի՛ր իմ աչքից»:
— Ներքի՛ր, տէ՛ր իմ, ես չե՛մ կարող բաժա-
նուիլ ի՞մ հարմարեց:

1876 թ. Յուլի 6

Աստուծոյ ընդմիջմամբ.

ՄԻԱՅՆ ՅԱՒԱԼԻՆ ԱՅՆ Է,
ՊԱՐՈՆՆԵՐ...

Եթէ լինէի մի տեղ նախագահ,
ես ինքս ինձ վերայ այնքան եմ վրտաճ *),
որ կ'կատարէի շատ մեծ-մեծ գործեր, —
Միայն ցաւալին ա՛յն է, պարտնէր...

* *

Եթէ մի հարցում ունենայի ձայն —
Մի քանի մարդ էլ հետըս համաձայն՝
ես չա՛յլ կըտայի անթիւ կայծակներ, —
Միայն ցաւալին ա՛յն է, պարտնէր...

* *

*) Մենք էլ պակաս վստահ չենք քեզ վերայ,
բայց, ի՛նչ անենք. Ժողով ալ չէ բարեկարգ:

Տ. Հ.

Եթէ մի գործում լինէի քրննիչ
(Ա՛խ. կաշառքն է ինձ թուլացընում քիչ),
ես կը պարզէի որքա՛ն մոլթ կէտեր, —
Միայն ցաւալին ա՛յն է, պարտնէր...

* *

Եթէ որ հիմնուէր մի ընկերութիւն
եւ ինքս էլ կըրէի «հիմնադիր» անուն,
ես շահ կը տայի հարիւր-հազարներ, —
Միայն ցաւալին ա՛յն է, պարտնէր...

* *

Եթէ ըսկըսուէր մի գործ-Աստուածհաճ,
Մէյդան կը գայի ամենից առաջ՝
Կըտանէի ձեռքս դէպի իմ ճիւղեր, —
Միայն ցաւալին ա՛յն է, պարտնէր...

1879 թ. Յուլի 15

Առիւթ-խաչ քաղաք.

ԱՒԱԶԱԿԻ ՎԱՅՐԱՀԱԶՈՒԹԻՆԸ (?).

Աստիկանը հարցանում էր մի օր աքսոր
գնացողից.
«Քո կարծիքով՝ ո՞վ է կարող փրկել քեզ այդ
պատըժից»:

—Ո՛չ որ, տէր իմ, ասաց մարդը, միայն
 «Այդ ես գիտեմ. բայց մի կարէ չընորհել
 քեզ այդ բանը»:
 —Իմ կարծիքով՝ ժամանակը, գուցէ եւ գիշ-
 րեղմանը:
 «Լակոտ, դու ինձ երեւում ես յիմար ինչ-
 պէս քո հայրը»:
 —Ճըշմարիտ է, որովորման հայր, այդպէս
 * Կ'ասեն շատերը:
 «Թէ դու գող եւ աւազակ ես՝ ցոյց են տամ
 քո աչքերը»:
 —Ո՛չ, տէր. գուցէ նրբանց մէջ գուրբ տե-
 սել էք յէջ պարկէլը:

1873 թ. Մայիսի 7

Ղուբայ.

ՅԱՅՏՆԻ՝ ԲԱՆ Է, ՈՐ ԱՅԴ ՆԵՐԵԼԻ Է.

Գրնում եմ փողոց ('ի հարկէ՛ գործի).
 Այնտեղ մի պարոն — առած իր հասակ —
 Այն բաղմութեան մէջ իրա ծառայի
 երեսին զարկեց մի թեթեւ տպտակ.
 Պարոններ, մի՛ թէ այդ կարելի է.

'ի հարկէ՛, այդ լոկ յիմարութիւն է:
 Բայց անցեալ օրը աղա Վարդանը
 Կո՛ւշտ ծեծեց մէկին իր ներքնատանը.
 Ուղի՛ղ է, թէպէտ նա ծեծեց խիստ լաւ,
 Բայց սոյնպէս ծածուկ — ո՛չ որ չըտեսաւ.
 Ա՛յ քեզ կըրթուած մարդ. հիանալի՛ է.
 Յայտնի՛ բան է, որ այդ ներքէն է:

*
 *

Մի օր փողոցում մէկի հետ կանգնած
 Խօսելիս՝ յանկարծ փայտըս ընկաւ ցած.
 Մէկ էլ ի՛նչ տեսնեմ — մէկ տրդայ — լեթուած
 Վեր առաւ փայտըս ու փախաւ գրնաց.
 Ի՞նչ կասէք, եղբարք. սա էլ օրէ՛նք է.
 'ի հարկէ՛, որ այդ յիմարութիւն է:
 Բայց մի օր Զատիկին, երբ եկեղեցում
 Ժողովուած էր մեծ մարդկանց բաղմութիւն,
 Մէկը իր ձեռքը կոխեց իմ գրքաւան
 եւ կամայ հանեց մի քանի թուման.
 Բայց ի՛նչպէս հանեց — զարմանալի է.
 Յայտնի՛ բան է, որ այդ ն' ընէն է:

*
 *

Արտեմ - աղայի գործակատարը
 Մի օր (սրբոտի մէջ ընկնում է չարը)
 Մըտնում է ծածուկ աղի կաքինէտ՝
 եւ գուրս է տանում մի քանի մանէթ.

Հէնց Աստուած սիրէք, այս մարդու թի՞ն է.
 Ի հա՛րկէ, որ շատ յիմարութիւն է:
 Բայց աղան ինքը ուղիղ տաս տարի
 Մօսկօյից նիսիսյ բերում էր բարի,
 Ծախում: ու յետոյ՝ հին պարտքը տանում
 եւ կրկին նորը վերառնում՝ բերում:
 Մի օր էլ գընաղ-բերաւ (զարմաղանք)
 Հի՛նգ-հարիւր-հազար մանէթի ապրանք,
 Ու՛ կամաց խանութ, տուն, ... նօտարիո: սով
 Շինեց իր քընքուշ կընոջ անունով,
 եւ երբ ամեն քան լաւ կարգի դրեց՝ —
 Նա իրան բանկրո: տ հըրատարակեց.
 Սա խօ՛ւ ամօթ բան չէ՛, առօ: տո: ր է.
 Յայտնի՛ բան է, որ այդ ն էլ է:

* *

Եգեսեայ գիւղում խեղճ տասար ֆօտին՝
 Բժշկելու մըտքով հի անդի մէկին՝
 Բըռնում է թողնում երակի արի:ն.
 Թըշուառ հիւանդը ընկնո՛ւմ է-մեռնո՛ւմ:
 Ախար, սյ մարդ, այս անե:ո: բան է.
 Ի հա՛րկէ, որ շատ յիմարութիւն է:
 Բայց երբ իմ քըրօջ բուկը դա:ում էր
 եւ շունչ քաշելու գրժուարանում էր,
 Մեր քաղաքական հըմուտ Կօրտօրը
 Բռնեց-խոր ծակեց նորա սրկորը,

Որպէս զի այդ. նոր բաղուածքով նա էլ
 Կարողանար մէկ ազատ շունչ քաշել.
 Բայց այդ նոր ծակով շնչի հետ միասին—
 Դուրս եկաւ փախաւ եւ խեղճի հոգին...
 Դրա՛ւթը ջընջել անկարելի է.
 Յայտնի՛ բան է, որ այդ ն էլ է:

* *

Քաղաքական պարտիզում այն օր
 Տեսնեմ մի դպիր—աստիճանաւոր—
 Հասարակութեան մէջ ազատ, համարձակ
 Մի աղջըկայ հիտ խօսում է—տաք-տաք.
 Տիրացո՛ւ՝ աղջի՛կ. այդ ի՛նչպէս բան է.
 Ի հա՛րկէ, որ շատ յիմարութիւն է:
 Բայց անցեալ տարի «Լոյս» օրագրում
 Ընթեռնում եմ ես (մոռյայ ո՞ր համրում),
 Թէ Պօլիս քաղքում մի սո:րը վարդապետ
 Մի լաւ սարկաւազ ունէր իրա հետ՝
 Շատ տարի սիրով միասին ապրած, —
 Բայց նա—աղջի՛կ էր—պըլի շը հագած...
 Տեսէ՛ք՝ հայր սուրբը ի՛նչ խելօք մարդ է.
 Յայտնի՛ բան է, որ այդ ն էլ է:

* *

Անցեալ կիրակի մի մարդ—մերկ, աղքատ—
 Ժամում սուրբ խաչը նա համբուրելիս՝
 Խաչահամբուրից մի՞, թէ՞ երկու հատ

Կօպէկ գողացաւ. դա՛ւ դառաւ սրբտիս.
Ի՞նչ էք ասում. այդ անելուն բան է.
'Ի հա՛րկէ, որ շատ յիմարութիւն է:
Բայց մեր բարեպաշտ մեծ երեսփոխը
Չորս-հազար մանէթ նոյն ժամի փողը
Եւ ուրիշ շատ բան իր տակը դրաւ.
Կոյր ժողովուրդը ո՛չինչ չիմացաւ...
Երբ եկեղեցին դեռ անհաշիւ է,
Յայտնի՛ բան է, որ այդ ներքէն է:

* *

Մի քրքեական յանցանքի համար
Նըստում էի բանա՝ մի կերպ ազատւամ.
Տեսնեմ՝ մօտացաւ ինձ մի քարտուղար
Եւ ասաց. «Баринъ, дай на водку намъ!».
— Что?!... Мерзавецъ... դատաւորն խօսեց.
На водку тѣбѣ? обажди, подлецъ...
Խեղճ քարտուղարը ահից դողում էր.
Ինչո՞ւ — պատճառն իր յիմարութիւնն էր:
Բայց դատաւորը այն օրը իր հետ
Քաշեց ինձ՝ տարաւ իրա կաբինէտ.
Խօսեցինք... Վերջը ութ թուման առաւ,
Որ ազատութիւն ապա ինձ տուաւ.
Այ ամենեւին այս ուրիշ բան է.
Յայտնի՛ բան է, որ այդ ներքէն է:

* *

Դ. քաղաքում ես (ինչ թագուցանեմ)
Սիրում էի մի աղջիկ — գեղագէմ.
Սուրբ էր իմ սէրը, միայնց ցաւալին
Այն էր, որ այս բանն յայտնի էր շատին.
Մա՛կ մընաց՝ որ մեզ նահատակէին.
«Մահապարտ են դրանք» ոմանք ասացին.
Դ... քաղաք՝ սուրբ սէր, հը՛ լըսուած բանէ.
'Ի հա՛րկէ, այդ լոկ յիմարութիւն է:
Բայց այն աղջկայ համեստ քոյրերը,
(Ո՛չ ոքին չ'ասէք), այն է՝ մեծերը
Թունդ սիրում էին իրանց ծառային՝
Հազար թալակից փախածից մէկին,
Պարոններ, միայն այնպէս ծածուկ էր,
Որ այս գաղտնիքը ո՛չ որ չ'իմացաւ,
Ե՛ւ. աղջիկն էլ խօ՛ մահկանացու է.
Յայտնի՛ բան է, որ այդ ներքէն է:

1876 թ. Մարտի 8

Մօզգօկ

ԱՆՏԵՂԻ ՅԱՆԿՈՒԹԻՒՆ.

Մի մարդ զըզուած բոլորովին իրանց տան
մէջ յաճախ կըրկնուող
կըռուից, վէճից զալմաղալից, մի օր իրա
հետ ըզբօսնող
հնկերօջը ասաց. «ընկեր, ես կ'ուզէի այս
բօլակէին
«Այս փողոցի մէջ շուն լինել, քան թէ մի
մարդ մեր ասի միջին»:
— Բայց որպէս զի—ասաց միւսը—քեզ ըն-
կերէն շատ ունենաս՝
Խորհուրդ կը տամ՝ յեր ասի Շուն, իսկ
փողոցի մէջ մարդ դառնաս:

1879 թ. օգ. 8

Սուրբ-Խաչ Գաղաք:

ԵՊԲ Է ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԱՆՈՒՄ
ԺԸԼԱՏԸ.

— Գիշերը՝ երբ որ հանգիստ քնած է
եւ երբ գիտիլ անշունչ ընկած է:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

(ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ԳԱՂԱԵՐԷՆԻ).

ԱՅՆՔԱՆ եմ սիրում ես քո աղջկան,
Որ եթէ էր՝ հասարակ դուրս նրան
Ունենայի ես—էլի—«ը գըրող
Սեւ սատանային կըտայի անփող,
Այն պայմանաւ, որ նա համաձայնէր
Երբեքն եւս լինել հաստատ տէր:

1879 թ. օգ. 30.

Սուրբ-Խաչ Գաղաք:

ԴՈՒ ԷԼ ԶԸԼԻՍ, ԳՈ... ԷԼ.

Խեղճ որբեւայրին իր ձեռքը մեկնած՝
Ողորմութիւն է խընդրում քեզանից.
«Տօ՛, կանչես, կ'յր չես, ո՛վ կին անիծուած»,
Ասում ես՝ կօպէկը հանում քո ճէպից.
Թէ աշդպէս ես միշտ աղքատին օգնել,
Դու—էլ չըլի, «ո օգն—լի—նը» էլ

* *

Դիմում են քեզ մօտ՝ ասելով. «պարոն,
«Մի բան նուիրէք գաղթականներին»
Կոչում ես նրանց լեթուած, անկրօն, *)
Յետոյ—աբասին գրնում ես ձեռին.
Այդպէս ես անբաղտ եղբարցրդ հասել.
Դ— է՛լ չլին, + Կ— Կ— Կ— Կ— է՛լ:

* *

Առաջարկում են ձեզ, որ ըստաճար
Հայոց լըրագիր— «Մեղու», «Փորձ», «Մըշակ»,
Յիշոյ, հայհոյանք—չաղ, տեսակ-տեսակ
Թափում էք, յետոյ՝ առնում մի տոմսակ. **)
Հէնց իմանում էք թէ՛ տո՛ւրք էք տուել.
Դ— է՛լ չլին, + Ե՛ր Կ— Կ— Կ— է՛լ:

* *

Գրնում ես Մօսկովա կամ տօնաւաճառ՝
Հարիւր-հազարներ կապում ու դառնում.
Երբ պահանջում են քո պարտի վրձար՝—
Տակով ես անում—սուտ սընանկանում.
Այդպիսով ես փող, տուն-տեղ ձեռք բերել.
Դ— է՛լ չլին, + Կ— Կ— Կ— Կ— է՛լ:

* *

Մէկին գըպրոցում կարգում են տեսուչ.
Տեսար սկսում է կոյր հոգաբարձուայ

*) Այլաշկերտցի գաղթականքը:

**) Լրագրոց անգորրագիրը:

Դ— Կ— Կ— Կ— Կ— Կ— Կ— Կ—
Ու յետոյ—իր բանն տեսանել կամայ...
Թըշուառ դու, աճյալէս ես ազգիդ ծառայել.
Դ— է՛լ չլին, + Կ— Կ— Կ— Կ— է՛լ *):

* *

Տըգէտին մէկը տեսնում ես ժամում
Երեսփոխանի պաշտօն է վարում.
Նա հարուստ մարդ է. բայց չորս տարուց հետ՝
Տեսար խաղում է հազարների հետ...
Պարոն, այդ գանձը ո՛ր տեղ ես գըտել,
Հը... Դ— է՛լ չլին, + Կ— Կ— Կ— է՛լ:

* *

Մարդ ես—սիրում ես մէկի աղջրկան.
Նա երգվում է, որ մինչ մահ սիրէ քեզ.
Բայց երբ դատարկուեց փողից քո գըրպան՝
Շուտով շըրջում է քեզնից իր երես...
Կոյս, խոստմունքները ո՛րտեղ ես թողել.
Ձու. Դ— է՛լ չլին, + Կ— Կ— Կ— է՛լ:

* *

*) Այդ տեսուչները, որ միշտ և ամենուրեք մեր
հոգեւոր հայրերից են լինում, դպրոցին բացի նիւ-
թական վնաս հասացնելուց, դառնում են շատ
անգամ նորա յետադիմութեան և կատարեալ
փակման պատճառ. Ուրեմն ա՛յրեն, զօրա՛նան,
երկար ումրո՛ւմ ըլեն, երեսները պարզ լինի և միշտ
կարգի ու պատարագի՝ մնան:

Ահա մի պարոն աշխարհից փախած՝
 Կոխում է անձը սեւ հագուստի մէջ.
 Նա հոգեպաշտ է, բայց տեսար յանկարծ—
 Կեղծ թըղթադրամ է շինում խուցի մէջ...
 Դորա՛ համար ես վարդապետ դառե՛լ.
 Դո՛ւ է՛լ լըլի՛ս, + Խոյ՛ս իւրօրը էլ:

* *

Մէկը Թիֆլիզից կամ Ղարաբաղից
 Վառուած գընում է դէպի Գերմանիա,
 Որ գերմանական բարձր ուսումից

Ոտը կոտրում է ու այնտեղ մընում:
 Հը՛, պարոն, ի՞նչ է, բօլ տեղն ես ընկե՛լ.
 Դո՛ւ է՛լ լըլի՛ս, + Բէրա՛ծ ուսումն էլ:

* *

Մէկն էլ դօքտորի դիպլոմը ծոցում՝
 Գալիս է հօրը տանը պինդ նրստում.
 Յետոյ իր քէֆին բեխերը սրրում
 Եւ աննպատակ քուչէքը չափում:
 Տըլա՛յ, կասեմ քեզ, թէ որ կարենաս
 Նորա մօտ ազգի վըրայ խօսք բանաս.
 Ա՛յնպէս կը բանայ անսանձ բերանը,
 Որ մահուան դուր կ'ընկնի քո ջանը.
 Խօ՛սք չ'ունիմ, պարոն, ուսումնական ես,

Բայց Հային մի գրօշ օգուտ տուել ես...
 Հային ի՞նչ օգուտ, որ դու սաղ գիշեր
 Բուլփարում լէ՛լ-լէ՛լ քաղում ես վարդեր.
 Հային ի՞նչ օգուտ—ասս մի տեսնեմ—,
 Որ քեզ սիրուհի ունես գեղադէմ.
 Հային ի՞նչ օգուտ, որ դու մերթ ընդ մերթ
 Հօրըդ հաշիւն ես գըրում երկու թերթ:
 Հային ի՞նչ օգուտ, որ ես դու հարուստ
 Եւ օրը մի ձեռք փոխում ես հագուստ.
 Հային ի՞նչ օգուտ, թէ հիւրանոցում
 Օրեկան հարիւր մանէթ ես մըստում:
 Հային ի՞նչ օգուտ, պատուելի՛ դօքտոր,
 Որ դու ժառանգ ես մեծ կայքին քո հօր,
 Որ լի ապրում ես եւ ամենայն օր
 Հինգ բութիլ շանպան ես ածում քո փոր *).
 Հային ի՞նչ օգուտ, հը՛. ի՞նչ ես լըռել.
 Դո՛ւ է՛լ լըլի՛ս, + Զոյ՛ն դիպլոմն էլ:

* *

Մէկն-էլ չ'աւարտած դեռ «այբուբենը»
 Գըրականական մըտաւ ասպարէզ
 (Ախար քո՛ բանն է, ա՛յ առանց պօղ եզ...):
 Բըռնում է, ախպերք, գըրչի կոթիցը՝
 Ի՞նչ ասես դուրս է տալիս գըլխիցը...

*) Վրից էլ օխտը գոմէշ կուլ տալիս...
 Ծ. 4.

«ձըդ-ձըդ» եւ ահա քեզ նոր հեղինակ,
 Հրատարակում է—*Ժամեր* — Բարսի:
 Օրացոյց... տարեր— «Ագռաւ», «Կաշաղակ»
 եւ էլի հազար բաբաթի «ան», «ակ»:
 Մէկ ասող չը կայ՝ հայ երիտասարդ,
 Ի՞նչ ես սարգի պէս սարքել քո թակարդ,
 Մըտել ասպարէզ եւ անխղճմտաբար
 Որսում միամիտ ճանճեր անհամար...
 — Բէ՛ֆ արա, լո՛թի, ածի՛ր քո սազը,
 Մի օր կը գընեն գըլխիդ զափաղը.
 Բայց— լըսի՛ր խօսքիս— քանի գէօլրանը
 Ձեռքիդ է, կամաց գու տես քո բանը,
 Թէ չէ՛— մօտ էգուց կ'ստեն՝ «հաւաքի՛ր
 Քո փասա-փուսէն ու ծակըդ մըտի՛ր.
 Քեզպէս էշերին մենք շատ ենք ճանալել.
 Դո՛ւ է՛լ չըլէս, +» *Օրացոյցը* էլ՝:

* *

Մի այլ պարոն էր, որ էլի— էլի
 Գարն չէ կարող փայ ան՝ լ (լըսի),
 Տեսար— «Լ Բարսի» — դառաւ խըմբագիր,
 Հրատարակեց տաք-տաք ամսագիր...
 — Հը՛, հայր սուրբ, ի՞նչ շուտ քեզ հասաւ
 հերթը.

Դէ՛հ, լըղի՛ր, զօջաղ, քո անհոտ թերթը
 Ինչո՛վ կամենաս— թէ կուզ կաղամբով—,
 Հայր կը կարգայ նորան իշտահով:

Հայր չը գիտէ բերնի լազաթը.
 Նա միշտ պատրաստ է— ասեմ հաստատը—
 Ջուրը գոլորել իրա արծաթը:
 Դու հազար ասա, ըէլի— չ էլի—
 Կը՛ծա՛՛ էլիկն+ը լըսի—, —բայց նորան
 Երբէք չես կարող հասկացընել բան:
 Ուղղորդ էր ասում իմ պառաւ տատը.
 «Սեւին սապոնը, խեւին խըրատը
 «Ի՛նչ անի...»: Տատիկի լոյս դառնայ հոգիդ.
 Խօսըրդ խօ՞ խօսը չէ— այլ զուտ մարգարիտ:
 — Բայց ինձնից հեռու տար «Արարատը»,
 Անջուր թառամի գորա արմատը.
 Այնպիսի՛ հոտած նիւթ կայ դորանում,
 Որից չես գըտնիլ անգամ դուռանում...
 Ուրեմն ինձ ներիր, Հայր, կ'ուզեմ ասել.
 «Դո՛ւ է՛լ չըլէս, +» *ամսագիրը* էլ՝:

* *

Անցեալ տարի, երբ Ալաշկերտցի մեր
 Հայ-գաղթականքը հասան Ռուսաստան,
 Մերոնք եռանդով մասնաժողովներ
 Սկսեցին կազմել Թիֆլիզ, Երեւան, ...
 Որ առ ժամանակ այդ թըշուառներին
 Հարկաւոր պէտքեր հասացընէին.
 Բայց հազարները հաւաքելուց յետ
 (Ընթերցող, քեզ մօտ մընայ իմ սեկրետ)

Զրգիտեմ՝ ո՞ր խոր ծակի մէջ գըրին
 Եւ առճը-փառճը վըրան նըստեցին *):
 Խեղճ գաղթականաց մեծ մասը ցըրտից,
 Սուից, այլ եւ այլ հիւանդութիւնից
 Մեռաւ, միւս մասի ալքը ջուր դառաւ՝
 Մասնաժողովից կօպէկ չըստացաւ:
 Ի՞նչ պիտ' անէին. նորանք մերկ, բոքիկ
 Կըրկին յետ դառան դէպի հայրենիք՝
 Ասեղով. Զեղ մօտ, հայք մենք չէ՛նք մընալ.
 «Դո՛ւք ալ չըլաք, յէր ճառնաժողովըն ալ»:

* *

Պա՛րոններ, շատ կան գըրելու բաներ,
 Բայց առժամանակ պէտք է թագացնել.
 Դեռ մըրափած են—քընած են Հայեր,
 Նախ նորանց մի կերպ պիտ' զարթացընել:
 Սիրելիք, գիտէ՞ք, դեռ մեր գըրիչը
 Պիտի զգոյշ պահած ճըշմարտութիւնից,
 Թէ չէ՝—ամեն տեղ խեղճ հայ-երգիչը
 Անտէր կը մեռնի քաղցածութիւնից:
 Ես էլ—ներեցէ՛ք—հարկիցը ստիպուած՝
 Գըրեցի միայն այս քանի տողեր.

*) Ընթերցողը կարծեմ շատ լաւ է հասկանում
 թէ մեր այս խօսքերը ումի՛ն ենք ուղղում:

Գիտե՛մ, կան մարդիկ, որ վերաս կատղած՝
 Կէ բարեհաճեն ասել այս խօսքեր.
 «Յի՛մար անասուն, տես ի՛նչ է գըրել.
 «Դո՛ւք էլ չըլէք +» Կոպէ՛րնըք էլ»:

1878 թ. Ապրիլի 28

Մօզդօկ:

ԹԱՆԳԱԳԻՆ ՔԱՂԱՔ.

Ելով ԿԱՍՈՒՄԸ կայ մի գիւղաքաղաք,
 Ուր շատ է լինում—գինի, հաց եւ սագ.
 Քանի գըրա մէջ կայ իմ «Իւր—հի»,
 Գին չ'ունի, այո՛, անգի՛ն է, անգի՛ն.
 Բայց եթէ այնտեղ նա չը բընակէ՝
 Քաղաքի գինը— մի «Լ Կօպէկ է *):

1880 թ. Ապրիլի 26

Սուրբ-խաչ քաղաք.

*) Եթէ կարելի լինէր վաճառ հանելու, գուցէ,
 այդ է՛լ չը կըտրէր:

«ԲԵՌՆԱԿԻՐ ԱՆՍՈՒՆՆԵՐԻ ՄԷՁ

ՈՐԻ՞ ՎԻՃԱԿՆ Է ԱՄԵՆԱԾԱՆՈՐ».

ԱՐԾԱԹ ժողովող անգլաւակինը,
Քանքարաթագոյց իմաստունինը.
Խոստովանահայր քահանայինը,
Երկու անձանց մէջ լըրտեսողինը:

1879 թ. Դեկտեմբ. 4

Սուրբ-Խաչ Քաղաք:

ՄԵՆՔ ԱՅՍՊԷՍ ԿՊՍԵՆՔ.

ԱԻՆՆԱԼ մի հինգ-վեց աշխատակից,
Մի քանի հատ էլ մանուկ թրղթակից,
Նիւթեր գողանալ այս-այն ծակ-ծուկից,
Բիւր տեսակ լըրեր ըստեղծել սըտից.
Այսօր մի նոր միտք յայտնել իր գըլխից,
Դարձեալ նոյն միտքը հերքել մի շաբթից:
Տարին շարունակ տասներկու ամիս.
Կըրծել անտեղի սըրա՝ նըրա միս.
Լիբբ հայհոյանքով, անլայել խօսքով,

Հաղար մի տեսակ «դաւի-դարաբով»
Լըցնել թերթերը: Ձաղ յիշոցներով,
Ամենաըստոր ածականներով
Շոշախել անթիւ մարդկանց պատիւը,
Բայց չը մոռանալ իրա հաշիւը. —
Սըբան մէնք է՛սանք է՛սանք է՛սանք է՛սանք:

*
* *

Համալսարանում վատնել տարիներ
(Ձեմ ուղում յիշել հօրը հաղարներ),
Օրէն երկու ժամ լըսել լեկցիաներ,
Յետոյ՝ դուրս ընկնել, դընել ակնոցներ,
Հագնել ըսպիտակ՝ փայլուն ձեռնոցներ,
Կամ շուն թակելով չափել փողոցներ,
Կամ ուռած-փըքած մըտնել հօտելիներ՝
Փըշրել շանպանի, մագերի շիշեր...
Յաճախ այցելել կաքաւհանդէսներ՝
Որսալ մեղրածոր թըշից համբուրներ...
Մայրենի լեզու՝ աղբ, հայ, հայրենիք
Համարել իրա համար նախատինք.
Օտարի անուն հանել մինչ երկինք,
Հային համարել—անբան, վայրենիք...
Յետոյ՝ ծոցումը դընել մի դիպում՝
Գալ էշի նըման մըտնել իր հօր գոմ.—
Սըբան մէնք է՛սանք է՛սանք է՛սանք է՛սանք:

*
* *

Պարտք փող հաւաքել հինգուի, քըսանուի—
Մէկից տոկոսուի, միւսից—խընդիրքուի—
Հազարներ շինել՝ գընալ դուզ Մօսկուի.
Այնտեղից էլ—քիչ—հարիւր-հազարուի
Կապել ու դառնալ՝ նըստել ապահովի
Կըշքըքում թեթեւ, գազում կարճ չափել,
Սուտ երգումներուի հազարին խափել՝
Իր փըտած բարին մի հանգուի նաղդել.
Վերջը իր բեռը լազաթին կապել՝
Ու իրան բանկրուտ հըրատարակել.—
Սըլան Դեմ Կասեմ ասլափաթ դասնալ:

1878 թ. Մարտի 8

Մոզգուի

ՇՈՒՆ ՍՊԱՆԵԼՈՒ ՀԵՇՏ ՄԻՋՈՑ

(ԺԱՂՈՎՐԴԱԿԱՆ ԶՐՈՅՑ)

ԹՈՒՐԳԻ մէկը հայացել էր—
Հնդուներ էր հայ-կըրօն.
Նա պահում էր պաս, կիւրակէ
Եւ յարգում էր ամեն տօն:

Վըրայ հասաւ եւ մեծ-պասը.
Մինչեւ զատիկ խեղճ թուրքին
Թեփից շինած մախոխ տալով՝
Որովայնը ուռցըրին...

Մի օր թուրքը փողոցի մէջ
Տեսաւ մարդիկ հաւաքուած՝
Հըրացանուի կամենում են
Սպանել մի շուն կատաղած.

«Ի զուր տեղից», ասաց թուրքը,
«Ջոհ մի՛ արէք գընդակի.
«Տուէ՛ք շանը հայի հախի—
«Ինքը իրան կը սատկի»:

ՀԱԻԱՏԱՐԻՄ ՇՈՒՆ

(ԺԱՂՈՎՐԴԱԿԱՆ ԶՐՈՅՑ).

ՇԱՏ հին ժամանակ, երբ Ղարաբաղը
Գըտնիում էր Պարսից իշխանութեան տակ,
Երբ կըրօնամոլ խաների ձեռքում
Հայն համարվում էր մուսուառ հըպատակ—

Անգուծ, մոլեռանդ խաւներէց մէկը
Կանչեց իրա մօտ մի հայ քահանայ,
Եւ տալով նըրան իր սեւ շընիկը՝
Ասաց՝ ցոյց տալով գաղանի վըրայ.

«Քեզիշ, լաւ նայիր, քեզ այսօրվանից
«Տալիս եմ երկու շաբաթ ժամանակ.
«Այս կարճ միջոցում պիտ' սովորացընես
Նանը հայ լեզուով խօսելըն իստակ»:

— Բարի է, տէ՛ր իմ, ասաց քահանան,
Ծառադ պատրաստ է առնել քո հրաման:
Ու յետոյ կամաց վեր առաւ շունը
Եւ տարաւ- կապեց իրա բակումը:

Երկու շաբթից յետ մեր տէր-Սահակը
Առած գաղանին իրա շալակը՝
Դիմեց խանի մօտ: Խանը երբ տեսաւ՝
Գոռաց. «Հըմ, քեզիշ, մի բան սովորա՞ւ...»:

— Խանն ապրած կենայ, ասաց քահանան,
Ներիր տարիքիս, խըղճա՛ իմ վերան...
Ես ամբողջ երկու շաբաթ շարունակ
Ծեծել եմ շանըդ՝ խրատել բիւր տեսակ.

— Բայց ո՛չ. երբէք ինձ ուշ չէ՛ր դարձընում.
Նա համարեայ միշտ այս բանն էր ասում.

«Եկու՛ղ սպանես է՛լ չեմ սովորելու.
«Խո՛ւրդ է՛մ որ լո՛ւրդ է՛մ, հայ լե՛մ դառնալու»:

ՄԻԻԹԱՐԻԶ ՊԱՏԱՍԽԱՆ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶՐՈՅՑ)

Ծե՛ր խաչանի փոքրիկ որդին
Թուրքի հաւատ ընդունեց.
Այս չար բօթը խեղճ ծերուկի
Սիրտը սաստիկ ցաւցըրեց:

Մի շաբթից յետ տընք-տընքալով՝
Ծերը դիմեց խանի մօտ
Եւ ողբալով՝ իրա ցաւը
Պատմեց նըրան համառօտ:

«Ծերուկ», ասաց տաճիկ խանը,
«Քո մէկ որդիդ եղեւ լո՛ւրդ.
Բաս ի՛նչ անի խեղճ Հասանը *),
«Եօթն ունի—էօթն էլ լո՛ւրդ...»:

*) Խանի իր անունն էր:

ԲԱՂՏԱԻՈՐ ԳՈՂ(?!)

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱԿ).

ՍԷՍ գիշերին գողի մէկը
Մըտաւ աղքատ Սոսի տուն
Եւ ըսկըսեց գողանալու
Բան որոնել խաւարում:

Աղքատ Սոսը իմանալով
Անկանչ հիւրի գալուստը
Քընաթաթախ, ծիծաղելով
Ասաց նորան այս խօսքը.

«Ընկե՛ր, այնտե՛ղ ես որոնում
«Բան գըտանել քեզե՛ր»:
«Որտեղ ես չե՛մ կարողանում
«Մի բան գըտնել լոյս օրով...»:

ՊՕԷՏԻՆ.

ՊՕՆՏ, ամբոխի մի՛ սիրիւր գովեստ
Եւ ոչ ատիւր դու նըրա բամբաստնք.
Նա գընհատել չէ՛ կարող քո արհեստ
Եւ ո՛չ քո բարձրը մըտքի աշխատանք:

Այն ամէն բանը՝ ինչ որ աղնիւ է,
Ի՛նչ որ բարձրը՝ սուրբ եւ գեղեցիկ է,
Ի՛նչ որ կարող է զգալ քո վեհ հոգին՝
Հասկանալի՛ չէ տըգէտ ամբոխին:

Քո հոգու մէջը՝ որպէս ուղիւհանում՝
Խորտակուած յուսոյ դարսուած են բեռներ.
Միթէ՛ դորա մոլթ եւ անտակ խորքում
Տեսնել կարող է ոք քո գաղտնիքներ:

Միթէ՛ մոտք գործել կարող է ամբոխ
Սըրտիդ սըրբազան սենեկի շէմքով.
Այնտեղ սուրբ խորան է եւ ոտնակոխ
Ո՛չ ոք չէ կարող առնել պիղծ ոտքով:

Դու մի՛ շըլանար մարդկանց կանացի
Փարթամ գովեստի քաղցրիկ շըշուկով.

Այսօր մինչ երկինք կը հանեն քեզի,
Իսկ վաղը—դարձեալ կը խրվեն գետնով:

Պօ'էտ, հեռացի՛ր, խոյս տուր ամբոխից,
Թէ չէ—խաղալիք կը դառնաս մանկանց.
Ի՞նչ ես որոնում: պատիւ, փո՞ղ, թէ՞ ի՛նչ.
Քո գրչիդ մէջն է քո պատիւ, քո գանձ:

1878 թ. Փետ. 7

Մօզդօկ:

ԻՄ ԲԱԶՄԵՐԱԽՏ ՄՕՐԸ—ԱՆՈՅՇ

ՍԱՓԱՐԵԱՆՑԻՆ

Մայր իմ, թէպէտ բազմի կամքը ինձ
բաժնում է Քո գրկից,
Իայց ես դարձեալ Քո հրնազանդ որդիդ եմ
եւ հեռուից:
Մի լար, Մայրի՛կ, դու այն մասին՝ թէ Գո՛յն է
Քեզ նստանա՞ծ.
Ո՛չ. իմ սիրտը անբաժան է Գեղնից թէ—
կուզ ուր գընամ:

Լացի՛ր միայն որդուդ վրայ՝ +անի պէսն—
էս նստան:
Գուցէ մի օր լալու՝ նորա զեփնիլ և գե-
րեզման.....

1875 թ. Մարտի 3

Ղարբանդ

ՈՐԲԻ ԶԱՏԻԿԸ.

I.

Քամը արձակուեց... Փառաբանութեան
վերջին հրնչիւնքը լռեցին երկնի տակ—
վերջացաւ աղօթք... մարդիկ ցրուեցան...
Նորից աշխարհի ձայնը մայրական
կանչում է իրա հարազատ որդւոց:
Խուռն բազմութեամբ լրցուեցաւ փողոց:
Ծեր, երիտասարդ, կին, տղայ, աղջիկ,
Այս մեծ քաղաքում թէ՛ մեծ, թէ՛ փոքրիկ
Պըճնուած, զարդարուած շտապում են տուն.
Մի անհրեւոյթ ձեռքի զօրութիւն
Քարշում է կարծես դորանց միտք ու սիրտ
Որպէս պողպատին ձրգում է մագնիտ:

II.

Անցաւ քառորդ ժամ: Դառարկուեց փողոց:
Ամեն մարդ իրա կրնոջ եւ որդւոց
Հետ բազմած-խրմբով շուրջը սեղանի
Ընթրիք են անում—ուրախ, զուարճալի:
Սովորականից այսօր բաւական
Ամենայն բանով առատ է սեղան,
Մանաւանդ նորան կարմիր ներկած ձուն
Կարծես տալիս էր մի կենդանութիւն:
Է՛լի երկու ժամ—եւ ամենեքեան
Յիսնօրեայ պասի վրէժըն առած՝
Պարարած փորով անկողին մըտան—
Մորփէի գողըն ընկան-վառտակած...

III.

Գիշերը ծածկեց աշխարհի վերան
Իրա թեւերը որպէս սեւ սաւան.
Երկիրն է՛լ մըտաւ մի շատ քաղցրը քուն.
Ամեն տեղ տիրեց խորին լռութիւն:—
Միմիայն հեռավում անտուն, անճրքազ,
Կուսանաց-Վանքի դրօսի պատի տակ,
Համարեայ թէ, մերկ, նըստած է մի կին
Եւ լաֆախէ—է հետ իր որբիկին.
Նորա մազերը այնքան ճերմակ են,
Որ խաւարի մէջ անգամ փայլում են.
Նա հանեց պարկից մի կրտոր չոր հաց,

Ձիւնաջրի մէջ թաթախեց կամաց,
Յեառյ գէմ՝ արաւ իրա որբիկին՝
Ասելով. «Վեր առ՝ հաց կեր, Գարեգին»:
Իսկ ուրախ-ուրախ փողբիկ որբիկը
Մեկնելով գէպ՝ նա իրա ձեռիկը՝
Առաւ կրտորը՝ կերաւ ճաշակով—
Կարծես թէ թրխած լինէր այն մեղրով...
—Ընթրիքն վերջացաւ: Պառաւը կամաց
Վեր կացաւ ոտքի, մեղմ ձայնով ասաց.
«Գարեգին, այստեղ սպասիր մի առ ժամ»:
«Աղօթքըս կ'անեմ, է՛լի կը դառնամ»:
Տըղան ցած դըրեց իր թոյլ գլուխը
Մի քարի վրայ եւ ալխալուխը
Վերմակի տեղակ գըցեց մարմնով.
Կինը նորանից հեռացաւ շուտով...

IV.

Անցաւ հինգ րոպէ: Պառաւըն-չորցած
Վանքի դըրան մօտ խոնարհ ծունկ չոգած՝
Աղօթք է անում. նորա լի ցաւով
Աչքերի մէջ կայ արտասուների ծով...
«Փրկիկի՛ն ամենի, մեղքացի՛ր, խղճա՛մ,
Ասում է, «անտէր պառաւիս վրայ...
«Մինչեւ երբ պիտի ինձպէս թըշուառը
«Ի զուր ոտնակոխ առնի աշխարհը..
«Ես չեմ հայցում բաղտ, ո՛չ փող եւ ո՛չ գահ,

«Այլ գէթ ողորմիր, ուղարկիր ինձ մահ...
 «Տուն, տեղ, ամուսին, պըսակուած որդիք,
 «Հինգ տըղայ-թոռներ եւ երկու աղջիկ—
 «Քոյորն էլ կորցրի, միայն այս փոքրիկ
 «Մընացել է ինձ սեւաբաղտ որբիկ:
 «Աներես մահը ամենն-էլ խըլեց,
 «Բայց ինձ, անբաղտիս, որ օրուայ թողեց...
 «Ամառը տապից էրուած-խորոված,
 «Զըմեռը ցըրտից սառած, փետացած,
 «Քայքայուած մարմնով մի տընից միւս տուն
 «Շըրջում՝ խընդրում ես ողորմութիւն...
 «Զըկայ ինձ համար տօն կամ կիւրակէ
 «Եւ ոչ գէթ երկու ուրախ ժամ, ըոպէ.
 «Զատիկ, վարդավառ, ... — ամենն էլ տըխուր
 «Միշտ կըտոր չոր հացն է իմ կերակուր:
 «Հոգ չէ. կըտանեմ ես այդ ամենը,
 «Բայց ի՞նչ անեմ խեղճ իմ Գարեգինը...
 «Նա մի վեցամեայ սեւաբաղտ որբիկ—
 «Մերկ՝ առանց գըլխարկ, վարտիք եւ շապիկ,
 «Միայն ալխալուխ մի—պատըռտած, հին
 «Ծածկում է նորա մերկութիւն անձին.
 «Այդ բաւական չէ—եւ ամառ, ձըմեռ
 «Քնկած է կողքիս—հիւանդ, կիսամեռ...
 «Ո՛հ, գըթա՛, Փըրկի՛շ, թո՛ղ այս տառապանք
 «Գէ՛թ անցնի մահով. բաւ ինչ տանջուե-
 ցանք...»:

—Խօսքը վերջացաւ: Պառաւր—ցաւոտ
 Դողդոջուն ոտքով գընաց որբի մօտ.
 Հինգ ըոպպէից յետ նորա լի ցաւով
 Աչքերն փակուեցան մի բաղըր քընով:

V.

Դեռ արեգակը իր արշալուսով
 Ողջոյն չէ՛ր տուել—գեղազուարճ խանդով
 Կուսանաց-Վանքի գըմբէթի խաչին,
 Երբ ղողանջիւնը լըսուեց զանգակին:
 Տեւեց քառորդ ժամ: Զէ՛գը չէր բացուած՝
 Մարդ, տըղայ, կոյս, կին գեղեցիկ հագնուած՝
 Ուրախ դիմում են դէպ՝ եկեղեցին—
 Ներկայ գըտնուելու սուրբ պատարագին:
 Արեւը ելաւ... դարթնեց բընութիւն...
 Գանգրամաղ գառանց քաղցրալուր մայիւն,
 Դեռ նոր կանաչած ծառոց սոսափիւն
 Եւ թըռչնոց երգը ծուլուած միասին՝
 Կազմում են քաղցրիկ մի ներգաշնակութիւն:
 Ամենն-էլ ուրախ, ամենն-էլ խընդում
 Ամեն տեղ կարծես նոր կեանք է տիրում:
 Միայն պատի տակ Գարեգինն գորկած՝
 Խըղճուկ պառաւ խոր քուն է մըտած:
 Նա ամենայն օր դեռ չը խօսած հաւ՝
 Իր առաւօտեան աղօթքն էր անում,
 Բայց այսօր ինչո՞ւ այսքան ծուլացաւ:

Մի՞թէ զատիկը նորան չէ՛ գրաւուա՛ծ:
Թէ՛ տարաբաղտը ունի ցանկութիւն
Մոռնալ գէթ քննով բաղդի դառնութիւն.
Թէ Մորիէոսի կախարդիչ գըրկում
Նա երազներով է հրրապուրվում...
— Գուցէ՛: Բայց ահա՛ վանքն է՛լ արձակուեց,
Գաւիթը անթիւ մարդկանցով լըցուեց.
Բոլորն էլ գէպ՝ տուն ճանապարհ ընկան,
Բայց այս երկուսը—գտնձեալ չ'արթնացան...
V.I.

Անցաւ քառորդ ժամ: Պառաւն իր որբով
Շրջապատուած է խուռն ամբօխով:
Ե՛ս էլ տասնամեայ մի տըղայ էի
Այդ խըմբի միջին. տեսայ պառաւի
Ձեռքիցը բռնեց մի կարճ ծերունի՝
Կանչեց բարձրաձայն. «վե՛ր կաց, այ կընիկ,
«Ի՛նչքան քընեցիր հերիք է՛, հերի՛ք»:
Ասաց. բայց յանկարծ իր թոյլ ոտքերով
Դէպի յետ դարձաւ եւ զարհուրանքով
Գոռաց. Մեռա՛ծ են, մեռա՛ծ—երկուսն էլ...
«Գէ՛թ քահանային պէտք է յուտ կանչել...»:
V.II.

Քահանան եկաւ, ոտից մինչ գըլուխ
Ձընեց երկուսին, ասաց բազմութեան.
«Որդի՛ք, իշխու՛նք է՛լ արգէն դոցա թո՛ւ...»

«Ողորմելիքը գէ՛թ հանգըստացան...
«Բայց աւա՛ղ միայն, որ չ'արժանացան
«Ճաշակի, եւ ես չ'ունեմ՝ հրաման
«Կատարել կարգը—սուրբ դոցա թաղման
Կա՛մ թէ ամփոփել գերեզմանատան...»:
V.III.

Ընթերցո՛ղ, երբ որ անցեալ գիշերին,
Աղօթքից յետոյ, պառաւն իր որբին
Գրկած մըտել էր քուն—քաղցըր, խորին,
Յանկարծ հիւսիսից փըչեց մի ուժգին
Սառ քամի, եւ այդ թըշուառականը
Յրրտահար եղած՝ փոխուան միւս կեանքը:
IX.

Բայց քահանայի կատարուեց հրաման.
Ոչ խուճի, ոչ սաղմոս եւ ո՛չ շարական...
Միայն չորս հոգի—այն էլ սօլդատներ—
Վեր առած ուսի զըրանց դիակներ
Եւ, քաղաքից դուրս հանելով՝ մի խոր
Ձորում թաղեցին որպէս մեղաւոր:
—Ամենքն է՛լ մոռցա՛ն պառաւ Նուշանին
Եւ նորա թուան—որբ Գարեգինն.
Բայց ես, ընթերցո՛ղ, նոցա յիշատակ
Անջինջ պահեցի մանուկ սըրտիս տակ,
Որ ահա՛ այսօր նոյնքան վըշտագին
Սըրտով հանում եմ եւ տալիս թըղթին.

Իսկ նա—յուսով եմ—կը թողնի անհուն
Դարերին որպէս սուրբ ժառանգութիւն...

1878 թ. Սեպ. 7

Եղեռնայ.

ՄԻԹԹԱՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

(ՄԵԾ. Պ. ՍԵՐԳԷՅ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ
ԽՕՋԱՅԵԱՆՅԻՆ) *)

Երբ արեգը ոսկեծածանչ իր շողերը տարածած՝
Իւրաքանչիւր մարդու սրբոտում վառում է մի
խաբուսիկ
Ուրախութեան վայրկենական ճառագայթ կամ
յուսոյ կայծ,
Յայնժամ ամեն սիրտ ըզգում է, որ գըտնվում է
երջանիկ
Ներկայի մէջ. բայց ապագան երբ չար բաղտից
կաշառուած՝

*) Ս. յս միտթարտական նամակը գրուած է Մեծտպառիւ
Պ. Խօջայեանցին իր համդուցեալ Աննա դստեր մահուան
առթիւ. փոքրիկ Աննան, իմ կտրծիքով, տասներեկու տարե-
կան էր, երբ կնքեց իր դեռութիւթ կեանքը. հէնց այն
ժամանակ, երբ նա Ստաւրօպօլից, ուր ուսանում էր, տեսու-
թեան էր եկել իր ծնողները Մօզդօկ.

Փողոցները չափըփիլով սեւ դագաղը պինդ
բըռնած՝

Այսօր մէկի օթեանի խաղաղ դըռնակն է բախում,
Վաղը—միւսի, մահկանացուն, ո՛հ, յայնժամ է
համոզվում

Որ պիտ' վախնալ անբաղտութեան լարած գաղտնի
թակարդից.

Այս բընութեան ճիշդ օրէնքն է, դարմանալի չիք
ոչինչ:

Բընութեան այդ անխախտելի օրէնքից զերծ
չը մընաց

Նըմանապէս և Ձեր խաղաղ գերդաստանը—
պաշտելի.

Այո՛, նորան ևս հասաւ մի այնպիսի չար պա-
տուհաս:

Որ յատուկ է իւրաքանչիւր մահկանացու էակի,
Աստուածները դորա դրախտից պոկեցին մի դե-
ռահաս:

Անուշահոտ, քընքուշ ծաղիկ (որքա՛ն անգութ է
օրհաս).

Ո՛հ, դա նորանց կողոպուտն էր—Ձեր նաղելի
դըստրիկը,

Դա Աննա՛ն էր, փոքրիկ Աննան—Ձեր արեգը,
լուսնեակը,

Որը թողեց Ձեր սըրտի մէջ յաւերժական մի կըսկիծ
Իսկ մե՛ր սըրտում—անջընջելի մի տխրութեան
քաշեց գիծ...

Ի՛նչ է մընում մեզ անելու, բայց եթէ ոչ
ցաւակից

Լինել շեղ շեր խոր վըշտի մէջ և մեր ձայնը
 հեռուից
 Միախառնել թախանձագին շեր աղօթքի ձայնի
 հետ,
 Վերառաքել դէպ՝ երկընաւոր Հայրը-գըթած,
 ծածկագէտ՝
 Յաւերժական երջանկութիւն մաղթելով շեր սի-
 րասուն
 Եւ նազելի փոքրիկ դըստեր Աստըծոյ մօտ—երկըն-
 քում:
 Իսկ շեղ, Տէր իմ, համբերութիւն, պինդ սիրտ,
 հոգու քաջութիւն
 Եւ վըշտաթափ միտթարութիւն այս անցաւոր
 աշխարհում:

1879 թ. Ապրիլ 6

Սուրբ-Խաչ Քաղաք:

ԲԱՅ ՆԱՄԱԿ

ՄԵԾ. Պ. Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻՆ *).

Երբ ոգեւորուած աւնում ես գըրիչ՝
 Թեթեւացընել բեռը Քո սըրտին,
 Պարտական ես Դու, Յարգելի Երգիչ,
 Թէ Թերութիւնքը գըրես Քո ազգին.

* 1878 թ. օգոստոս ամսում, Մօսկվայից վե-
 րադառնալիս ոտքս պատահամբ ընկաւ նոր—

Պարտական ես Դու, եթէ աղգային
 Վէրքերը հանես լոյս հըրապարակ,
 Թէ չար, թիւր, գէշ, վատ գործերը Հային
 Ձը ծածկես ամուր վարագուրի տակ:

Պարտական ես Դու, թէ անգամ մի բառ
 Դբրես յօգուտ մեր ուսումնարանաց,
 Թէ լինես քըննիչ—արդար, անաչառ
 Կեղտոտ գործերին հայ հոգաբարձուաց.

Պարտական ես, թէ պահանջես հաշիւ
 Մեր ընկերութեանց գանձապետներից,

նախիջևան: Պ. Պատկանեանի հետ տեսնուելու
 ցանկութիւնս չափազանց մեծ էր, բայց Պարոնի
 բացակայութիւնը գծադատապէս արգելք եղև ինձ
 արժանանալու այդ շնորհին, միայն մի պաշտելի
 անձնաւորութիւն—Մկրտիչ Պեղչեան *), որ չա-
 փազանց սիրում եւ համակրում էր Պ. Պատկանե-
 անին, ինձ պատմեց նրան վերաբերեալ միքանի
 իրողութիւնք, որոնք խոր խոցեցին իմ սիրտը և
 եղեն այս գրուածքի շարժառիթը:

*) Անկեղծ որսով յայտնում եմ հրապարակապէս իմ խո-
 րին շնորհակալութիւնը Պ. Մկրտիչ եւ Տեկ. Լեղիսաբեթ Պեղ-
 ճեանների, որոնք ամբողջ շաբաթ հիւրասիրեցին ինձ իրանց
 տանը՝ յաւետ երախտապարտ թողնելով այս բառերը գը-
 րողին—ինձ:

Ի. Է.

Նախագահներից, մեր մեծապատիւ
Երեսփոխներից, կամ թէ Արքեպիսկոպոսից:

Թէ Դու յորգորես կոյր ժողովրդին,
Որ քաշէ ուսման, կրթութեան հոգար
Խաւարում թաղուած մատաղ սերունդին,
Որին դըրել է ազգը իր յոյսը:

Պարտական ես, թէ Դու մեր մօդասէր
Գեղեցիկ սեռին ասես այս խօսքեր.
«Մօդան չէ՛ կարող, պարօնուհիներ,
«Խելքով լըցնել ձեր խօսքի գլուխներ»:

Պարտական ես, թէ հասարակական
Մըճըճած գործի կապերը բանաս,
Թէ Խալաթ-Լի-նը Կիւնի զէնիկի
Դու Դիւրան հանես, Էթ-Խալիքի ցոյց տաս:

Թէ արգելք լինես Էլ Կանաֆին
Թալաֆիլ անել խրդճուկ Զալաֆին,
Թէ չը թոյլ տաս այդ Խանդաւանդին
Մըճիլ արիւնը շրջալ իւրաքանչիւր:

Պարտական ես Դու, թէ Խալէ՛ առած՝
Դըպես պօղպօղալ Լա-Էնի Խալիքին՝
Թէ Բօստօփում նորա անցուցած
Կեղտոտ ժամերը խրփես երեսին....

Թէ արգիտութեան Լա-Էնի թաղուած
Կէնճ աղջիկներուն քարոզես ուսում,
Թէ խորհուրդ տաս, որ հայնալը թողած՝
Կալաֆի չ'անէ մի օտար լեզուով.....

— Մի մաշի կեանքդ, Եղբայր պատուա-
կան,

Կարդալով քարոզ յիմար ամբօխին,
Ձի մարդկային սիրտ, ոգի, բզգացմունք
Վաղճըց մեռածէ ամբօխի միջին:

Մի՛ զոհիր կեանքիդ թանգագին ժամեր
Այդ խաւարասէր բուերի դասին,
Դոքա մարդիկ են, — բայց չ'ունին աչքեր,
Ականջներ, լեզու եւ միաք մարդկային:

Թէ կամենում ես անձրդ սիրելի
Կացուցանել Դու իւրաքանչիւր ապին՝
Յիմարներին տուր անուն «յարգելի»
Եւ «գերամեծար» խելքից աղքատին:

Ներբողիր, գովիր գործը զէնիկին,
Պատուիր ու պաշտիր նորան որպէս
կուռք,

Միշտ «այո՛» կըրկնիր նորա խօսքերին՝
Թէ եւ նա լինի տըխմար, խելագուրկ:

Դարձեալ մի խըրատ—այդ եւս ըզգոյշ—
Եթէ պատահեց՝ զարկեց Գեղ ապտակ.
Հոգ չէ. նորա հետ Դու վարուի բընփուշ,
Զըլես ապայե՞ կամքին հակառակ...

Եւ այնուհետեւ, տէր լինեմ մեղքիդ,
Թէ դաքնեայ պըսակ չը դընեն գըլխիդ,
Թէ կոյր ամբոխը հանած իրա ուս՝
Զը փայփայէ Գեղ պէս իր աչքի լոյս...

1878 թ. Օգոստոսի 3

Նոր-Նտիսիջեւան.

ՄԻ ԿԱԹՈՒԼ ԹՈՅՆ *)

Քարասիրտ քեզ չեմ կարող անուանել
Եւ ո՛չ էլ բարի գործերի ոսոխ,
Համարձակվում եմ միայն այս ասել,
Որ դու ե՛յր ես, ե՛յր, ե՛ր, թըշուառ ամբոխ,

1878 թ. Օգոստոսի 5

Նոր-Նտիսիջեւան.

*) Ներկայումս պակասութիւնը նկատել—կամ
մի բաժակ թոյն տալ—մի և նոյն է:

ՈՐԲԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ *)

ԱՆՇՈՒՔ խըրճըթի մի մութ անկիւնում
Անտէր ընկած է մի անբաղոտ մանուկ.
Նա աղբսագին լալիս է, ողբում,
Թափում աչքերից աղի արտասուք.

Նա խեղճ որբիկն է երկուշաբթական՝
Զըրկուած սիրայիր իր մօր խընամբից,
Որ անգութ մահը դէպի գերեզման
Քաշեց ու տարաւ երկրի երեսից,

*) «Որբի արտասուքը» վերնագրով այս տխուր
նկարագիրը վեր է առած Արժանապատիւ Գէորգ
քահանայ Աղայեանցի Արտաշէս որդու կեանքից:
Արտաշէսը լինում է երկու շաբթական մանուկ,
երբ զըրկվում է իր մօր—Շուշանի քաղցր գը-
գուանքից, որը երիտասարդ հասակում գերեզման
իջնելով՝ թողել էր իր երկու որդուն (Ահա՛ն և
Արտաշէս) և մի աղջկան—փոքրիկ Սառային ան-
միսիթար և աննախանձելի դուրթիան մէջ, իսկ իր
ամուսնուն—մի աղետալի վիճակի երկամէ ճի-
րաններին մէջ:

Ծ. Է.

Սեւաբաղտ որբը մորմաքիչ ձայնով
Սընունդ է խընդրում իր մօր ծըծերից,
Բայց նա քընած է մի անգարթ քընով,
Չէ՛ լըսում որդու ձայնը չիրիմից.

Եւ կարծես միայն նորա վեհ հոգին
Տըխուր չըրջում է խորճըթի միջում,
Եւ անմըխիթար որբերկի լացին
Պատասխանումէ եւ այսպէս ասում.

«Մի՛ լար, Ա՛րտաշէս, մի՛ լար իմ հոգի,
«Քեզ չէ՛ վիճակուած կաթը մայրական.
«Մահու սառնութեամբ իմ գեղնած կըրծքի
«Մէջ նա սառել է, սառել, սիրական:

«Մի՛ լար, աչքի լոյս, քեզ չէ՛ վիճակուած
«Խաղալ, թըռ-թըռալ խեղճ-քո մօր գոգում.
«Այդ բաղտը քեզնից խըլել է Աստուած,
«Դու պիտ' մեծանաս օտարի գըրկում.

«Դու պիտի սնանուիս օտարի կաթով, —
«Թէպէտ նա լինէր դառըն որպէս թոյն,
«Թէպէտ նա երբէք քաղցրիկ հայացքով
«Չէր նայելու քեզ պէս մայր իր որդուն:

«Արտաշէս, մի՛ լար, թո՛ղ քո խեղճ մայրը
«Գէթ հանգըստանայ այս սառ հողի տակ:

«Նորա աղօթքը երկնաւոր Հայրը
«Կը լըսի՛ կ'օգնի քեզ, իմ հըրեշտակ...»:

Եւ այսպէս ահա, փոքրիկ մանուկը
Սընո՛ւմ է անտէր այդ մութ անկիւնում.
Վերջ՝ խըղճահարուած՝ կանանցից մէկը
Առնում է գոգը եւ կերակըրում:

Բայց գէթ այդ բաղտը խեղճ Արտաշիսի
Համար չէ՛ տեւում շաբաթից երկար.
Նա այդ միջում եւ այդ ծըծմայրի
Խընամքից զըրկուեց. մահը ապիկար

Դագաղը ձեռքում՝ եկաւ-ներս մըտաւ
Թագուհու *) շէմքով՝ եւ նորա՛ն տարաւ
Դէպի գետնափոր մահու դարպասը.
Ի՞նչով պիտ' անցնէր այդ պատուհասը...

Կըրկին սեւաբաղտ որբերկի համար
Մըթնեց, խաւարեց յուսոյ արեգակ.
Նա դարձեալ անտէր, անխընամ, անճար
Դառըն ողբում է իր վերմակի տակ:

*) Արտաշիսի նոր ծծմօր անունն էր:

Անսահճ օրհասը խընայեց անգամ
Օտարի կաթը, օտարի ըստինք
Խեղճ Արտաշիսից... Ո՛հ, մահ անըզգամ,
Ո՛հ, թըշուառ վիճակ... Անգո՛ւթ ես, ե՛րկինք:

Եւ դու, արեգակ— երկընքի արքայ,
Այսպէս քանիսի՛ն եղել ես վրկայ՝
Եւ դարձեալ խաղաղ ու անդորր հոգով
Շըրջան ես կապում երկնականմարով...

Եւ դու, ո՛վ լուսին, քանի՛ այս նըման
Եղկելի անցքեր տեսել ես աչքով՝
Եւ դարձեալ մանկան՝ ու մօրն գերեզման
Լուսաւորում ես քաղցրը ժըպիտով...

Վեր կաց, անբա՛ղտ կին, վե՛ր կաց, ո՛վ Շուշան,
Սըրբէր քո ձեռքով քո որդու աչքեր.
Նորա սըրտաշարժ լաց ու կոծի ձայն
Ո՛չ ոք չէ լըսումս զի որք է՝ անտէր:

Նա չ'ունի լեզու, բայց իր շարժուածքով
Կարծես ասում է. «հեռո՛ւ օտար կին.
«Ես չե՛մ կամենում իմ սուրբ շըրթընքով
«Մըծել օտարի կաթը դառնագին:

«Օտարի կաթը չ'ունի՛ քաղցրութիւն,
«Օտարի սըրտում չիք մայրական սէր.

«Օտարի խօսքը դառն է ինչպէս թոյն
«Եւ նորա շուշը— հողմըն մահաբեր:

«Ես չե՛մ կարող իմ անմեղ երեսը
«Դընել շիկահէր դայեակի կըրծքին.
«Այնտեղ զրթոխք է եւ ամբողջ դասը
«Ձար-հոգիների խաղում են միջին...»:

— Շուշան, մի՛թէ քո կենդանի հոգին
Ձէ՛ ըզգում վիշտը թըշուառ որբւկիդ,
Մի՛թէ բըռնակալ, չար բաղտի կամքին
Պիտ՝ յանձնուի քընքուշ, սիրական որդիդ...

Խընկելի՛ հոգի, այսօր պօէտը
Շարժուած քո որդու դառն-արտասուքով՝
Խրփում է քնարին, բայց ե՛ւ քընարը
Կարծես բեռնուած է ծանրը վըշտերով.

Նա— լուկ արձագանքն է երգչի ձայնին,
Որ բարձրացել է մի այրուած սըրտից,
Որը կանչում է. «Վեր կաց, ո՛վ տիկին,
«Սըրբէր արցունքը որդուդ աչքերից»:

1878 թ. 04... 26.

Սուրբ-Խաչ Քաղաք:

ՊԱՐՈՒՆ

(ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՊՈՒՇԿԻՆԻ) .

Հալածուած գարնան ճառագայթներով՝
Նըրջակայ լերանց ձիւնը դէպի ցած
Փախչում է պըղտոր առուակներով՝
Թափվում դաշտերը—ջրերով պատած:

Եւ դեռ բնութիւնը քընից հազիւ հազ
Աչքերը բացած՝ ժրպիտով մի պարզ
Ողջունում է նրան ջինջ առաւօտը:
Կապոյտ փայլումէ պայծառ երկինքը,
Եւ դեռ թափանցիկ մօտիկ անտառքը
Կանաչին են տալիս որպէս զըմրուխտը:

Մեղուն դէպի դաշտ հարկի յետեւից
Թըռչում է իրա մոմեղէն խըցից:

Յամաքում-չորնում են հովիտները

Եւ կիսադալար երեւում բոյսերը:

Մռնչում են խաշինք. բայց եւ սոխակը—

Արգէն երգել էր լուռ գիշերները:

1874 թ. Մայիսի 3

ՂԱԼԵՍՅ,

ՀԱՐՍՏԱՆԱԼՈՒ ՆՈՐ ՄԻՋՈՑ

(ՄԱԹԷՈՍ ԱՂԱՅԻ ԿԵԱՆՔԻՅ) .

Երկուսիւնի կայարանում
Հընչեց վերջին հընչակը,
Դէպ՝ շոգեկառք ըշտապ-ըշտապ
Վազեց յոգնած ամբոխը:

«Գընան բարով՝ իմ սիրական»,
Ասաց մեր հայ մեծատուն
Եւ դէպ՝ Փարէզ (համալսարան)
Ճանպեց հատիկ իր որդուն:

«Գընա՛, որդեակ՝ Աստուած քեզ հետ»,
«Ինչք՝ գիտութիւն ըստացիր»,
«Բայց վըրէդ տաս-հազար մանէթ
«Մըսխածըս մի՞ մոռացիր...»:

Ընթացքը պէս վիշապ կատղած
Սողաց — գընաց փըշշալով:
Մեծատունը վիզը ծըռած՝
Ճանպեց նորան աչքերով:

— Հայ մարդ, գրնաց որդիդ եւ մենք
Մաղթենք բարի ճանապարհ,
Անկեղծ սրբառով նորան օրհնենք,
Որ մեծ մարդկանց ընկնի շար.
Բայց դու արի՛ ուղիղն ասա՛,
Թէ ի՞նչ մտաքով ճամպեցիր
Նորան գէպի մեծ Եւրոպա—
Դէպ՛ լուսաւոր այն երկիր.

Արդեօք այն, թէ որդիդ ուսում
Պիտի ստանայ Փարիզում
Եւ յետ-գառնայ տղգի անուն
Բարձրրացնի աշխարհում.
Թէ՞ կարծեցիր, որ նա մի օր
Կը գայ ուսման օջաղից
Եւ կը հանի իր խեղճ եղբօր
Տրգիտութեան խաւարից:

Արդեօք այն, թէ հայրենիքում
Շատ անմըշակ կան հողեր,
Բայց հողերը մըշակելու
Զրկան անխոնջ մըշակներ.
Թէ՞ ունէիր այլ նըպատակ—
Յայտնի քեզ եւ Աստըծուն,
Որ քաշուեցիր յայտնել անգամ
Քո նազելի ամուսնուն...

Հը. այնպէս չէ՞. թէ՞ գաղտնիքդ
Պիտի մընայ լոկ գաղտնիք.
Անմիտ. արի ես եւ ինքըդ,
Փըշրենք դորա սեւ կընիք:

Ուղիղ է, ես մարգարէ՛ չեմ,
Բայց լա՛ւ գիտեմ՝ մտաքինը.
Ճըշմարիտը կ'ասեմ, թէ կուզ
Գըլխիս փըշրես արշինըդ...—

Դու տեսար, որ փող կուտելու
Ել չի մընաց ճանապարհ,
Մըտածեցիր, մահկանացու,
Մի կերպ գըտնել դորա ճար:

Այդ պատճառաւ որդիդ ուսման
Ուղարկեցիր սուրբ տաճար,
Որ այնտեղից լի-լը փութա՛
Գայ հայրենի իր աշխարհ...

Յետոյ, հայ մարդ, շատ հեշտութեամբ
Կը հասնես քո հոգեւոր.
Որդուդ համար կին կը բերես
Միլիօնաւէր Լիզային:

Շատ չի անցնի—եւ Լիզայի
Պառաւ հայրը կը մեռնի,

Այն ժամանակ միլիոնները
Միայն որդե՛րդ կը հասնի...

Յետոյ՝ քէ՛ց ու զէ՛կ արա դու—
Ինչքան սիրտըդ կ'ուզենայ.
Քէ՛ցից դայրա՛յ, աստ տեսնեմ,
Աշխարհում ի՛նչ կըմընայ...

1874 թ. Յուլի 8

Դուքայ.

«Ո՞րն է ԱՄԵՆԱԾԱՆՐ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ».

Հարըստութիւնը—փառասէր մարդում,
Գեղեցկութիւնը—ինքնասէր կնոջում:

„ՄԱՐԴՈՒ ՀԱՄԱՐ Ի՞նչն է ԱՆՏԱՆԵԼԻ“.

— **Հ**արըստութիւնից—աղքատանալը,
Աղքատութիւնից—հարըստանալը.
Լեթուած՝ անըզգամ կին ունենալը,
Թերուս-շատ խօսին ընկեր դառնալը:

Սիրած նազելու աչքից ընկնելը՝
Մանաւանդ երկար առանձնութիւնը:

„ԵՐԲ Է ՈՒՐԱԽ ՄԱՐԴԸ.“

— **Ե**րբ որ ինքը իր վեճակից գոհ է,
Երբ ընտանեկան կեանքը խաղաղ է,
Երբ անտըրտունջ իր խաչը կըրում է
Եւ երբ իր պարտքը ճիշդ կատարում է:

„ԵՐԲ Է ՄԱՐԴ ԿՈՐՑՆՈՒՄ ԻՐ ԱՆՉՆԻՇԽԱ-
ՆՈՒԹԻՒՆԸ“

— **Ե**րբ որ Աստղիկան գիրկը ընկած է,
Երբ որ Բաքոսի գոգում քընած է,
Երբ խիստ զայրացած կամ բարկացած է
Եւ երբ Մորփէի աշխարհն ընկած է:

„Ո՞վ է ԱՄԵՆԱԹՇՈՒԱԹ ՄԱՐԴԸ“

— **Ո**վ որ փող ունի—ուտել չէ՛ կարում:
Ով իր կըրքերին գերի է դառնում,
Ով իր վերայ մեծ ունի համարում,
Ով իր թըշնամու ձեռքին է նայում:

„ՄԱՐԴԱԶԳԻ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՄԵԾ
ԹՇՎԱՌՈՒԹԻՒՆԸ ՈՐՆ Է“

— Խոր արմատացած տրգիտութիւնը,
ժանտախտ—վարակիչ հիւանդութիւնը,
Սովը—ընդհանուր քաղցածութիւնը
եւ արիւնահեղ, գոռ պատերազմը,

„Ի՞նչն է ԼԱՓՈՒՄ ՄԱՐԴՈՒ ՍԻՐՏԸ.“

— Կասկածը, վախը եւ ստրուկութիւնը
Մանաւանդ տըխուր, ձիգ մրտածմունքը:

Հ Ի Ն Դ Ա Ր Մ Ա Ն .

ԵՐԲ տեսնում ես հարուստները
Միտեղ խրմբուած խօսում են,
եթէ լիքն է քո ճիւղերը՝
Խօսի՛ր—խօսքըդ կընդունեն:

Բայց եթէ դու շատ բանիմաց
ես ու ճիւղդ էլ դարտակ՝
'ի զուր տեղից բերան մի՛ բաց—
Խօսքըդ կընկնի ոտքի տակ:

Հաւատիր ինձ, այս աշխարհում
Խեղք, գիտութիւն սո՛ւտ բան է.
Թէ ուզում ես մարդկանց շարքում
Նըստես՝ դու խոյ ժողովէ:

1872 թ. Յունիսի 6

Բագու:

ՆՈՐԱ ԱԼԲՈՄՈՒՄ

(ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ԲԱՅՐԸՆԻ).

ԻՆՉՊԷՍ մի մեռնող մանկան աչքերը
Կանչում է ուշքը իր մօր—վըշտալի,
Այնպէս այս երկու գունատ տողերը
Թող գըրաւէ՛ք հայացք—սիրելի,
Եւ եթէ երկար տարիներէց յետ
Կը կարգաս ի՛նչպէս տանջուել է պօէդ,
Կը յիշես ի՛նչպէս քեզ սիրել է նա,—
Յայնժամ մրտածի՛ր, որ նա էլ լըլա՛յ,
Որ սիրտը այստեղ թաղել է իրա...

1877 թ. Մայիսի 6

Մօզդուի:

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔՍ ՆՈՐԱՆ

Ես կարծում էի, թէ քեզ սիրելով՝
Շինում եմ գրախտ ինձ երջանկութեան,
Ես ի՞նչ գիտէի, թէ այս անելով՝
Բացում եմ խելճիս սառը գերեզման:

Ես միամտութեամբ ոտքըս դրեցի
Կախարդ, հիւրասէր ձեր գրեան շէմքին,
Բայց լայ՛ իմ գըլխին. անչափ սխալուեցի,
Ինքըս ինձ դրի գագաղի միջին:

Երկինքը գըցեց իմ անմեղ սրբտին
Մէջ մի վառվռուուն՝ հրեշտակային սէր.
Ես խոնարհուեցայ նորա սուրբ կամքին
Եւ քեզ սիրեցի պէս սիրոյ պատկեր:

Եւ այնուհետեւ, ո՛հ, քանի՛ անգամ
Թըրջեցի ձեռքըդ իմ արտասուներով.
Քանի՛ տըխուր երգ, անխիղճ սիրական,
Քեզ նուիրեցի խորովուած սրբտով:

Քանի՛ սրբտաշարժ, կենդանի խօսքով
Ես քեզ յայտնեցի իմ արգար սէրը:

Ո՛հ, քանի՛ անգամ իմ շրթունքներով
Համբուրեցի քո քընքուշ ձեռքերը:

Ես ի՞նչ գիտէի, թէ այս քաղցրութիւն
Քո ձեռքով շինած է մի կեղծ խընձոր.
Ես նրկատեղի—կեղեւն էր փայլուն,
Բայց մէջը—լեղի՛, թոյն, Տէր Երկնաւոր...

Ո՛հ քանի՛ անգամ իմ կարօտ բերնով
Պաշ-պըչել եմ ես քո գըլխի մազեր,
Կոյս, քանի՛ անգամ դողդոջուն ձեռքով
Յարգարել եմ շէկ նորաց գանգուրներ:

Ես ի՞նչ գիտէի, թի մի ժամ, մի օր
Նորանք պիտ՝ դառնան դըժոխային օձ.
Ես նորանց առաջ իբրեւ մեղաւոր
Խոնարհեցի իմ անմեղ պարանոց:

Եւ քեզ սիրեցի սրբազան սիրով,
Իմ մատաղ կեանքը դրի քո ձեռին,
Իսկ դու խաղացիր, անգութ, իմ կեանքով,
Մինչ մահու գրեան հասցըրիր շէմքին:

Ես գիշերները քո առողջութեան
Համար Երկինքը աղօթքով լըցի:

Որքան արտասուք սուրբ Երրորդութեան
Պատկերի առաջ չոգած թափեցի...

Բայց դու, քարասիրտ, ինչո՞ւ այդպէս շուտ
Մոռացար թըշուառ քեզ միշտ պաշտողին.
Մի՞թէ մեղք բան չէ 'ի զուր: անօգուտ
Դընել գերեզման երիտասարդին.

Ի՞նչ մեծ պարծանք է, աստ, քեզ համար
Կամենալ, ցանկալ մահը այն մարդուն,
Որ անկեղծ սիրով, միամիտ, արդար
Սիրել պաշտել է քեզ եւ քո անուն:

Կոյս, ո՞ւր է նախկին իմ առողջութիւն,
Ո՞ւր առոյգ կազմուածք, իմ գէմք, իմ երես.
Ինչո՞ւ քո ձեռքով մահու գեղնութիւն
Ցանեցիր վերաս, ախ դու, սեւերես...

Կոյս, ո՞րտեղ մընաց մեր սուրբ պայմանը,
Ո՞րտեղ քո տուած աշխարհ խոստումը.
Մի՞թէ մոռացար Աւետարանը,
Խաչը, Սեղանը եւ մեր երգումը...

Կոյս, աչքըդ գըցիր գէպի Երկինքը,
Թէ քանիցս անգամ երգուել ես Նրանով.
Սորան վրկայ է եւ արեգակը
Նա՞ եւ լուսինը իր աղօտ լուսով:

Կոյս, Զատկին խընդրողն ինձ ինքըդ չէ՞իր,
Երբ համբուրեցինք Խաչն ու Մասունքը.
Թէ՞ ծաղրածութեան առարկայ էիր
Համարում Հայի դու Սըրբութիւնքը...

Կոյս, եթէ այսքան խօսք կամ արտասուք
Թափէի անշունչ մի քարի առաջ, —
Նա կը կակղանար, կը լինէր փափուկ,
Նորան կը շարժէր իմ լաց, իմ հառաչ:

Բայց քո սիրտը քար չէ, ոչլ ապառաժ
Եւ ինքըդ կարծր չուգունէ արձան.
Նորան չէ՞ ազդում ո՞չ լաց, ո՞չ հառաչ
Եւ ո՞չ սըրտաշարժ խեղճ պօէտի ձայն...

Հոգ չէ... Կը գայ օր, երբ դու մայիսին
Մի շատ գեղեցիկ պայծառ առաւօտ
Ելի՞ր սիրածիդ հետը միասին
Կը գընաս դաշտը—կանաչ, անպարհոտ:

Երբ թըշուենների ուրախ մեղեդիք
Մեղմիկ կը հընչեն քո ականջներին,
Երբ բիւր ծաղիկներ—գոյն-գոյն, գեղեցիկ
Սիրով կը լըցնեն քո սիրտ, քո հոգին,—

Ցայնժամ դու զմայլուած այդ տեսարանով
Քո սիրածի հետ թեւ-թեւի տուած,

Մանուշակ, նարգէս ոտքի տակ տալով՝
Կը գնաս փոքրիկ անտառը՝ յոգնած.

Այնտեղ կը տեսնես երկու մեծ կաղնի —
Գըլուխները ծըռած որպէս սրգաւոր՝
Տարածում են խիստ ախորժ հովանի,
Ճօճում գազատ իրանց ալեւոր:

Նորանց մէկի վրան կը տեսնես սոխակ՝
Մի շատ տըխրալի, մեղմ երգ երգելիս,
Որպէս թէ խեղճը գարնան վերջերում
Հրաժարական է իր վարդի տալիս:

Սոխակի երգով դու ոգեւորուած՝
Կը վազես ծառի տակը նոյն ժամայն.
Այնտեղ կը գըտնես առէլը մընացած
Մի անշուք, մենակ, ոչ-մեծ գերեզման:

Քիչ մօտ կը գընաս եւ կը նըկատես,
Որ ունի վերան մի տապանագիր.
Բայց չը ծուլանաս, նորան լսել կարգես
Այնտեղ գրած կըլի յետագայ տողեր.

«Այս տապանի մէջ, ո՛վ քարասիրտ կոյս,
«Դըրածէ անբաղտ պօէպէ մարմին.
«Դու խաւարացրի՞ր նոյն կեանքի լոյս,
«Շինեցիր խեղճին սեւ հողի բաժին...»:

Եւ այնուհետեւ թէ քո աչքերից
Գէպէ պէս թափուէր «Լոյս» արտասուք,
Ես չէի՝ կարող քեզ հողի տակից
Լըսել կամ սիրել—չէ՛ր կ'անցնի քո սուգ...

1874 թ. Մայիսի 24

Գ.

Ն Ա.

Մի բանի վերայ շատ եմ զարմանում —
Որ նա սիրում է ինձ եւ—չէ սիրում,
Եւ սէրը կարծես նոյն աչքերում
Մերթ բորբոքվում է, մերթ—նըսեմանում...

Երբեմն նա, այո՛, այնքան բարի է,
Այնքան բարեսիրտ ինձ երեւում է,
Աչքերով այնպէս քաղցրը խօսում է
Եւ դէմքով ինձ սէր արտայայտում է,
Որ ես կարծում եմ թէ նա յաւիտեան
Չէ՛ տալու երբէք ինձ մոռացութեան,
Եւ մըտածում եմ, թէ երջանկութեան
Հասել եմ վերջին կատարելութեան:

Բայց երբեմն էլ, ո՛հ, նա ամենեւին
Չէ՛ նայում անգամ ինձ, իմ երեսին.

Այնքան սառնութիւն կայ դէմքի վերան,
Որ կ'ասես մարդ չէ՛, այլ քարէ արձան:

Հէնց այդ պատճառաւ ես նոյն խօսքին
Ել չեմ հաւատում եւ ոչ իմ բաղտին,
Այլ անիծում եմ նոյն, ինչ սէրը
Եւ քաղցրը ժըպիտը նոյն շրթունքին:

1877 թ. Յունիսի 8.

Մօզզօկ:

ԾԵՐՈՒՆԻ

(ՊՈՒՇԿԻՆԻՑ).

Ել չեմ ես այրուած այն սիրահարը,
Որ զարմանում էր ամբողջ աշխարհը.
Իմ գեղ գարունը նսեւ ամառը
Անցան յաւիտեան, կորաւ եւ հետքը:

Ամուր—աստղաճրդ մատաղ հասակի,
Ես քո մըտերիմ եղել եմ ծառան.
Ախ, նորից ծընուել թէ կարենայի,
Այսպէս միթէ քեզ կը ծառայէի:

1879 թ. Օգոստոսի 29

Սուրբ-խաչ Քաղար:

ԶՈՐՍ ԵՐԱՆՈՒԹԻՒՆ

(ՕՐ. Մ. ԽՕԶԱՅԵԱՆՑԻ ԱԼԲՐՄՈՒՄ).

I.

Երանի՛ նորան, որ արժանացաւ
Այն սաղարթագեղ ծառերի տակին
Բտնալ Ձեզ իրա խորին վիշտն ու ցաւ
Եւ մերկացրնել գաղտնիքը սրբոյն:

II.

Երանի՛ նորան, որ ջերմ արտասուք
Թափեց ու թըրջեց Ձեր քրնքուշ ձեռքեր.
Եւ պարզ, միամիտ սրբտով պէս մանուկ
Ձեր ծընկան վերայ փակեց իր աչքեր:

III.

Երանի՛ նորան, հազար երանի,
Որ կենսատու՛ սուրբ ազատութեան մէջ
Թափեց Ձեր առաջ խօսքեր կենդանի,
Խօսքեր—սիրալիր, կրրակոտ, անշէջ:

IV.

Երանի՛ նորան... Բայց ո՛չ. նա սխալուեց.
Նա դեռ չէր փորձել ոյժը կանացի.

Նա ինքն իր համար սեւ դագաղ շինեց,
Հաւատա՛, ես այդ շատ վաղ փորձեցի:

1877 թ. Յուլի 7.

Մօզդոկ.

ԻՄ ԳԵՂԵՑԻԿ ՎԱՐԴԻ ԱՆՄՈՒԱՆԱԼԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐ.

ԵՍ տեսայ նորան, եղբայր, գունաթափ,
Ընկած այն մահճի վերայ կիսաշունչ.
Զրկար տանջանքին ո՛չ համար, ո՛չ չափ,
Բայց նա կըրում էր—լուռ եւ անտըրտունջ:

Ես տեսայ նորան իր ձեռքը մեկնած՝
Առնում էր փունջը սուրբ հրեշտակից.
Որքա՛ն արտասուք, ողորմած Աստուած,
Թափվում էր նորա անմեղ աչքերից:

Ես տեսայ նորան իր գէմքը շրջեց
Եւ մի խիստ նուաղ, մի խիստ սրբաշարժ
Զայնիւ «ախ» քաշեց ու խոր հառաչեց
Եւ ապա՛ իր թոյլ գըլուխը թեքեց:

Ես տեսայ նորան, նա ինձ կանչում էր.
Ո՛հ, այն ի՛նչ ցաւ էր նորան տանջում էր.
Ա՛խ, նա եւ մահու դարպասի շէմքում
Ինձի մոռանալ երբէք չէ՛ր ուղում:

—Հրամայի՛ր, հոգիս,—լեզուն փակուել էր,
Բայց իր աչքերով կարծես ասում էր.
«Ընդունի՛ր վերջին իմ հրաժարական,
«Միայն չըտա՛ս ինձ դու մոռացութեան»:

Ես տեսայ նորան աչքերը փակեց.
Ա՛խ, շատ ձայն տուի.—ո՛չ, էլ չը բացեց.
Բըռնեցի ձեռքը—վա՛յ ինձ—պաղել էր,
Նրա գեղնած կուրծքը—ո՛չ, էլ զարկում չէր:

Այս ի՞նչ էր, Աստուած, մի՛թէ նա մեռաւ...
Գուցէ՛ երազ էր. ո՛չ—անհետացաւ...
Բայց դու, թըշուա՛ռ մահ, ինչո՞ւ այդպէս
շուտ

Անցար-գընացիր, ինձ է՛լ տար, անգութ:

1877 թ. Սեպտ. 8

Մօզդոկ.

ԱՆՆԱՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ.

ՊԱՐՆԱՆԱՅԻՆ զՈՒԱՐԹ օր էր,
Երկինքը պարզ, ջինջ, պայծառ
Եւ արեգը իր շողերով
Լուսաւորում էր աշխարհ:

Դ. քաղաքից դէպի հարաւ,
Դէպի փոքրիկ Խանի-Թումբ,
Կանաչագեղ դաշտի միջով
Անցնում էր մի մարդկանց խումբ:

Այդ խմբի մէջ կայի եւ ես,
Իմ սիրելի ընթերցող.
Բայց մենք ո՛ւր ենք գընում-տըխուր
Ինչո՞ւ չը կայ հարցընող...

Ընկերներըս ձեռքում բըռնած
Տանում էին մի դագաղ,
Որ գոյն-ըգգոյն ծաղիկներով
Զարդարուած էր խիստ չըքնաղ:

Ահա նորա մեռեալների
Հասան անկեանք բնակարան,

Ուր վաղօրօք ուռենու տակ
Փորուած էր մի գոռ տապան:

Դագաղը ցած դրին ձեռքից,
Միջին նընջում էր մի կոյս,
Մի գեղեցիկ, չոնաշխարհիկ,
Երկնից ցոլած կարծես լոյս...

Դա Աննա՛ն էր, սիրուն Աննան,
Նոր Աստղիկը Կովկասի.
Նորա ճակատը փայլում էր
Պէս գագաթը Մասիսի:

Նա մեռած չ'էր, հա՛յ-եղբայրներ,
Այլ նընջում էր մի առ ժամ.
Պատճառ կարո՞ղ չ'էր մերձենալ
Նորան մահըն անըզգամ...

Բայց—վա՛յ գըլխիս—ահա՛ դրին
Նորան մահու դարպասում
Եւ փափկասուն օրիորդը
Անեկ թաղուեց սեւ հողում:

—Ա՛ննայ, հոգիս, էլ ինչո՞ւ ինձ
Թողում ես այս աշխարհում.

Ո՛հ, բաղտաւոր կըլնեմ եթէ
Մի անկիւն տաս քո կողքում: —

— Ի սէր Աստրծոյ, հայ եղբայրներ
Ինձ է՛լ դրէք գերեզման.
Նա կը խըղճայ, ինձ կընդունի,
Շատ բարի է իմ Աննան...

«Յընորուած է», մարդիկ ասին,
«Կամ դիւահար պատանին...» —
Այսպիսի շատ կասկածներով
Թողին ինձ եւ հեռացին:

Իսկ ես երկար նայում էի
Աննի անլոյս խըրճըթին,
Բայց իմ դառը դըրուծիւնը
Զը շարժեց գուծ Երկընքին...

1873 թ. Մայիսի 19

Ղ.

ԱՆԿԵՂԾ ԻՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ.

Եթէ Մօսկրվան անթիւ բարիքներ —
Փող, հարըստութիւն, կեանք թափէ վրաս,

Քո կախարդ տեսքը, քո սիրուն պատկեր
Ես չեմ մոռանալ, հրաշալի Կովկաս:

Ինձ հաճելի՛ չէ տեսքը Մօսկվայի,
Ո՛չ նորա անթիւ հոյակապ տըներ.
Ինչ չէ՛ կըրաւում գեղեցիկ սեռի
Սիրոյ խօսքերը եւ կեղծ ժլպիտներ:

Նորանց երակում չըկայ ջերմ արիւն,
Պատճառ ծընունդ եմ սառ կըլիմայի.
Նորանք լըսելեն լոկ սիրոյ ա՛ռն,
Բայց «էբէ՛լ—ոչ, այդ գործ չէ Ռուսիայի:

Կո՛վկաս, քեզ վերայ-միակ երկընքից
Թափուել է սիրոյ սըրբազան սերմեր
Եւ այդ պատճառաւ քո գեղ դաշտերից
Առատ բուրում են սիրոյ բուրմունքներ:

Եւ այդ պատճառաւ, ծերունի՛ Կովկաս,
Քո հողի վերայ սընուած աղջիկներ՝
Դեռ չը զարկացած, դեռ անչափահաս —
Սըրբազան հըրով լառում են աչքեր:

Ես էլ ի՞նչ անեմ, դորանցից մէկին
Ընկել եմ անել սիրոյ ցանցի մէջ.

Հաւատա՛ն Կո՛վկաս, որ ողջ աշխարհին
Ձե՛մ փոխել նորան մինչեւ կեանքի վերջ:

1878 թ. Յուլի 20

Մօսկվայ.

Ն Ո Ր Ա Ն .

Ո՞նք մի երազ էր, այո՛ լուկ երազ,
Երբ ես քեզ տեսայ սիրալից այն տան
Մէջը ճեմելիս—այնպէ՛ս նազէնազ՝
Պէս աստուածուին սիրոյ—Վենեբան:

Ել ի՛նչ կեանք, ի՛նչ օր, ի՛նչ հանգըստութիւն
Պիտոյ է յինի այն մարդու համար,
Որը մի անգամ քո պատկեր սիրուն
Տեսաւ ու գընաց երկիրներ օտար:

Ո՛հ. քեզնից հեռի հանգիստ կեանք կամ օր
Կը տեսնեմ միայն խոր գերեզմանում,
Որտեղ իմ բունը կըլի դարեւոր
Եւ սէրը սառած իմ անշունչ կըրծքում:

1877 թ. Մայիս 7.

Եդեսիայ.

Փ Ո Ւ Շ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ մի առաւօտ—
Մայիս ամսու վերջերում—
Նա ճեմում էր ոտաբորիկ
Յողոյ պատած պարտիզում:

Ի՛նչ գեղեցիկ, փայլուն աչեր,
Սաթանըման թուխ մազեր.
Ի՛նչ կիսաբաց կուրծք մարմարիօն,
Վարդ շրթունքներ եւ թըշեր...

Յանկարծ ահա նա կանգ առաւ
Եւ ցաւալի հանեց ձայն.
«Հասէ՛ք», կանչեց, «օգնէ՛ք. ոտրս
«Մի փուշ մը տաւ... Մայրի՛կ-ջան».

Գըլխապատառ վերայ հասայ
Եւ հանեցի ոտից փուշ,
Մի պարզ համբոյր տուի ոտին,
Ընկայ գետին ես ապուշ:

«Ի՛նչ պատահեց...», հարցրրեց նա, —
Բոլորովին միամիտ:

— Կառվառէ՛, իմ անմեղ հրեշտակ,
Փռւշը ծակեց եւ իմ սիրտ:

«Ինչու պիտի», ասաց ինձ նա,
«Սիրտըդ ծակուի, խաբեիայ...»
— Ա՛խ, երբ ոտքըդ ծակուեց, հոգեակ,
Սիրտըս գտնվում էր ոտքիդ տակ,

1879 թ. Մայիսի 27

Սուրբ-Խաչ Բաղար:

ՅԻՇՈՒՄ ԵՄ

ՅԻՇՈՒՄ եմ: յիշում երբ ուշիկաքայլ
Գալիս էիր մօտս դու սիրավառեակ:
Ո՛հ, քո մըթակայծ աչքերի խորքում
Իմ բոլոր կեանքըս էի ես տեսնում:

Տեսնում եմ այժմ ես իմ առաջեւ
Քո թուխ մազերի օղերը—սեւ-սեւ՝
Բազմած-վայելուչ որպէս մի խումբ օձ
Զարդարում են քո պայծառ պարանոց:

Եւ քո ճակատըդ որպէս ծաղկածին
Մի դաշտ կաթնաբուխ, սոյն այս վայրկենին,
Իր կամարակապ, մաքուր աղեղով
Երեւում է ինձ անըսգիւտ լուսով:

Եւ քո մարմնու-ամբողջ կազմուածքը,
Քո աստուածեղէն սուրբ կերպարանքը
Կենդանանում են—ուրախ, գուարթագին
Իմ յիշուլութեան մէջը վերըստին...

Ո՛հ, վարդակարմիր քո շրթունքներից
Թափուած սրբտառուչ խօսքեր կենսալից
Եւ այն հոգելից հընչիւնք քո ձայնի
Զարթնում են իմ մէջ, սիրակա՛ն հոգի...

1880 թ. Մայիսի 15.

Սուրբ-Խաչ Բաղար:

ՕՐԻՈՐԴ Վ. Ա. ԵԱՆՅԻՆ

(II)

ԿԵԱՆՔԻ գարնան գեղ-ծաղկի կոկոնում
Նընջում է սէրը պէս մանուկ սիրուն,
Իսկ անգուլթ Մօրփէն նըստած ոլիմպում՝
Փըչում է նորա աչքին ծանրը քուն:

Նազելի, արի, ըսթափիր նորան
Քանի չէ՛ հասել կեանքի աշունքը.
Ծաղիկը շուտով կը թառմի՝ եւ միշտ
Քընած կը մընայ մեզ համար սէրը:

Եւ յիրաւ, մի՛ թէ երբէք մեր վերան
Պիտի չը նայէ-քաղցրը Վեներան,
Մի՛ թէ յաւիտեան պիտ' մընայ խաւար,
Մըռայլ մեր սիրոյ սուրբ երկնակամար...

Եւ մի՛ թէ երբէք ջինջ առաւօտը
Պիտ' չը գըտնէ մեզ սիրոյ գըգուանքում.
Հոգեակ իմ, ինչո՞ւ գիշերուայ ժամը
Զէ՛ տեսել մեզի մին մընի գըրկում:

Ինչո՞ւ մարմարիոն քո բազկի վերայ
Վաստակած գըլուխս չ'առաւ իր հանգիստ,
Եւ, ինչո՞ւ չ'եղեւ այս բանին վրկայ
Լուռ խընդութիւնը, խաւարը անվիշտ:

Ինչո՞ւ քո քաղցրը, կըրակոտ խօսքը
Զ'հասաւ տկանջիւս հանգըստեան ժամում,
Ա՛խ, ինչո՞ւ մեղմիկ քո քըչ-փըչանքը
Զը հընչեց ինձ քնի փափուկ դարպասում...

Վառվառ է՛, հոգիս, գո՛նէ մեզ խըղճայ.
Մենք թառամում ենք: Ժամանակ կը գայ—

Եւ այն հեռո՛ւ չէ՛, երբ ծաղկի նըման
Կը չորանանք, կը կորչե՛նք յաւիտեան...

Հագիր դու սիրոյ կարմիր ըզգեստը՝
Ե՛կ որ ողջունենք կեանքի գարունքին.
Թող ուրախանայ մանուկ նրոսը
Եւ տանէ ուրախ լուր իր մայրիկին.

Թո՛ղ Ափրօզիդան սիրոյ ծաղկունքներ
Ցանէ՛ զարգարէ կեանքի դըրախտը,
Թո՛ղ այդ գըրախտի ծաղկանց-կենսաբեր—
Ցողից վերստին ծընանի սէրը.

Թո՛ղ տուր նա աճի զուարթ հասակով
Պէս սրմաւենի— առոյգ, աննըման,
Թո՛ղ տուր նա վառուի սըրբազան կրակով՝
Իր կայծը թափէ մեր սըրտի վերան...

1879 թ. Նոյ. 30.

Սուրբ-Խաչ Քաղար:

ՕՐ. Վ. Ա.....ԵԱՆՅԻՆ.

III

ՔԱՆԻ սեւորակ քո ջինջ աչքերում
Վառվում է սիրոյ կայծը սրբազան—
Սիրի՛ր: Հաւատա՛ ինձ, ապագայում
Նա սառչելու է որպէս գերեզման...

ԲՈՊԷԱԿԱՆ ՄԻԻԹԱՐՈՒԹԻԻՆ.

ԱՄԲՈՂՁ երեք օր կարօտ մընայցած՝
Հիւանդ նըստած եմ լուսամբոյ մօտ.
Աչքըս չըրջում եմ արագ ձախ ու աջ՝
Ոչինչ չէ՛ բուժում իմ սիրտը ցաւոտ:

Տըխո՛ւր, յուսահատ ես իմ հայացքը
Գըցում եմ ուղիղ դէպի Մեծ-փողոց՝
Եւ ի՛նչ, ո՛վ Աստուած, իմ ցաւը, վիշտը
Յանկարծ անցնում է... բայց մի թոյլ հոգոց
Յաջորդում է սրան, ու յետոյ կըրկին
Թըռչում խաբուսիկ րոպէն այն ուրախ.

Դարձեալ տիրում է իմ անմեղ սրբտին
Նոյն տըխուր վիշտը, նոյն ցաւը. աւանդ...

Վառվառէ, հոգիս, սա դո՛ւ էիր, որ
Իբրեւ մի կայծակ փայլեցիր աչքիս
Ու անհետացար եւ մի ծանր ու խոր
Վիրաւորեցիր սիրտըս եւ հոգիս...

1879 թ. Մայիսի 7

Սուրբ-Խաչ Բաղդար.

ՀԱՅՅՈՒԱՄ

ՔՈ լուսապայծառ պատկերի առաջ
Ձոգած՝ ողբում եմ, Մայր-Աստուածածին
Եւ դառն ու աղի արցունք իմ աչաց
Առատ թափում եմ Քո ոտքի տակին:

Ես իմ աղօթքով ո՛չ հարըստութիւն,
Ո՛չ բաղտ, մեծութիւն, ո՛չ իշխանութիւն.
Ո՛չ իմ բազմաթիւ մեղքիս թողութիւն
Եւ ո՛չ էլ հոգուս իմ արքայութիւն
Հայցում եմ Քեզնից, — այլ հատիկ միկ կոյս
Անմեղ, անարատ յանձնում եմ ես Քեզ.

Նա՛ է պօէտի միակ վերջին յոյս,
Եւ եթէ Միածին Որդիդ կը սիրես՝

Պահիր նրան անփորձ Գո թեւի տակին,
Թափիր Դու նորա մատղահաս գրչին
Գո սուրբ օրհնութիւնն—կրկին եւ կրկին.

Գըցիր նրա սիրտը մի երկնային սէր,
Որի կրրակը երբէք չը մարէր,
Որը լուսաբեր աստղիցն էլ պայծառ
Փայլէր-գեղեցիկ, մընար մըշտավառ:

Բայց եթէ անգութ Բաղտը պօտին
Հալածէր դէպի օտար երկիրներ,
Տճւր համբերութիւն, Մայր-Աստուածածին,
Իմ հըրեշտակին, որ ինձ ըսպասէր:

1878 թ. Փետ. 9

Մօզդօկ.

ԿԱՐՊ ԻԻԱՆԻՉ ԱՐՁԻՄԱՆԵԱՆՅԻՆ.

Ձե՛ր պատից կախած ութ պատկերներից՝
Եօթը գորաւել չը կարացան ինձ,
Միայն նորանցից Դէլ սըրտիս մէջ
Վառեց մի կրրակ—մըշտավառ, անշէջ:

Լուսանդկարը չէ՛ տուել նորան
Այն քընքուշ դէմքը աստուածանման,
Այլ բընութիւնը ի՛նքն է զարգարել
Ի՛նքն է այդ հոգի—ն գեղեցկացըրել:

Նորա սեւորակ վառ աչիկները,
Նորա գըրաւիչ դէմքի գըծերը—
Տես—մինչեւ անգամ եւ պատկերումը
Պահում են իրանց կենդանութիւնը:

Ժըպիտը նորա շըրթունքի վերան
Նըստած է որպէս մի համեստ շուշան,
Եւ, կարծես թէ՛ նա մի վայրկենից յետ՝
Պիտ՝ քընքըշաբար խօսակցի քեզ հետ...

Հէնց այդ պատճառաւ խըղճուկ երգիչը
Այսօր շարժում է իր թոյլ գըրիչը՝
Ասելով՝ «Ա. իմ մըտերիմ՝ ընկեր,
«Հասցը՛ր ինձ հոգի կենդանի պատկեր...»
Թէ՛ մըխիթարիչ չ'ունես պատասխան՝
Այսօրուանից իսկ փորիր ինձ տապան:

1879 թ. Սեպ. 8.

Ստանբուլի մէջ.

ԻՄ ԱՌՀԱԻԱՏՁԵԱՆ

Երգովո՞ւմ եմ Արարչի անմահ անունով,
Բերում եմ վրկայ լուսին, արեգակ,
Որ գեռ ո՛չ ոքին այնպէս ջերմ սիրով
Ձե՛մ սիրել երբէք, ինչպէս քեզ, հոգեակ:

Ներգուեմ երկընքի զօրութիւններով,
Կ'երգուեմ անգամ քո կախարդ աչքերով,
Որ գեռ ո՛չ մի կոյս ամբողջ Կովկասում
Ձէ՛ վառած որպէս կրակ իմ սրբտում:

Այո՛ գուցէ կախարդ ես—ինձ կապեցիր,
Քուռն, հանգրստութիւն ինձնից խլեցիր.
Ո՛հ, իմ սրբտի մէջ քո գրաւիչ խօսքեր
Քանի՛ սրբազան թափեցին Կայծեր...

Տրխո՛ւր է: գիտե՞ս, գրծուար այն վայրկեան
Երբ մանուկ Երոսն—որգին Աստղիկան—
Ուզղած իրա սուր նետըն ու օխեակ՝
Որսում է մի խեղճ, մի անմեղ էակ...

Աչ...թէ աստուածներ-ը ոլիմպոսից
Թափեն իմ գրլխին շանթեր հըրալից,

Եթէ գուցէ ինքըդ նախատես խեղճիս՝
Պիտի մինչեւ մահ սիրեմ քեզ, հոգիս:

Րուսաստանի ինձ չէ՛ գրաւում փառքը
Եւ ոչ Մամոնի ոսկեզօծ կառքը.
Ես Հայաստանի՛ եմ թըշուառներից,
Ես սիրել գիտեմ—զըրկուած աշխարհից:

Ինձ չէ՛ գըրաւում արծաթն ու ոսկին
Եւ ոչ թըթուած դէմքը հարըստին.
Ինձ համար թանգ է քո գըլխի մի մազ՝
Քան բոլոր աշխարհ—այս լա՛ւ գիտենաս...

Նայի՛ր, երգվում եմ կըրկին քո գըլխով
Եւ քո աչքերի սըրբազան կրակով,
Որ քեզ պիտ' սիրեմ մինչեւ գերեզման
Այնպէս, որ երբէք չ'եմ սիրել մի բան:

Այս է իմ սէրը...բայց գուցէ նախատի՛ր,
Իմ արտասուհքով գուցէ ուրախացի՛ր.
Հոգ չէ, Տէր ընդքեզ. ես նախատանաց
Վա՛ղ—մանկութիւնից եմ ընտելացած...

1877 թ. Մայիսի 9.

Մօզզօկ.

ՅԻՇՈՒՄ ԵՍ.

ՅԻՇՈՒՄ ես, հոգիս, դու այն գիշերը,
երբ նրստած էինք խաղողի այգում:
Ոհ. քո ամեն մի բառն ու խօսքերը
Անջինջ մընում են իմ մըտքի խորքում...

Ես երգում էի կըրակոտ երգեր,
Թափում էի ծանր բեռնուած իմ սիրտը,
Իսկ դու գէպի ինձ լարած քո աչքեր՝
Զըննում էիր իմ գունաթափ գէմքը:

Ախ. այն կըրակուած աչքերը, հոգի,
Յայտնում էին ինձ բոլոր քո սըրտի
Յանկութիւնները աւելի՛ պայծառ,
Քան կարէ յայտնել մի լեզու ճարտար:

Ախ, այն աչքերով Վառվառէ՛, հոգեակ,
Խօսելով հետքս սիրոյ սուրբ հրեշտակ՝
Խոստանում էր ինձ կարծես նոյն ժամայն
Այն երջանկութիւնն յաւիտենական:

Որ մենք միասին ազատ, համարձակ—
Որպէս երկու հատ անմեղ հրեշտակ—

Պիտի վայելենք ո՛չ այս աշխարհում—
Այլ վերին խաղաղ օթեւաններում...

Ախ, այն կախարդիչ սեւ-սեւ աչքերում—
Ինչպէս մի մաքուր, ջինջ, պարզ հաեւում—
Պարզ երեւում էր սըրտիդ պատկերը,
Վառվում, բորբոքվում սրբազան սէրը:

Հոգեակ իմ, հրաշէկ այն աչիկներում
Որքան գաղտնիքներ էի ես կարգում...
Ձէ՛... այն չէր աչքեր, այլ էր քո հոգուն
Եւ դիւթուած սըրտիդ կենդանի լեզուն...

1879 թ. Յուլի 3

Սուրբ-Խաչ Քաղաք:

ԶՄԵՐԱՅԻՆ ԳԻՇԵՐ.

ԵՍ գիշեր է: Հիւսիսիցը ձիւնախառն սառ
քամին
Մերթ վայրենի գաղանի պէս գոռում գոչում է
ուժգին,
Մերթ—պէս օտար ճանապարհորդ—ցըրտից սա-
ռած—փոյթ ընդ փոյթ,
Որպէս թէ իր ձեռափայտով ծեծում է տան լու-
սամուտ:

Պառաւ պապը տարածել է արծաթապատ իր թւեր
եւ միակերպ ծածկել սար, ձոր, անտառ, դաշտեր
և տըներ:

Դուրսը տեսար մի ընկեր մէջ մի ձիւնի սար գոյացաւ,
Մէկ էլ քամին օձապըտոյտ փըշեց—կըրկին չը-
քացաւ:

Ձիւնի փոշին աչք է ծակում, առատ թափում
արտասուք:

Ցուրտը—սաստիկ, անտանելի չորցընում է բերնում
թուք:

Բակի շունը մերթ խաղալով՝ ձիւնոտում է իր մոշ-
տակ:

Մերթ վազում է կընծին տալով՝ պատըսպարվում
սրահի տակ:

Արաղաղը մոռացել է սովորական իրա երգ,
Հաւարընում կուճ է եկել՝ հաւքած գըլխին իր
ընկերք:

Ո՛չ մարդու ձայն, ո՛չ կենդանու. մինչ շան հաջոց
չէ՛ լըսվում:

Կըրակ, ճըրագ, լուսի նըշոյլ—ո՛չ մի տեղ չէ՛ երե-
ւում:

Ամենայն մարդ—փոքրը և մեծ մըտածեն տաք ան-
կողին:

Նորապըսակ տըղամարդը գըրկել է իր նաղելին,
Ամենեքեանն էլ մըտել են Մորփէոսի կախարդ գիրք,
Մարդկանց հետը քընել է և ամեն տեսակ նախանձ,
կիրք...

Միայն գիւղի վերին մասնում—եկեղեցու առընթեր
Նորեկ, փափուկ ձիւնի վերայ սկին է տամ՝ մի ըս-
տուեր:

Արդեօք ո՞վ է այդ թըշուառը... գուցէ ծանպորդ է
օտար:

Որ շեղուելով ճանապարհից՝ եղել է անդ ցըրտահար:

Քէ՞ մի տաճիկ աւազակ է, եկել է կէս գիշերին
Կողոպտելու եկեղեցին ցըրտի սաստիկ այդ ժամին...
Բի՛շ մօ՛տ գընանք. նա չոգած է Աստուածամօր

դըրան քով
եւ ձեռքերով բազկատարած աղօթում է՝ ող-
բալով:

Նա ո՛չ կօշիկ ունի ոտին և ոչ գըլխարկ իր գըլխին,
Միայն նորա մերկութիւնը ծածկում է սև վերարկուն
Գանգըրահեր նորա գըլխին ձիւն է նըստել երեք
մատ:

Որ հալուելով՝ արտասուների հետ թափվում է—
կաթէկաթ:

Բայց ծընկները չեն երևում—խոր խըրուած են
ձիւնի մէջ:

Որ անխընայ կուտակուելով՝ հասել է մինչ գօտ-
կամէջ:

Իսկ այս քէհիլ տըղամարդի ի՛նչ է արդեօք խընդ-
րածը:

Ահա այստեղ ես գընում եմ իմ ականջով լըսածը.

«Ո՛վ Տիրամայր, քանի՜ այսպէս անցուցել եմ գի-
շերներ, »

«Քանի՜ անգամ իմ արցունքով թացել իմ այս
սուրբ քարեր »

«Քանի՜ անգամ ես մերկ, բոբիկ մոլթից մինչև
առաւօտ »

«Զմրան բուքին աղօթել եմ՝ չոգած այս սուրբ
դրան մօտ... »

«Աստուածամայր, կոյս խընկելի՛, հերիք իմացալ,
իմ տանջանք, »

«Մի՛թէ քո սուրբ աթոռին չէ հասնում իմ ձայն,
աղաչանք, »

«Աստուածամայր, աներևոյթ մի՛թէ չէիր Դու վրկայ
«Երբ միասին քո տաճարում ուխտ ուխտեցինք
է՞ս եւ նա... »

«Թէ՞ չըհասաւ սուրբ ականջիդ, երբ ջերմեռանդ
մենք սրբառով »

«Խաչ ու սեղան համբուրեցինք, երգուեցինք քո
անունով, »

«Որ աշխարհում ո՛չ բաղտ, ո՛չ փող չենք ցան-
կանում բընաւին, »

«Այլ միմիայն արժանանանք հասնել մեր սուրբ
մայրունքի... »

«Մի՛թէ քեզ, Մայր, չը կանչեցինք մեզ օգնական
այս գործում, »

«Ո՛ւր է. մի՛թէ օգնութիւնըդ պիտո՞ հասնի մեզ
դագաղում... »

«Մենք մինչ այսօր չըփոխեցինք մեր ուխտ, պայ-
ման, մեր երգում, »

«Աստ չըհասանք մեր մայրունքի, գէ՛թ հասանենք
երկընթում... »

Երիտասարդ տղամարդը վերջացըրաւ իր աղօթ,
Անյայտացաւ: Կէս ժամից յետ՝ քընից զարթնեց
առաւօտ »

1879 թ. Օգոստոսի 19

Սուրբ-խաչ քաղաք.

ԻՄ ՎԱՐԳԻՆ

Քո տարիներից իւրաքանչիւրին
«Եթէ ընդունենք իբրեւ մի մի հիւր՝
Այո՛, քո ամբողջ կեանքում կ'ունենաս
Դորանցից «-Ես-ն» կամ գուցէ հարե՛ր.

Եւ ամեն մէկը քո այդ հիւրերից
Կը բերի քեզ նոր վիշտ՝ կամ խընդութիւն.
Վերջինն-էլ—գիտես—իբրեւ մի դահիճ
Բերելու է քեզ մահ կամ ծանրը բուն.
Բայց իմ խընդիւրբը այս է լոկ, հոգի,
Երբ ասանք-Ես-ն-դ հիւրըն գայ քեզ մօտ՝

Մի ճոխ, փառահեղ երկոյթ սարքի
Սիրոյդ սեղանից, կանչիր ինձ քո մօտ:

1879 թ. Մայիս 16

Սուրբ Դիմիտրի,

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ.

(ՆՄԱՆՈՒԹԻՒՆ Յ. ԲՈՒՉՈՒԲԵԳԵԱՆՅԻ)

ՓԱԽԻՐ դու հեռու, հեռու նորանից,
Որի շրթունքի վերայ ոչ ժպիտ,
Ո՛չ անմեղութեան գոյնը վարդալից
Չէ՛ խաղում երբեք—քան է նորա սիրտ.

Որի ահարկու աչքերի խորքում
Կարմիր ու դեղին եւ կապոյտ գոյնով
Խաղում է անվերջ կեղծաւորութիւն.
Որ դժնատեսիլ՝ թրթուած դէմքով

Սորա կամ նորա վերայ համարձակ
Բեւեռում է իր զրգուելի հայեացք,
Կամ յանկարծ հրպարտ աչքերն ոլորում
Ու անբաւական երեսը շրջում...

Փախիր նորանից. նա մի չար օձ է.
Նորանում սիրտը վաղճւց մեռած է.
Շողոքորթութեամբ վաճ՝ թէ՛ անագան
Նա քեզ կը փորի սառը գերեզման...

Նա քեզ կը խաբէ, լըսի՛ր իմ խօսքին.
Մի՛ զոհիր անձըդ դու այն թըշվառին.
Նորա սէրն է հուր անշէջ դժոխքի—
Հոգիդ, մարմինըդ իսպառ կը լափի:

Գընա՛ դու սիրի՛ր այն սիրակարօտ,
Անմեղ աղջրկան, որն ունի ամօթ
Եւ, սիրտն է խաղաղ, անբիծ, լիսսէր
Պէս գարնանային լուսինկայ գիշեր.

Որի շրթունքի վերայ յաւիտեան
Բացուած է լինում մի վարդ աննրման,
Իսկ աչքերումը—իր աստուածեղէն
Կախարդութեամբ միշտ կայ սէր լուսեղէն:

Որի դէմքի վրայ մի գերբընական
Վառ փայլողութեամբ—պէս գոյնը նրռան—
Խաղում է անմեղ պարկեշտութիւնը,
Այրում կուսական քընքուշ այտերը.

Եւ որի ըզգօն ճակատի շրջող,
Որպէ՛ս Մասինը—պատած ամպերով,

Մի կամարաձեւ աղեղի նըման
Շըկ-շէկ մազերը կտպում են շըրջան:

Ա՛ռ նորան, ե՛ղբայր, թէեւ է աղքատ
եւ հարսնաբաժինք—ոսկի կամ արծաթ
Չէ՛ բերել իր հետ (Քամու բերածը՝
Քամին կը տանի—կ'ասէ առածը):

Ա՛ռ նորան, թէեւ նուագածութիւն,
Գաղղիներէն խօսելն, օտարի լեզուն
Ձը գիտէ երբեք եւ սիրապատում
Քաղցրրիկ վէպերով չէ՛ անցուցանում

Իրա ժամանակ,
Այլ է ընդունակ
Նա տընտեսութեան բոլոր գործերում,
Տունը կարող է միշտ պահել կարգում:
Եւ բա՛ւ էր, եթէ մայրենի լեզուն
Իմանար մաքուր, սիրէր ազգութիւն:

1875 թ. Դարբ. 3

Խոստաւ-Խլրթ:

Է՛-ԼԻ ՆՈՐԱՆ.

ՎԵՐՔԸՍ շատ է, նազելի, ե՛կ մի՛ թող ան-
ճար այսպէս:

Յաւոտ ու տըկար այսպէս.
Ի՛ սէր Աստծոյ, դու մի՛ տանջիր, ո՛հ, ինձ
չարաչար այսպէս
Յաւետ ու երկար այսպէս:

Ա՛ջըդ բաց-տես՝ օրըստօրէ հալվում եմ,
մաշվում:

Սիրտըս այրվում, խաշվում:
Մի՛թէ մեղք չե՛մ, որ թողնում ես անտէր,
վըշտահար այսպէս,
Հիւանդ, ցաւակար այսպէս:

Ռանգըս պատի գոյն է դառել, սիրտըս—
գերեզման:

Ո՛հ, ցաւս է անդարման.
Մինչ ե՛րբ—ասա՛—պիտի մընամ ես անմը-
խիթար այսպէս:

Անբաղոտ, անսաւոր այսպէս:

ՎԵՐՋԻՆ ժամըս մօտ է, ե՛կ-կարի իմ պատանը
եւ դի՛ր ինձ գերեզմանը:

Յետոյ ան հող—+՝ ձեռքովդ՝ ցանի՛ր վը-
րաս, եա՛ր, այսպէս,
Թո՛ղ բընե՛մ չատ դար այսպէս:

Արտասուքդ թող թաց չ'անի տապանիս
հողը:

Ո՛հ, ի՛նչ կ'ասի լըսողը:
Միմիայն, աղջիկ, չը մոռանան—ինձ յիշի՛ր
երկար այսպէս:
Ամիսներ հազար այսպէս:

Ռուսաստանի սառ հողի տակ ես կը բընեմ
միշտ:

Այնտեղ չըկայ ցաւ ու վիշտ:
Բայց խեղճ երգչի պառաւ մօրը, եա՛ր, գը-
րես խաբար այսպէս,
Որ մեռա՛ն թըշուառ այսպէս...

1879 թ. Մարտի 8.

Սուրբ-խաչ քաղաք.

ՊԱՆԴՈՒԽՍ ՍՈՒԱԿԻՆ.

ԱՏԱԲԱՂՏ սոխակ, աչքի՛ լոյս, հո՛գիս,
Գարնան ըսկըղբում ինչո՞ւ դու պարտէզ

Մըտնելուդ ժամին մաշում ես խեղճի՛Ս
Գո աղետալի երգով—սըրտակէզ:

Այն ծաղկանոցում, սոխակ, ինձ ասա՛,
Ի՞նչն է մաշում քո սիրտը վըշտահար
Մի՛թէ վարդենու գեղ թըփի վեր Ա.
Կեանքը տըխուր է անցնում քեզ համար:

Ռուսաստանի թէ՞ մերկ եւ տերեւթափ
Այգում չես գըտնում սիրոյդ առարկան,
Թէ՞ պարտիզպանը անգութ է այնչափ,
Որ քեզնից ծածկում է վարդն աննրման:

Վառ-վառ կայծերով, ի գուր—հաւատա՛,
Ի գո՛ւր ես խաշում քո քընքուշ սըրտիկ:
Լաւ այն է՝ թըռի՛ր դէպի Արմենի՛Ա.
Անդ մըշտագարուն ծաղկում է վարդիկ:

Այս անկեանք երկրում քեզ նըման հազար
Մարդիկ կան ողբող իրանց վիճակը:
Մանուկ երոսը եւ քո՛ ցաւակա՛ր
Սըրտիդ խըփել է սիրոյ օխեակը:

Ռազմել, կըռուել միթէ կարելի՞
է, ասա՛ տեսնեմ, քեզ խաւարի դէմ
Այստեղ բըռնակալ մարդիկ—անհոգի
Չորացընում են սիրոյ ճոխ եղեմ:

Չըրատար սոխակ, հեռացիր-գընա.
Դու քո երգերով այս քարէ մարդոց
Սիրտը չե՛ս կարող շարժել. հաւատ՛Ա,
Դռքա մարդիկ չեն, այլ թունաւոր օձ:

Այստեղ քարասիրտ վաճառականին
Ձէ գրաւում երբէք սըրբազան սէրը.
Նա երկըրպագուն է Մամոնայի՛ն
Ոսկին կապել է նորա աչքերը:

Նորան չէ՛ շարժում իր զաւակի լաց
Եւ ո՛չ եղկելի նորա աղաչանք.
Աղջիկը այստեղ վարդ է-նորաբայ
Պիտի թառամի—ըստի—է և անկէանէ:

1879 թ. Մարտի 29

Սուրբ-Խաչ Քաղաք:

ՕՐ. Վ. ԱՐՁԻՄԱՆԵԱՆՑԻՆ.

(IV.)

Եթէ՛ յաղթելով բիւր արգելքների՛
Ամսէն մէկ անգամ տեսնում եմ քեզի,—
Լեզուս, խելք-միտքըս կորցըրած, հոգիս,
Ապշած քեզ վերայ մրտիկ եմ տալիս:

Բայց եթէ ամբողջ մի քանի տարի
Գիշեր եւ ցերեկ մօտրդ լինէի,—
Կարծում ես, դու, թէ կարո՞ղ եմ ական
Թօթափելու չափ չը նայել քո վրան...

1880 թ. ապրիլ 9

Սուրբ-Խաչ Քաղաք:

Վ.Ա.ԴԻՍ.

Վ.Ա.ՐՍԱԳԵՂ գլխաւոր փայլ է արձակում
Մետաքսից կապած մի փընջակի պէս,
Սիրոյ կըրակը քո աչիկներում
Անվերջ վառվում է արեգակի պէս:

Ամթխած դէմքդ որպէս հայելի
Սըրտիդ գաղտնիքը պարզ ցոյց է տալիս.
Գոյնը գըրաւիչ, քընքուշ, հաճելի.
Ա՛չք է շլացընում անգին ակի պէս:

Ռուսաստանի ջինջ, պարզ երկընքի տակ
Գեռ չէ՛ ծընուել կոյս քեզ պէս գեղունակ.
Դըրախտըն է՛լ չ'ունէր մարդ կամ հրեշտակ
Իբրեւ քեզ—միամիտ, աղաւնեակի պէս:

Վաղորդեան ցողը գարնան ըսկրզբում
Քեզ պէս գեղ վարդ չէ՛ թըրջել պարտիզում,
Դեռ Իտալական պայծառ երկընքում
Ձէ փայլել լուսինի՛ս Լուսնի՛ս պէս:

Արեւելքումը քեզ պէս գեղադէմ
Աղջիկ չէ՛ մըտել Սուլթանի հարեմ
Դեռ չէ՛ սընուցել տիրատուկ եղեմ
Մի չըքնաղ հասակ քո հասակի պէս:

Պազմական ահեղ, արիւնոտ դաշտում
Դեռ ո՛չ մի թըշուառ զինուորի սըրտում
Ձէ՛ ցըցուել նետ պէս խեղճ երգչիս կրթքում
Ցըցուած քո սիրոյ սուր նըշտրակի պէս:

1879 թ. Յուլի 21

Սուրբ-խաչ քաղաք.

Դ Ա Ր Զ

ՏԱՆՈՎ, ինձ շնորհ բանաստեղծական՝
Երկինքը անէծք թափեց իմ զըխին,
Սուրբ ճշմարտութեան կարգելով պաշտպան՝
Ծաղըն եւ ծանակ շինեց աշխարհին:

Եւ այսուհետեւ առած իմ քընար՝
Պիտ՝ երգեմ առաջ, եւ, ճշմարտութեան,
Ինձ կը հալածէ, կ'ատէ չար աշխարհ—
Ահա միակ իմ վարձադրութիւն:

Եւ այսուհետեւ ամբողջ աշխարհին
Պիտ՝ պատմեմ կեդոտ մարդկանց չար գործեր
Գիտեմ—կըղընեն իմ թըշուառ զըխին
Զար ձեռքով հիւսած փըշոյ պըսակներ...

Ապօրձ, թող տուր, ես հրաժարվում եմ
Այդ զըշուարակիր, ծանր պաշտօնից,
Ես այսօրուանից ահա փախչում եմ
Արդարութիւնից, ճշմարտութիւնից,

Ես չեմ կամենում իմ երիտասարդ
Կեանքը զոհ բերել Երկրների օգտին,
Այլ պիտ' հոտոտեմ հանապազ պէս վարդ
Ոսկեզօծ ոտքը սուրբ Մամոնային:

Ես էլ այլոց պէս պիտ' սրտեմ, կեղծեմ,
Ոտնակոխ առնեմ միշտ ճրջմարտութիւն.
Իմ օգտի համար այլոց հոր փորեմ,—
Թող հեռո՛ւ փախչի ինձնից սրբրութիւն:

Ես իբրեւ անդամ հասարակութեան՝
Պիտ' օրինակին նորա հետեւեմ,
Զի կամիմ հասնել բազմաւորութեան,
Փառքի, պարծանքի—եւ էլ կ'աշխատեմ...

Երկինք, հեռո՛ւ տար ինձանից այդ շնորհ,—
Կոյր են ամենը—ես էլ կըլեմ Կոյր.
Ես պիտի սիրեմ կեանքը-երկրաւոր,
Իմ սիրելոյս տամ—Յուզայի համբոյր:

Տնւր-տուր այդ շնորհն մի այլ մեծ մարդու,
Որը ունենար մեծահոգութիւն,
Եւ այնուհետեւ թող մըրով ծեփէր
Նա իմ նակատը—որպէս միւսերուն...

1878 թ. Եւրոպ. 24.

Մօսկվայ.

Հրապարակաւ լայտնում եմ իմ խորին շնոր-
հակալութիւնը հետեւեալ պարոններին:

Ստաւրօպօլ—Գէորգ քահանայ Զախարեան-
ցին: Նալչիկ—Մայիօր Գերասիմ Սրարատեան-
ցին և պ. Յակոբ Ռամազանեանցին: Գանձակ—
Ներսէս Տէր Ներսէսեանցին: Բատալպաշինսկ
և Գէօրգեւսկ—Սարգիս աւագ քահանայ Տէր
Պողոսեանցին: Տփլիս—Յովհաննէս Սիմէօն-
եան Ստեփանեանցին: Եղեսեայ-գիւղ—դպ. Կա-
րապետ Վլասեանցին: Մօսկվայ—Յարութիւն
քահանայ Պօպովեանցին: Բօստօվ—Յակոբ
Մաղաքեանցին: Մայէգօպ—Նիկողայոս Յով-
հաննիսեան Ալիխանեանցին. և Սուրբ-խաչ քա-
ղաք—Կարպ Իւանիչ Արզիմանեանցին:

Որոնք չը խնայեցին իրանց թանգազին ժա-
մերից մի երկուսը նուիրել և գրքիս համար
բաժանորդներ գտնել:

Հէդ. Սիւէօն Սափարեանց:



Ա Ջ Դ.



Որովհետեւ անյաջող հանգամանքները և
մանաւանդ մի քանի քաղաքներից մեր բաժանոր-
դագրութեան թերթերի ուշ ստանալը ստիպեցին
մեզ յետաձգել «Եւ ել իմ սաղի» տպագրութիւ-
նը, ուստի հրապարակաւ ներողութիւն ենք խնդ-
րում ա՛յն պարոններից, որոնք, ըստ մեր յայտա-
րարութեան, սպասում էին «նորան» ստանալու
1881 թուականում:

ՀԷԳ. ՍԷՆՆ ՍԻՐԷԼԵԳ:

ԵՍ ԷԼ ԻՄ ՍԱԶԻ

Ի ՀԱՏՈՐԻ.

ԲԱՐԵՐԱՐԱՑ. ՅՈՒՅԱԿԸ

ԲԱՐԵՐԱՐՔ

ԳՐԳՈՅՍ

ԲԱՐԵՐԱՐԱՅ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՒ
ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԸ

№

ՍՏԱՒՐՕՊՈՒԻՑ

Գրանի

Դրամ

1 Գէորգ քաշ. Զախարեանց . 10 10

ՏՓԻՍԻՑ

1 Տիկին Նատալիայ Սափարեանց*) 10 10

2 Տիկին Սոփիայ Բ. Ստեփանեանց **). 10 10

*)Մի օրինակ նուիրում է Տփլիսու Գայեանեան օր. դպրանոցին. Մի օրինակ «Քրէօբելեան» օր. մանկական պարտիզին Հաւլաբարու: Մի օրինակ իր բարեկամ տիկին Զաւլարդ Գաւթեան Խան. դամիրեանցին

**)Մի օրինակ նուիրում է Տփլիսու Յովնանեան օր. վարժարանին: Մի օրինակ Շուշու օրիորդակ. ուսումնարանին:

ԲՕՍՏՕՎԻՑ.

1 Յակոբ Մաղաքեան . . . 10 10

ՍԲ-ԽԱԶ ՔԱՂԱՔԻՑ.

1 Յովսէփ Արզիմանեանց. . . 1 25

2 Գէորգ քաջանայ Աղայեանց . 10 10

3 Վարդան Քովխայեանց. . . 10 10

4 Զախ. Աֆանաս. Քովխայեանց. 10 10

ԲԱԳՈՒԻՑ.

1 Ա. Ա....եանց . . . 10 10

Մի օր. նուիրում է Մոսկուայի
ուսանողներին գրադարանին

Մի օր. Թավրիզու գրադարանին

Մի օր. Երևան-Արտ. Թաղէոսեանցին

Մի օր. Թավրիզ-Դաւիթ Ապրեսեանցին

Մի օր. Թիֆլիսի Հայ օրիորդ. գրադար.

Մի օր. Բագու-Աղէք. Աբեղեանցին

ԷՍ ԷԼ ԻՄ ՍԱԶԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱՅ ՅՈՒՅԱԿԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱՅ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՒ
ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԸ

ՍՏԱԻՐՕՊՈԼԻՑ.

№

Օրինակ

Լի

1 Մարտիրոս Ղափլանեանց . . .	1	1
2 Բարթողոմէոս քաջ. Բէկգիւլեանց	5	5
3 Մկրտիչ դպ. Տէր Մելքիսեդեկեանց	2	2

ԲԱԳՈՒԻՑ (առանց շահաւոր).

1 Արտեմ Բ. Սափարեանց . . .	1	1
2 Պատուական Տարասեանց . . .	1	1

ՆԱԼՁԻԿԻՑ.

1 ՄԱՅԻՐ ԳԵՐԱՍԻՄ ԱՐԱՐԱՏԵԱՆ	2	2
2 ԲԺԻԶԿ Աղէքս. Աստուածատրեանց	1	1
3 ՅԱԿՈԲ ՌԱՄԱԶԱՆԵԱՆՅ . . .	1	1
4 Յակովբ Օսքանեանց. . . .	1	1

5 Նիկողայոս Գանձապետեանց . . .	1	1
6 Տիկ. Շուշանիկ Ռամազանեանց *) . . .	1	1

ՂԱՐԱՂՈՒՐԹ ԳԻՒՂԻՑ

(ԱՌԱՆՁԻՆ ՆԱՄԱԿՈՎ.)

1 Ստեփաննոս Զիլինկարեանց . . .	1	1
--------------------------------	---	---

ԳԱՆՁԱԿԻՑ.

1 Ս. Թարգմանչաց Վանական դըպրոցի գրադարան	1	1
2 Հոգևոր դպրոց Գանձակուլ *)	1	1
3 Աւետիք Մեսրոպեան Թառումեանց	1	1
4 Զաքարիայ Զէրազեանց	1	1
5 ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ	2	2
6 Մինէլ Վասակեանց	1	1
7 Մարտիրոս Նաբաթեանց	1	1
8 Եփրեմ Թումանեանց	1	1
9 Աղայ Աղայեանց	1	1
10 Աղէք. Իսահակեանց	1	1

*) Նուիրում է Հեղինակ Սիմէոն Վափարեանցը:

*) Նուիրում է Հեղինակը

11 Մկրտիչ Սարգսեան	1	1
12 Արտեմ Մ. Յարութիւնեանց	1	1

ԲԱՏԱԼ ՊԱՇԻՆՍԿՈՒՑ.

1 Նիկողայոս Թէմուրազեանց	1	1
2 Մկրտիչ Օրդուխանեանց	1	1
3 Գաբրիէլ Կարախանեանց	3	3
4 Էմմանուէլ քահ. Ահարոնեանց	1	1
5 Գրիգոր Խաւշանեանց	1	1
6 Վասիլ Թէւդորիդէ	1	1
7 Նիկողայոս Խաւշանեանց	3	3
8 Ստեփան Մարգարեանց	1	1
9 Թադէոս Իւզբաշեանց	1	1
10 Տիրացու Գէորգ Հայկունեանց	1	1

ԳԵՕՐԳԵՒՍԿՈՒՑ

1 ՍԱՐԳԻՍ ԱԻԱԳ ԳԱՀԱՆԱՅ ՏԵՐ ՊՈՂՈՍԵԱՆՑ.	1	1
2 Վարդան Սէֆերեանց	1	1
3 Մակար Ռոստովանով	1	1

ՏՓԻՍԻՑ.

1 Միխայել Բ. Սափարեանց ,	5	5
2 Մարքար Նազարեթեանց	1	1

3	ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԻՄԵՕՆԵԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆՑ		
4	Նոյնը (նուիրում է մէծ պ. «Բաֆֆի-ին» (Մելիք-Յակոբեանց) . . .	1	1
5	Նոյնը (նուիրում է Շամախու գաւառի Մաղբասայ Գիւղի ծխական դըպրոցին) . . .	1	1
6	Նոյնը նուիրում է Մօսկվայի Հայ ուսանողներին . . .	1	1
7	Նոյնը (նուիրում է Երևանու Գալիանեան օրիորդ. դպրոցին ի լիշ. իւր Հանգուց ուսուցիչ Գրիգ. Պապեանցի	1	1
8	Նոյնը (նուիրում է Կ. Պօլսոյ Գալֆայեան որբանոցին) . . .	1	1
9	Նոյնը (նուիրում է Թիֆլիսու օր. գիմնազիայի Հայ օրիորդներին) . . .	1	1
10	Նոյնը (նուիրում է Եջմիած. ձեմ. ուսանող իւր ընկ. պ. պ. Աղ. Ա. Բ. Շ. Ս. Մ. Շ. Լ Ս. Ղ.) . . .	1	1
11	Նոյնը (նուիրում է «Գործի» խմբագիր Պ. Ս. Հախումեանցին . . .	1	1
12	Բոջարեանց Պետրոս (Աշտարակեցի)	2	2
13	Գրիգոր Տէր Մատթէոսեան Գանձակ.	1	1
14	Կոնստանտին Սափարեանց Շուշեցի	1	1
15	Վասիլ Ա. Խալաթեանց Գանձակեցի	1	1

16	Դաւիթ Տէր Պետրոսեանց . . .	1	1
17	Նոյնը (նուիրում է Շուշու չոր. դպ.	1	1
18	Յակոբ Մերումեանց Գանձակեցի . . .	1	1
19	Զումշուտ Մելիք-Հախնազարեանց . . .	1	1
20	Տիկին Ուսանայ Նազարեթեանց	1	1
21	Աւագ Խանդամիրեանց . . .	1	1
22	Արտեմ Զաբարեանց . . .	1	1
23	Առաքել Քալենդարեանց . . .	1	1
24	Յովհաննէս Մաղաթեանց . . .	1	1
25	Աղէքսանդր Խաչատրեան . . .	1	1
26	Թաւատ Եղուբեկեանց . . .	1	1
27	Պողոս Ակոբջանեանց (Խալիֆայ Սալի—օղլու Փաբրիկայի) . . .	1	1
28	Մեսրոպ Մարութեանց . . .	1	1
29	Սարգիս Ա. Մելքիսեոսեկեանց Գանձակեցի: . . .	1	1
30	Աղէքսանդր Գասպարեանց . . .	1	1
31	Ստեփաննոս Թումանեանց . . .	1	1
32	Աղէքսանդր Աւագեան Մելքումեանց (Երկրորդ նորաշենացի) . . .	1	1
33	Խաչատ. Գ. Պողոսեանց Շուշեցի . . .	1	1

ԵԴԵՍԻԱՅ ԳԻՒՂԻՑ

1	Միքայէլ քահանայ Սափարեանց . . .	1	1
2	Գէորգ քահանայ Յարութիւնեանց	1	1

3 ԳՊ. ԿԱՐԱՊԵՏ ՎԼԱՍԵԱՅ . . .	1	1
4 Աստուածատուր Գրիգորեանց . . .	1	1
5 Երեսփոխ Կարապետ Աւագջանեանց	1	1

ՄՕՍԿՎԱՅԻՑ

1 ՅԱՐՈՒԹԻԻՆ ՔԱՀ. ՊՕՊՈՎԵԱՆՑ	1	1
2 Աղէքսանդր Յով. Ֆրանգուլեանց	1	1
3 Գրիգոր. Յով. Մինասեանց . . .	1	1
4 Մաթէոս Զաք. Շամխարեանց . . .	1	1
5 Խաչատուր Ֆաբրիկանթեանց . . .	1	1

ՐՕՍՏՕՎԻՑ*)

1 Յարութիւն Թունիեանց . . .	2	2
2 Շահապազ Յովհաննէսով (Սլաւեանրսկ Խարկ. գուր).	1	1
3 Ազատ Գասպարով (Տազանրոգ)	1	1
4 Համբարձում Առաքելով (Տազանրոգ)	1	1
5 Մուրատ Լալազարեանց (Րօստով)	2	2

* Մենք պատկանելի օրինակները չենք կարող առանձին-առանձին ուղարկելու, վասնորոյ պէտք մասին ներողութիւն ենք խնդրում Մեծ. Յակոբ Մաղաբեանցից:

6 Աւագ Պարսաւտանով (Տազանրոգ)	1	1
7 Յովհաննէս Պուտակով (Րօստով Ստարի-բազար)	1	1
8 Մհի Խաչ. Տ. Մարտ. (Տազանրոգ)	1	1
9 Եղս. Խուզալբերով (Րօստով) . . .	1	1
10 Ստեփան Մհտի. Աւետեան . . .	1	1

ՄԱՅԷԿՕՊԻՑ

1 ՆԻԿՈՂԱՅՈՍ ՅՈՎՍ. ԱԼԻԽԱՆԵԱՆ (Հաշտ. դատաւոր)	1	1
2 Ստեփան Յովս. Ալիխանեանց (Բժիշկ Մայէկօպեան գաւառի) . . .	1	1
3 Ստեփան Բալաս. Դերեանց (առե-նադ. Լաբինսկ. ժող. հաշտ. դ.) . . .	1	1
4 Դաւիթ Ղազարեան Այտինեանց . . .	1	1
5 Գէորգ Շարօշնիկեանց	1	1
6 Մարգար Թէրզիեանց	1	1
7 Խաչատուր Նազարեանց	1	1

ՍՈՒՐԲ.ԽԱՀ ՔԱՂԱՔ

1 Պատուական Մուրատեանց (Լուսանկար.	3	3
2 Արտեմ Գրիգորեան Կուպեցեանց	3	3
3 Ստեփաննոս քաչ. Սերբերակեանց	1	1
4 Նոյնը (նուիրում Բաթումի Եկեղեցական դպրոցին)	1	1

5 Նոյնը (նուիրումէ Տփխիսի ըէա- լական ուս. աշ. գրադար.) . . .	1	1
6 Նոյնը (նուիր. է Դէրբէնտի Ծխ. դպ. . .	1	1
7 Նոյնը (նուիրում է Երեւանու Թեմ. դպրոցին)	1	1
8 Դպիր Խաչ. Տէր-Յակ. Մարգարեանց	1	1
9 Դպիր Յակոբ Կարապետեան Տէր- Մինասեանց	1	1
10 Հայրապետ Ունանեանց	3	3
11 Կարապ. Յովհան. Արղիմանեանց	1	3
12 Կարապետ Պողոսեանց	1	1
13 ՏԻԳ. ՍԻՄԷՅՈՆԵԱՆ ՍԱՓԱՐԵԱՆՅ	1	1
14 Նոյնը (նուիրում է Ղուբայի Ժխական դպրոցին)	1	1
15 Կարապետ Մաղայեանց	1	1
16 Սերգեյ Վ. Տաւարբէգեանց	1	1
17 Յովսէփ քաչ. Մուրդուղեանց	3	3
18 Տիրացու Գրիգոր Մուրդուղեանց	1	1
19 Տիրացու Եգոր Մուրդուղեանց	1	1
20 Եգոր Սերբերակեանց	1	1
21 Կարասիմ Գովխայեանց	3	3
22 Իւան Զախարեանց	1	1
23 Եգոր Արղիմանեանց	1	1
24 Աղինկայ Մադանչիեանց	1	1
25 Աշակերտք եւ աշակերտուհիք Ժխական դպրոցին Հայոց Սուրբ-		

Խաչ Քաղաքի*)	30	30
ՄԱՆԿԼԻՍԻՅ (առանձին նախակաւ)		
1 Հայկ Դադեանց	1	1

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՅ ՆՈՒԷՐՆԵՐ

№№

ՏՓԹԻՍ

Օրինակ

1 «Մեղու Հայաստանի» Խմբագրին . . .	1
2 «Մշակի» Խմբագրին	1
3 «Արձագանքի» Խմբագրին	1
4 Մեծ. Պ. Սպանդար Սպանդարեանցին	1
5 Տփխիսի ըէալական ուս. աշակ. Հայկական գրադարանին	1
6 Մեծ. Պ. Սերգէյ Դանիէլեան Իւզ- բաշեանցին	1
7 Թիֆլիսի Ընկերութեան Հայեր. Գրք. Հրատարակութեան	1
8 Մեծ. Պ. Ադամ Սարդարեանցին	1
9 Ներսէսեան դպրոցին	1
10 Մեծ. Պ. Յարութիւն Նազարեանցին	1
11 «Մեղուի» Ֆէլիէտօնիստ Քաղքցուն	1
12 «Մշակի» Ֆէլիէտօնիստ Աօրացուն	1

* Նուիրում է Հեղինակ Սիմ. Սափարեանցը:

Մ Օ Ձ Դ Օ Կ

- 1 Գարրիէլ քաջ. Տուրփայեանցին . . . 1
- 2 Օրիորդ եկատերինէ Խօջայեանցին . . . 1
- 3 Պ. Արտեմ Կանջու մեանցին . . . 1
- 4 Պ. Մկրտիչ Յովհաննիսեանցին . . . 1
- 5 Տիկին Աննայ Յովհաննիսեանցին . . . 1
- 6 Մօզզօկի ծխական դպրոցին . . . 1

Շ Ո Ւ Շ Ի .

- 1 Դաւիթ-Բէկ Սափարեանցին . . . 1
- 2 Խաչատուր Տովլաթեանցին . . . 1
- 3 Շուշույ թեմական դպրոցին . . . 1
- 4 Տիկին Մայկոյ Բալայեան Տովլաթեանցին . . . 1
- 5 Տիկին ԱՆՈՅՇ ՍԱՓԱՐԵԱՆՑ . . . 1
- 6 Օր. Հռիփսիմէ Սափարեանցին . . . 1
- 7 Մովսէս Սափարեանցին . . . 1
- 8 Սիմէօն քահանայ Տէր Իսրայէլեանցին . . . 1

Ղ Զ Լ Ա Ր .

- 1 Յովհաննէս Քուշուբեղեանցին . . . 1
- 2 Բողդան Կաճկաճեանցին . . . 1
- 3 Յակոբ Իսամալեանցին . . . 1
- 4 Ղզլարու Հոգ. դպրոցին . . . 1

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԻԱՆ

- 1 Տիկին Եղիսաբէթ Պեզճեանին . . . 1
- 2 Մկրտիչ Պեզճեանին . . . 1
- 3 Ռափայէլ Պատկանեանին . . . 1

Պ Օ Լ Ի Ս

- 1 Գրիգոր Նիկողոսեանցին . . . 5
- 2 Հայոց Միացեալ Ընկերութեանն . . . 1
- 3 «Մասիս» Խմբագրին . . . 1

Վ Ա Ն .

- 1 ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՐԾԻԻՆ (Խրմեան Հայրիկ) . . . 5
- 2 Վանայ կեդրոնական վարժարանցին . . . 1

ՄԻ ՆՈՒԱՍՏ ԽՆԴԻՐՔ

(ԱՌ ՎՄՇԱԿԻ, ՅԱՐԳՈՅ ԽՄԲԱԳԻՐՆ).

Որովհետեւ մեզ ճիշտ յայտնի չէ Մեծ. Պ.
Գրիգոր Նիկողոսեանցի Հասցէն, վասնորոյ
խոնարհաբար խնդրում ենք «Մշակի» Յարգոյ
Խմբագրին, որ ազգասիրաբար յանձն առնէր
Պօլիս և Վան ուղարկելի գրքերն Հասացնել
իւ բազմաջան աշխատակցին, որպէս զի նա
ուղարկէր ըստ պատկանելոցն:

Հեղինակ:

ԷՄ ԷԼ ԻՄ ՍԱԶԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ

Յ Ա Ն Կ Ը

Յ Ա Ն Կ

№№

Յառաջաբան	5
1 Ալաշկերտցի գաղթականը ռուսաստանում	29
2 Անկեղծ խոստովանութիւն	138
3 Աննայի յիշատակին	136
4 Անտեղի ցանկութիւն	80
5 Ապօլօնի քընարը իմ ձեռքում	7
6 Աւաղակի վայրահալութիւնը	73
7 Բաղտաւոր գող	96
8 Բանտի բանալին	63
9 Բաց նամակ Մեծ. Պ. Ռ. Պատկանեանին	108
10 Բեռնակիր անասունների մէջ ո՞րի վեճակն է ամենածանրը	90
11 Գարուն	118
12 Գեներալ Իւան Դ. Լազարեանցի տապա- նագիրը	28
13 Դիշերը Վանում	10
14 Դարձ	181
15 Դու է՛լ չըլիս, քո . . . է՛լ	81
16 Երեխայ է	69
17 Ե՞րբ է բարեգործութիւն անում ժլատը	80

18	Երբ է մարդ կորցնում իր անձնիշխանութիւնը	123
19	Երբ է ուրախ մարդը	123
20	Ձէյթունցի կնոջ օրօրը	34
21	Էլի նորան	175
22	Էշի գլուխը և մարմինը	71
23	Էս էլ փորձենք	32
24	Ընտրութիւն	158
25	Թանգագին քաղաք	89
26	Իմ առհաւատչեան	150
27	Իմ բազմերախտ մօրը—Անոյշ Սափա- րեանցին	98
28	Իմ գեղեցիկ վարդի անմոռանալի յիշա- տակին	134
29	Իմ վարդին	157
30	Ինչն է լափում մարդու սիրտը	124
31	Լաւ է ուշը՝ քան թէ երբեք	58
32	Խոստովանութիւն	81
33	Ծերուկ վանեցի	59
34	Ծերունի	132
35	Կարպ Իւանիչ Արզիմանեանցին	148
36	Հայի աղաչանքը առ Եւրօպայ	15
37	Տաճկահային ի՞նչ կրտան	56
38	Հայցուած	147
39	Հարստանալու նոր միջոց	119
40	Հաւատարիմ շուն	93
41	Հին դարման	124
42	Զմերային գիշեր	153
43	Մարդագզգի համար ամենամեծ թշուառութիւնը որն է	124

44	Մարդու համար ի՞նչն է անտանելի	136
45	Մենք այսպէս կասենք	102
46	Մեծ—Մարդին	49
47	Միայն ցաւալին այն է, պարոններ	72
48	Մի խորհուրդ Հայաստանցուն	39
49	Մի կաթիլ թոյն	112
50	Մխիթարական նամակ մեծ. Սերգէյ Խո- ջայեանցին	106
51	Մխիթարիչ պատասխան	95
52	Յայտնի՛ բան է, որ այդ ներելի է	74
53	Յիշում եմ	142
54	Յիշում ես	152
55	Նա	151
56	Նորա ալրոմում	125
57	Նորան	140
58	Նորի՛ց քնենք	20
59	Շունը հաջելով միշտ կը սատակի	64
60	Շուն սպանելու հեշտ միջոց	92
61	Որբի արտասուքը	113
62	Որբի զատիկը	99
63	Ո՛վ է ամենամեծ շուռ մարդը	123
64	Ո՛րն է ամենածանր հիւանդութիւնը	122
65	Ուշտի պօչ	51
66	Չորս երանութիւն	133
67	Պանդուխտ սոխակին	177
68	Պօետին	97
79	Ստեփաննոս Նազարեանցի տապանագիրը	37
70	Վանեցի աղջկաների գանգատը	49
71	Վանեցի որբի երգը	27
72	Վանեցու ամենօրեայ երգը	25

73	Վանեցու բացադրութիւնը	14
74	Վանեցի տէր—տէրի քարոզը	43
75	Վանեցու „հաւատամք“—ը	11
76	Վերջին դարուն	36
77	Վարդիս	179
78	Վերջին խօսքս նորան	126
79	Վով որ մեզ տեսաւ „վախկոտ են“ ըսաւ	23
80	Տաճկահայի աղաչանքը առ Եւրոպա	16
81	Տաճկահային ի՞նչ կտան	52
82	Տաճկահայ մեծ մարդին	46
83	Տեսիլ	56
84	Բողոքական միութարութիւն	146
85	Փուշ	141
86	Օր. Վառ. Ա եանցին (I)	42
87	Օր. Վ. Ա եանցին (II)	143
88	Օր. Վ. Ա եանցին (III)	146
89	Օր. Վ. Արզիմանեանցին (IV)	179

